



LITTLE AQUARIUS

Հասկապված է  
Հայասկանի  
Հանրապետության  
Լուսավորության  
նախարարության  
կողմից

«ՆՈՐ ԴՊԲԸ»  
հրատարակչություն  
ԵՐԵՎԱՆ 1995

Հարուբյունյան Մարգարիտ  
ԸՆԹԵՐՅԱՐԱՆ  
4 - րդ դասարան  
ԵՐ.: «ՆՈՐ ԴՊՐՈՑ» 1995 272 էջ

Սիրելի 4-րդ դասարանցի,  
քեզ եմ մերկայացնում մի ժողովածու, որտեղ դու  
կծանորանաս Զախշախ քազավորին, Քեֆչի Հասանին,  
Անահիտ քազուհուն, Ուլի ձկնիկին... Զարմանալի  
պատմություններ կկարդաս կենդանիների և քոչունների՝  
Թուլսիկի, «Գիտնական» -ի, Զալանկի... մասին, կհանդիպես  
ըստ հասակակիցներին՝ Թոմ Սոյերին, Անդրյին, Օգիին...  
Հուսով եմ, որ զիրքը կօգնի քեզ ավելի լավ ճանաչելու  
Սասունցի Դավիթն:  
Հաջողություն քեզ:

© «ՆՈՐ ԴՊՐՈՑ»  
իրատարակչություն  
1995

ՄԱՐԳԱՐԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԸՆԹԵՐՅԱՐԱՆ

4 - րդ դասարան



## ԶԱԽՉԱԽ ԹԱԳԱՎՈՐԸ

ինում է, չի լինում մի աղքատ ջաղացպան: Մի պատռված քորք հազին, մի ալրոտ փոստալ գլխին՝ ապրելիս է լինում գետի ափին, իր կիսավեր ջաղացում: Ունենում է մի մոխրոտ բաղարջ ու մի կտոր պանիր:

Մի օր գնում է, որ ջաղացի ջուրը բողնի, զալիս է տեսնում պանիրը չկա: Մին էլ գնում է ջուրը կապի, զալիս և տեսնում՝ բաղարջը չկա: Էս ո՞վ կինի, ո՞վ չի լինի: Մտածում է, մտածում ու ջաղացի շնմքում բակարդ է լարում: Առավոտը վեր է կենում, տեսնում՝ մի աղվես է ընկել մեջը:

- Հը՞, զոյ անիծված, դու ես կերել իմ պանիրն ու բաղարջը, հա՞ կաց՝ իհմի ես թեզ պանիր ցոյց տամ: - Ասում է ջաղացպանն ու լինգը վերցնում է, որ աղվեսին սպանի: Աղվեսը աղաշանք-պաղատանք է անում:

- Ինձ մի սպանի, - ասում է, - մի կտոր պանիրն ինչ է, որ դրա համար ինձ սպանում ես: Կենդանի բաց բող, ես թեզ շատ լավորյուն կանեմ:

Ջաղացպանն էլ լսում է, կենդանի բաց է բողնում:

Էս աղվեսը գնում է, եղ երկրի բազավորի աղբանոցում ման է զալիս ման, մի ոսկի և գոնում: Վազ է, տալիս բազավորի մոտ:

- Թագավորն ապրած կենա, ծեր կոտը մի տվեր: Զախչախ բազավորը մի թիշ ոսկի ունի, չափենք ետ կրերենք:

- Զախչախ բազավորն ո՞վ է, - զարմացած հարցնում է բազավորը:

- Դու դեռ չես ճանաչում, - պատասխանում է աղվեսը:

- Զախչախը մի շատ հարուստ բազավոր է, ես էլ նրա վեզիրն եմ: Կոտը տոր, տանենք ոսկին չափենք, հետո կճանաչես: Կոտն առնում է տանում, աղբանոցում գտած ոսկին ամրացնում կոտի ճեղքում, իրիկունք ետ քերում, տալիս:

- Օֆ, - ասում է, - զոռով չափեցինք:

- Միրե ճշմարիտ սրանք կոտով ոսկի են չափել, - մտածում է բազավորը: Կոտը բափ է, տալիս, զրնգալեն մի ոսկի է, վեր ընկնում:

Մյուս օրը աղվեսը ետ զալիս է, բն՝ Զախչախ բազավորը մի թիշ



ակն ու մարգարիտ ունի. ձեր կոտը տվեք, չափենք կրերենք:

Կոտն առնում է տանում: Մի մարգարիտ է գտնում, կոխում է կոտի արանքը, իլ ես իրիկունք ես թերու:

- Օֆ, - ասում է, - մեռանք մինչև չափեցինք:

Թագավորը կոտը բափ է տալի, մարգարիտը դորս է քոչում:

Սնում է զարմացած, թե ես Զախշախ թագավորն ինչքան հարուստ պետք է լինի, որ ոսկին, ակն ու մարգարիտը կոտով է չա-

### փում:

Անց է կենում մի քանի օր: Մի օր ես աղվեսը զախս է թագավորի մոտ խնամախոս, թե՝ Զախշախս թագավորը պետք է ամուսնանա, բու աղջիկն ուզում է:

Թագավորն ուրախանում է, աշխարհեղով մին է լինում:

- Դե զնացեք, - ասում է, - շոտ արեք, հարսանիքի պատրաստություն տեսեք:

Թագավորի պալատում իրար են անցնում, հարսանիքի պատրաստություն են տեսնում, իսկ աղվեսը ջաղացն է վազում:

Վազում է ջաղացպանին աշքալուս տալի, թե՝ հապա թագավորի աղջիկը թեզ համար ուզել եմ: Պատրաստ կա, որ զնանք հարսանիք անենք:

- Վա՞յ, բու տունք քանդվի, այ աղվես. Էհ ի՞նչ ես արել, - ասում է վախեցած ջաղացպանը: - Ես ով, թագավորի աղջիկը ով: Ոչ սապուստ ունեմ, ոչ տուն ու տեղ, ոչ մի ձեռք չոր... Հիմի ես ի՞նչ անեմ...

- Դու մի վախենա, ես ամեն քան կամեմ, - հաճզոտացնում է աղվեսն ու ես վազում թագավորի մոտ:

Վազելով ընկնում է պալատը: - Հայ-հարայ, Զախշախ թագավորը մեծ հանդեսով զախս էր, որ պսակվի: ճամփին քշնամի զորքերը հանկարծ վրա տվին, մարդկանց կոտորեցին, ամեն քան տարան: Ինքը ազատվեց փախավ: Զորում մի ջաղաց կա, եկել է մեջը մտել: Ինձ ուղարկեց, որ զամ իմաց անեմ, շոր տանեմ, զա պսակվի, շուտով զնա իր քշնամիներից վիեժն առնի:

Թագավորն իսկոյն ամեն քան պատրաստում է, տալիս աղվեսին, ինտն էլ շատ ծիավորներ է դնում, որ պատվով ու փառքով իր փեսին պալատ թերեն:

Գալիս են հանդեսով ջաղացի դունք կանգնում: Ջաղացպանի քուրքը հանում, թագավորի շորերը հազցնում, նստեցնում են նժոյգին: Շրջապատված մեծամեծներով, առջևից ծիավորներ, ետևից ծիավորներ - էսպես հանդեսով թերում են թագավորի պալատը: Իր օրումը պալատ չտեսած ջաղացպան. շշկված, թերանք քաց մին չորս կողմն է նայում, մին հազի շորերին է նայում, խշկոտում ու զարմանում:

- Ես ինչո՞ւ չտեսի նման դես ու դեն է նայում, աղվես ախսելը, - հարցնում է թագավորը: - Կարծես տուն չինի տեսած, շոր չինի հազած:

- Զէ, դրանից չի, - պատասխանում է աղվեսը: - Նայում է ու համե-

մատում իր ունեցածի հետ, թե իր ունեցածը որտե՞ղ, ևս որտեղ...

Նստում են ճաշի: Տեսակ-տեսակ կերակորներ են քերում: Զադացանը չի իմանում՝ որին ձեռք տա կամ ինչպես ոտի:

- Ինչո՞ւ չի ոտում, աղվես ախավեր, - հարցնում է քազավորը:  
- Գալու ժամանակ ճամփին որ կողոպտեցին, նրա համար միտք է անում: Չեք կարող երևակայել, տեր քազավոր, թե ինչքան քան տարան և, վերջապես, ի՞նչ անպատվորյուն էր էղ մեր քազավորի համար: Ի՞նչպես հաց ոտի, - պատասխանում է աղվեսը հառաշելով:

- Բան չկա, դարդ մի անի, սիրելի՝ փեսա, աշխարհը է, էղպես էլ կպատահի, լսնորում է քազավորը: - Այժմ հարսանիք է, որախանուր, թեֆ անենք:

Ու թեֆ են անում, ոտում, լսնում, ածում, պար զայի, յորն օր, յոր զիշեր հարսանիք անում: Աղվեսն էլ դառնում է քազոր:

Հարսանիքից հետո քազավորը իր աղջկանը մեծ քաժինք է տալի ու հանդեսով ճամփա դնում Զախչախ քազավորի հետ:

- Կացե՛ք, ես առաջ գնամ տոնն պատրաստեմ, դուք իմ ետևից եկեք, - ասում է քազոր աղվեսը ու վազ տալի:

Վագ-է տալի վազ, տեսնում է մի դաշտում մեծ նախիք է արածում:  
- Ես ո՞ւմ նախիքն է:

Ասում են. - Ծահ-Մարինը:

- Պա, Ծահ-Մարի ամունք էլ շտաք, քազավորը նրա վրա բարկացել է, զորքով իմ ետևից զայիս է. ով նրա ամունք տվալ՝ գլուխը կտրել կտու: Որ հարցնի թե ումն է, ասեք՝ Զախչախ քազավորինը, թե չ' վայն եկել է ձեզ տարել:

Վագ-է տալի վազ, տեսնում է ոչխարի հոտը սարերը բռնել է:  
- Ես ո՞ւմն է:

- Ծահ-Մարինը:

Հովհիկներին էլ նոյնը է պատվիրում:  
Վագ-է տալի վազ, տեսնում է ընդարձակ արտեր, հնձվորները միշին հնձում են:

- Ես ո՞ւմ արտերն են:  
- Ծահ-Մարինը:

Հնձվորներին էլ նոյնը է պատվիրում:  
Վագ-է տալի վազ, տեսնում է անվերջ խոտհարքներ:

- Ես ո՞ւմն են:  
- Ծահ-Մարինը:

Խոտ հարողներին էլ նոյնն է ասում:

Հասնում է Ծահ-Մարի պալատին:

- Ծահ-Մար, ա Ծահ-Մա՛ր, - գոռում է հեռվից վագելով: - Քու տունը չքանդվի, միամիտ նստել ես: Թագավորը թեզ վրա բարկացել է, մեծ զորքով զայիս է, որ թեզ սպանի, տուն ու տեղի քանդի, տակն ու վրա անի, ունեցած-չունեցած էլ քազավորական զրի: Մի անգամ թեզ մոտ մի վատիկ եմ կերել. են աղուհացը դեռ չեմ մոռացել: Վազեցի, եկա, որ թեզ իմացնեմ: Ծուտ արա, գլխիդ ճարը տես, քանի չի եկել:

- Ի՞նչ անեմ, ո՞յր զնամ, - հարցնում է սարսափած Ծահ-Մարը ու տեսնում է, որ ճշմարիտ, հեռվից փոշի բարձրացնելով զայիս է քազավորը:

- Փայիսի՛, շուտով ձի նստի վայսի, էս երկրից կորի, էլ ետ չնայես: Ծահ-Մարը իսկոյն նստում է իր լավ ձին ու վախչում էլ երկրից: Աղվեսի հետևից զայիս են հարսանքավորները: Գայիս են զունով, բնբուկով, երգով, զորքով, իրացան արձակելով ու աղմուկով:

Գայիս են Զախչախ քազավորն ու իր կինը ոսկեզօծ կառիք մեզ, նրանց առջևից ու ետևից անհամար ձիավորներ:

Հասնում են մի դաշտի: Տեսնում են մեծ նախիք է արածում:

- Ես ո՞ւմ նախիքն է, - հարցնում են ձիավորները:  
- Զախչախ քազավորինը, - պատասխանում են նախրապանները:

Անց են կենում: Հասնում են սարերին: Տեսնում են ոչխարի սպիտակ հոտը սարերը բռնել է:

- Ես ո՞ւմն է, - հարցնում են ձիավորները:  
- Զախչախ քազավորինը, - պատասխանում են հովիվները:  
Անց են կենում: Հասնում են ընդարձակ արտերի:

- Ես ո՞ւմ արտերն են:  
- Զախչախ քազավորինը:  
Հասնում են խոտհարքներին:

- Ես ո՞ւմն են:  
- Զախչախ քազավորինը:  
Անձնը մնացել են զարմացած, Զախչախ քազավորն ինքն էլ քիչ է մնում խելքը բռնի:

Էսպեսով աղվեսի ետևից զայիս են, հասնում Ծահ-Մարի պալատներին:

Քազոր աղվեսն էնտեղ արդեն տեր է դառել, կարգադրություններ

է. անում: Ընդունում է խնամիներին ու նորից սկսում են քեֆը: Յորն օր, յորն զիշեր էլ ևստեղ են քեֆ անում, ու խնամիները վերադառնում են իրենց տեղը: Զախշախ բազավորը, իր կինն ու բավոր աղվեսը ապրում են Շահ-Մարի պալատներում:

Իսկ բազավորից վախեցած Շահ-Մարը մինչև էսօր էլ դեռ գնում է:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բացատրի՞ր հետեւյալ բառերն ու արտահայտությունները, փոստայ, ջրադացի ջուրը բողնել, գոռով, իրար անցնել, տոմ ու տեղ, մեծ համեստվ զայ, մեծանձ, տակն ու վրա անձ, աղորիացը չմոռանայ, իրացան արծակել, խոտիար:
2. Հերիարը մասերի բաժանիր և այդ մասերը վերնագրի՞ր:
3. Հերիարը համառոտ պատմի՞ր:
4. Հերիարի հերոսներին բվարկի՞ր:
5. Նկարագրի՞ր ջրադացանին:
6. Ջրադացանը ինչո՞ւ բաց բողեց աղվեսին:
7. Փորձի՞ր շարունակել հերիարը:
8. Հնձվորներից մնելը, տուն գալով, ինչպե՞ս կպատճի կնոջը պատահածի մասին:
9. Հորինիր նոր հերիար, բայց ոչ թե «Զախշախ», այլ «Զաղադ բազավոր» վերնագրով:
10. Գրի՞ր՝ ինչպե՞ս կնկարագրիս «Զախշախ բազավոր» գրքի կազմը:

## ԱՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

### ՓԻԼՈՍ

Պողացու մեկն ունենում է մի հիմար տղա՝ անունը Փիլոս: Մի օր, հանդից վերադառնախս, սա մի ասեղ է գտնում ճանապարհին, զցում է սայլի մեջ, որ թերի տուն: Ու, տուն հասնելով, մորն ուրախացնում է, թե թեզ համար ասեղ եմ թերել: Բայց որպան փետրում է՝ ասեղը չի գտնում սայլի մեջ:

Այդ ժամանակ մայրը հանդիմանում է նրան.

- Հիմա՞ր, - ասում է, - գտած ասեղը շորի կուրծքը կամ թեզը կիրան, ոչ թե սայլի մեջ կցցեն:

- Լավ, մյուս անգամ էղպես կանեմ, - ասում է Փիլոսը:

Մյուս անգամ մի կատվի ձագ է գտնում. աշխատում է կրծքին ամրացնել ու դրա համար այնքան է չարչարում կատվին - խեղճը սատկում է:

Գալիս է մորը պատմում: Մայրն ասում է,

- Հիմա՞ր, կատվին «փիսի-փիսի» կանեն, ոչ թե էղպես...

- Լավ, մյուս անգամ էղպես կանեմ:

Մի քանի օր հետո նապաստակ է պատահում: Փիլոսը սիրով «փիսի-փիսի» է կանչում: Եվ քանի նա կանչում է, նապաստակը հեռու է փախչում:

Գալիս է մորը պատմում, թե ինչպես էր նապաստակը փախել:

- Այ-այ-այ, այ-այ, - ասում է մայրը, - նապաստակին փայտով ու հրացանով կիսվեն, ոչ թե «փիսի-փիսի» կանեն:

- Եկող անգամ էղպես էլ կանեմ, մայրիկ:

Եկող անգամ լաց լինելով գալիս է տուն:

- Ի՞նչ է պատահել, - հարցնում է մայրը:


- Գնացի լաշտ, մի հորը պատահեց, փայտով խփեցի, ոտը կոտրվեց, հնձվորները բռնեցին-ծեծեցին ինձ:

- Այ-այ-այ, - ասում է մայրը: - Հորրին փայտով չեն խփի, իսկ մարդի, հնձվորի պատահելիս՝ «բարի աջողություն» կասեն:

- Լավ, մայրիկ, մյուս անգամ էղպես կանեմ:

Մյուս անգամ հանդիպում է մի մեծ խումբ մարդկանց, որ մեռել էին տանում բաղելու:

- Բարի աջողություն մ, բարի աջողություն, - գոյում է Փիլոսը:



Մարդիկ բռնում են դրան՝ մի լավ ծեծում, և նա լալով զայիս է ելի  
մորք պատմում գլխով անցածք:

- «Վա՛յ, տղա, - ասում է մայրը, - մեռելի պատահելիս՝ կտխրեն, լաց  
կլինեն, կասեն «աստուծով միսիրարվեք»:
- Լավ, էկող անգամ էղաս կանեմ, - խոստանում է Փիլոսը:

Ո՞յ քանի ժամանակ իեսո, զյուղով անցնելիս, տեսնում է հարսա-  
ւիր, բակում մարդիկ, կանայք պարուժ են, որպաշտանում:

Փիլոսը մոտենում է, որպաշտության ու պարի տար ժամանակը՝  
զլսարկը վերցնում է ու բարձրածայն լաց լինում.

- Աստուծով միսիրարվեք, - ասում է, - աստուծով միսիրարվեք...

Մարդիկ բռնում են դրան, մի լավ ծեծում ու հարսանիքից դորս ա-  
նում: Ծանապարհին պատահում է մի տերտերի. կարծում է՝ դա ել  
է իրեն ծեծելու, «հայույ» է անում, որ փախցնի:

Բայց տերտերը մոտենում, զավազանով խփում է դրան և ճանա-  
պարից շարունակում:

Իսկ Փիլոսը զայիս է տուն ու բռնը լալով պատմում մորք.

- Վա՛յ, Փիլոս, վա՛յ, - ասում է մայրը: - Տերտեր տեսնելիս՝ զլսարկը  
կվերցնեն, կշրեն և կասեն. «Օրինի, տեր հայր»:

- Մյուս անգամ, մայրիկ, էղաս կանեմ:

Եվ շատ չի անցնում, մի օր Փիլոսը զնում է անտառ: Ծառ է զնում  
անտառում, թիչ է զնում, մեկ էլ պատահում է մի արջի:

Փիլոս, դու Փիլուս...

Արջին տեսնում է թե չ' ծունկ է չորում ու ասում.

- Օրինի, տեր հայր, օրինի...

Արջը բարերով խփում է դրան, զցում գետին ու վրան նասում:

Փիլոսը վախսից լուս է ու շունչը քաշում իրեն:

Արջը տեսնում է էլ ծայն-շունչ չկա՝ բռնում է հեռանում:

Իսկ Փիլոսը վեր է կենում ու մինչև տուն վազելը մեկ է անում:

Ու այդ օրվանից, ասում են, Փիլոսը խելորպացել է, էլ հիմարու-  
յուններ չի անում:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հետեւյալ բառերն ու արտահայտուրյունները փոխարինիք իմաստով մոտ այլ բառերով կամ արտահայտուրյուններով.

զյուղացու մեկը, զիստվածք, պարի տար ժամանակը, «հայույց» անել, շոնչը իրնն բաշել, վագելը մեկ անն, հանդ, հանդիմանել, զավագամ:

2. Համառոտ պատմիք հերթարք:

3. Հերիարք բաժանիք փոքրիկ մասերի և վերնագրիք յուրաքանչյուր մասը:

4. Ի՞նչ դեպքեր կարող ես հանել, որ հիմնական բովանդակությունը պահպանվի:

5. Համոզո՞ւմ է քեզ հերթարքի ավարտը: Ինչո՞ւ:

6. Հորինիք նոր վերնագիր այս հերթարքի համար և պատճառապահիք:

7. «Առածանի» բաժնից դուրս գրիք հերթարքին համապատասխան առածներ:

8. Խորհուրդ տուր Փիլոսին:

## ՀՈՎԱՆՆԵՍԹՈՒՍԱՆՅԱՆ

### ԵԵՖ ԱՆՈՂԻՆ ԵԵՖ ՉԻ ՊԱԿԱՒԼ

#### Ա

ամանակով Բադրադ քաղաքում նստում էր Հարուն Ալ Ռաշիդ թագավորը: Հարուն Ալ Ռաշիդ թագավորը սովորություն ուներ՝ շորերը փոխած մաս էր զալիս իմանալու, քեզ ինչ է կատարվում իր մայրաքաղաքում: Մի զիշեր էլ էսպես, դերվիշի շոր մտած, անցնելիս է լինում մի խոլ փողոցով: Մի առքատ տնակից երգի ու նվազածուրյան ձայներ է լսում: Կանգ է առնում, միտք է անում միտք, հետաքրքրվում է ու ներս է մտնում: Ներս է մտնում տեսնում՝ դատարկ ու մերկ մի տնակ, կրակի դեմք փոած կարպետի վրա նստուած տան տերն ու երաժիշտները: Առքատ ընթրիքի շորջը բոլորած նվազում են, երգում ու զվարճանում:

- Խաղաղուրյուն ձեզ, ո՞վ որախ մարդիկ, - ողջունում է դերվիշն ու խոնարհուրյուն է անում տան տիրոջը:

- Բարով եկար, դերվիշ բարա, համեցեք, միասին ուտենք աստծու տված մի կտոր հացն ու միասին ուրախանանք, - խոնդրում է տան տերը: Դերվիշին էլ նստեցնում են իրենց հետ ու շարունակում են քեֆը:

Գիշերվա մի ժամին տան տերը երաժիշտներին վճարում է իրենց հասանելիքն ու ճամփու դնում: Երբ երաժիշտները հեռանում են, դերվիշը տան տիրոջը հարցնում է:

- Անուն ի՞նչ է, բարեկամ:

- Հասան:

- Ամոր շինի հարցնելը, Հասան ախալեք, ի՞նչ արիեստի տեր ես դու, ի՞նչքան փող ես աշխատում, որ էսպես քեֆով ես անցկացնում քր ժամանակը:

- Քեֆը շատ փողով չի լինում, դերվիշ բարա, - պատասխանում է տան տերը: Ամենաշնչին ապրուստն էլ կարող է մարդ որախ վայելնել: Ես մի փինաշի եմ, չուստեր եմ կարկատում, օրը մի չնչին բան եմ վաստակում: Երեկոները երբում եմ մի ճանք ապրուստի եմ տախիս, մյուս մասն էլ էս երաժիշտներին, որ տեսար: Նստում ենք, ու-

բախանում: Թե քեզ նման մի ազնիվ հյուր էլ աստված հասցնում է՝ ավելի լավ:

- Անպակաս լինի քո ուրախուրյունը, ո՞վ Հասան, բայց երե հանկարծ աշխատանքին էղ բարակ աղբյուրն էլ կտրի՝ ի՞նչ պիտի անես:

- Ինչո՞ւ է կտրում, դերվիշ բարա:

- Օրինակ, բազավոր է ու բազավորի քմահաճույք. հանկարծ հրաման արավ, որ էլ փինաշուրյունը չպիտի լինի:

- Ե՞հ, բազավորի դարդը կտրե՞լ է ընկնի փինաշիների ետևից... կամ ի՞նչ են արել նրան փինաշիները: Երբ Էղանս բան կապտահի, էն ժամանակ կմտածենք. այժմ քննենք, դերվիշ բարա: Աստված ողբրմած է. քեֆ անողին քեֆ չի պակսիլ: Աշխարհի բան է՝ ինչպես բռնե՞ւ էնպես էլ կերրա:

- Լավ, աստված տա, որ Էղանս լինի, - բարեմաղրում է դերվիշը, ու քնում են:

## ¶

Առավոտը վաղ դերվիշը գնում է: Նրա գնալոց հետո մունետիկները լցվում են Բաղդադի փողոցներն ու հրապարակները, զոռալով հայտարարում, թե բազավորի հրամանն է, փինաշիների խանութերը փակ պիտի մնան. Էսօրվանից էլ ոչ որ իրավունք չունի էղ արհեստով պարապելու: Զանցառուների զրոյիսները կրոշեն:

Խեղճ Հասանի ձեռքից էլ բիզը խորս են, զգակորին տալով դուրս անում իր նեղիկ խանութից ու դուռը փակում:

Մյուս զիշերը, դարձյալ դերվիշի շոր մտած, Հարուն Ալ Ռաշիդ բազավորը գնում է քաղաք շրջելու: Դարձյալ անցնում է էն փողոցվ, ուր ապրում էր ուրախ Հասանը: Դարձյալ երգի ու երաժշտության ձայներ է լսում նրա տանից: Ներս է մտնում:

- Օ՛, բարով, բարով, դերվիշ բարա. համեցեք, նստիր քո տեղը:

Նստում են, ուտում, խմում, ածում, երգում, ուրախանում մինչև կեսզիշեր:

Կեսզիշերին երաժիշտներն իրենց վարձն առնում են հեռանում: Մնում են տան տերն ու հյուրը:

- Գիտե՞ս ինչ պատահեց, դերվիշ բարա:

- Ի՞նչ պատահեց:

- Հենց էն, ինչ որ դու գուշակեցիր երեկ իրիկուն: Էսօր բազավորը

հրաման հանեց - մեր արհեստն արգելեց...

- Ի՞նչ ես ասում, - զարմանում է հյուրը: - Հապա ո՞րտեղից փող գտար, որ էս զիշեր էլ քեֆ սարքեցիր:

- Մի կավե կուժ նմ գտել, իիմի էլ ջուր եմ ծախում: Օրական ինչ աշխատում եմ՝ մի մասը տախս եմ ապրուտի, մյուսը՝ երաժիշտներին ու դարձյալ քեֆ եմ անում:

- Խսկ երե բազավորը ջուր ծախելն էլ արգելի՛ էն ժամանակ ի՞նչ ես անելու:

- Չոր ծախելով բազավորին ի՞նչ վնաս ենք տախի, որ արգելի: Եվ ինչո՞ւ Էսօրվանից դարդ անեմ դրա համար: Երբ որ կարգելի, էն ժամանակ կմտածեն: Մի՛ վախենար, բարեկամ, երբեք չի պակսիլ մի կտոր հաց ու մի անկյուն, որ էս էնտեղ ուրախանամ:

- Անպակաս լինի ուրախուրյունը քո օջախից, ով Հասան, - բարեմաղրում է դերվիշն ու հեռանում:

## ¶

Առավոտը վաղ ամրող Բաղդադը բնողում է մունետիկների ձենից, թե Հարուն Ալ Ռաշիդ բազավորն էսպես է իրամայում. ջուրը աստծուն է, և Էսօրվանից ոչ որ իրավունք չունի փողով ծախելու: Պատուել բոլոր ջրկիրների տիկլերն ու ջարդել նրանց կմերը:

Աղքատ Հասանի կուժն էլ ջարդում են ջրի ճամփին ու դատարկ ետ դրկում:

Մյուս զիշեր բազավորը կրկին դերվիշի շոր է հազնում ու գնում քաղաք շրջելու: Կրկին մոտենում է ուրախ Հասանի տանը: Դարձյալ ուրախուրյան և երգի ձայները: Ներս է մտնում:

- Ա՛, դերվիշ բարա՛, համեցե՞ք, նստիր քո տեղը, քեֆ անենք, ցերեկը երկարացնենք, զիշերը կարճացնենք: Ուրախանը, դերվիշ բարա, ավելի լավ է ուրախանալ, բան տրտմել:

- Ի հարկե, ուրախուրյունը ավելի լավ է: Ամենք էլ մնունելու ենք, ով կարող է բոլ ուրախանա, - բացականչում է դերվիշն ու նստում Հասանի կողրին:

Գիշերվա մի ժամին երգիշներն իրենց վարձն առնում են ու հեռանում: Մնում են դերվիշն ու տան տերը:

- Հասան ախսպեր, Էսօր ի՞նչ լսեցի. ասում են բազավորը արգելել ջուր ծախելը, ճշմարի՞տ է արդյոք:



- Ինչպե՞ս չէ, ինչպե՞ս չէ, ամենքիս ջրի ամաններն ել ոչնչացրին: Այսպէ՞ր, դու կատարյալ մարգարե ես եղել. ինչ ասում ես՝ մյուս օրը կատարվում է:

- Հապա ինչպե՞ս է, որ դու դարձյալ քեֆ ես անում: Որտեղի՞ց ես գտել ես փողը:

- Երանի թե մարդու պակասը փողը լինի: Փողի գտնելը հեշտ է, դերվիշ բարա: Գնացի մի գործատիրոջ մշակ մտա. օրական մի բան է տախս. քերում եմ մի մասը ապրուստիս եմ անում, մյուսը երաժշտներին եմ տախս ու շարունակում եմ իմ քեֆը: Բանը մարդու սիրտն է, դերվիշ բարա:

- Ես իմ հոգին, արծե, որ էլ սրտով բազավորի պալատական լինեիր դու, - բացականչեց դերվիշը:

- Վահ, դերվիշ, քո ասածները կատարվում են ճշտորյամբ, իիմի

որ ես խոսքդ ել կատարվի՞:

- Ինչո՞ւ չի կատարվի, աշխարհում անկարելի բան չկա, - պատասխանեց դերվիշն ու բաժանվեցին:

## Պ.

Առավոտը վաղ տերության պաշտոնյաները կտրեցին Հասանի աղքատ տնակի դուռը:

- Էստե՞՞ղ է կենում քեֆ սիրող Հասանը:

- Ես եմ, - պատասխանեց զարմացած Հասանը:

- Թագավորի հրամանով հետևիր մեզ:

Ուղիղ պալատը տարան Հասանին: Հայտնեցին, որ բազավորը իրեն պալատականի պաշտոն է տվել: Պալատականի զգևստ հազգրին, մի բուր կապեցին մեջքը ու կանգնեցրին պալատի մուտքերից մեկի առջև: Ամբողջ օրը ին մուտքի առջև պարապ կանգնեց Հասանը: Իրիկունը որ մքնեց, դատարկ ճամփու դրին տուն, թե՛ զնա, առավոտը ետ կզաս քո տեղը կանգնելու:

Գիշերը դարձյալ դերվիշի շոր մտավ Հարուն Ալ Ռաշիդ բազավորն ու զնաց քաղաքը շրջելու:

Գնաց մոտեցաց Հասանի տանը: Ականջ դրեց: Զարմանքով լսեց, որ դարձյալ հնչում են երգն ու երաժշտորյունը: Հասանը քեֆ է անում դարձյալ: Ներս մտավ:

- Դերվիշ, դերվիշ, քո տունը չքանդվի, արի է. երեկով խոսքդ ել կատարվեց, բազավորն ինձ պալատում պաշտոն է տվել:

- Ի՞նչ ես ասում:

- Աստված վկա:

- Երեկի շատ փող է տվել...

- Չէ՛, ինչ փող. մի գրոշ չտվին: Դատարկ տուն դրկեցին:

- Հապա որտեղի՞ց ես փող գտել, որ դարձյալ քեֆ ես անում:

- Նստի՛ր, ասեմ որտեղից: Մի բուր են կապել մեջքը: Իրիկունը տուն զալիս մտածեցի, թե՛ ին ես մարդ չեմ սպանելու: Տարա պող-պատիշեղը (մեջը) ծախտեցի, պողպատի փոխարեն փայտն շինել տվի, մեջը դրի եկա տուն: Եկա պողպատի փողով քեֆ սարքեցի: Լավ եմ արել, չէ՞ դերվիշ. ավելի լավ է. ուրախություն ունենալ քան մարդ սպանելու սուր:

- Հա՛, հա՛, հա՛, - ծիծաղեց դերվիշը: - Լավ անելը՝ լավ ես արել, Հա-

սան, բայց երե եգուց քեզ բազավորը հրամայի, թե՝ կտրի էս հանցավորի գլուխը՝ ի՞նչ ես անելու:

- Քերանի բարի բաց արա, ա՛յ, չարագուշակ դերվիշ, - բարկացավ Հասանը: Հակառակի նման ինչ էլ ասում ես, կատարվում է. չե՞ս կարող մի լավ բան ասել...

Ու շատ վշտացավ Հասանը: Միրտը երկյուղ ընկավ, ամրող գիշերը չկարողացավ քնի:

Իրավ որ, մյուս օրը բազավորը կանչեց Հասանին ու ամրող արքունիքի առջև հանդիսավոր հրամայեց, որ մի հանցավորի գլուխը կտրի:

- Հանի բուրդ ու կտրի էս հանցավորի գլուխը:

- Ապրած կենաս, մեծ բազավոր, - պատասխանեց սարսափած Հասանը, - ես իմ օրում մարդու գլուխ չեմ կտրել, չեմ կարող: Փորձված մարդիկ շատ կան քո պալատում. հրամայիր մի ուրիշը կտրի...

- Ես քեզ եմ հրամայում, - սաստեց բազավորը, - երե մի վայրկյան ել ուշացրիր, գլուխ կրոչի: Հանի՛ր բուրդ...

Էն խոսրի հետ քշվառ Հասանը մոտեցավ հանցավորին, ձեռքերը տարածեց ու աղաղակեց դեպի երկինք.

- Տեր աստված, արդարն ու մեղավորը դու զիտես: Երե էս մարդը մեղավոր է, ինձ ուժ տուր, որ մի զարկով բոցնեմ սրա գլուխը, իսկ երե արդար է, բող փայտ դառնա իմ բուրդ...

Ասավ, դուրս քաշեց բուրդ... Փա՛յտ: Հրաշքի վրա պալատականները մնացին ապշած: Էստեղ Հարուն Ալ Ռաշիդ բազավորը փառփառ ծիծաղեց ու ամեն բաց արավ, պատմեց իր պալատականների առջև: Շատ ծիծաղեցին պալատականները ու շատ գովեցին թե՝ ուրախուրյուն սիրող Հասանին, թե՝ բազավորին: Ծիծաղեց մինչև անգամ էն դժբախտ հանցավորը, որ չորած, վիզը մեկնած սպասում էր ըրի զարկին: Թազավորը բաշխեց հանցավորին իր կյանքը, իսկ Հասանին դառնալով՝ հոչակեց նրան իր սիրելի մարդը ամբողջ տերության մեջ ու լավ պաշտոն տվեց, որ միշտ աշխատի ու անպակաս, ուրախ ապրի, ուրիշներին ել սովորեցնի ուրախ ապրել աշխարհում:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՁՆԵՐ

1. Հետեւյալ բառերն ու արտահայտությունները փոխարինի՛ր նման իմաստ ունեցող այլ բառերով կամ արտահայտություններով:

դերվիշի շոր մտած, ածել, բարեմադրել, չարագուշակ, սիրար երկյուղ բնկնել, չճշին, ապրուստ, խոլ փողոց, ճամփա դնել, դատարկ ու մերկ տնակ, բնրրիքի շորջը բոլորած:

2. Ի՞նչ արտահայտություններ է գործածել հեղինակը արեւակա, բարին ձեզ հետ, ուրախ մարդիկ, ներս եկեք, մեզ հետ կիսեք աստծո տված մի կտոր հացը, միշտ ուրախ եղիր, տունդ շինվի, ուղ լինս, տեր բազավոր արտահայտությունների փոխարեն:

3. Ըստ հետեւյալ վեց նազերի համառոտ պատմի՛ր:

ա) Փինաչի Հասանը

բ) Չրափածառ Հասանը

ց) Հասանը պալատում

դ) Անրջին փորձություն:

4. Պատմի՛ր Հասանի վերջին փորձության մասին:

5. Ինչպես ես հասկանում հետեւյալ արտահայտությունները՝

ա) աշխարհիք բան է, ինչպես բռնես, ինպես էլ կերրա:

բ) Կրամի մարդու պակասը փողը լինի:

6. Շնորհագրի բազավորին:

7. Շնորհագրի բազանին՝ ասածներդ հաստատելով հերիարի համապատասխան հատվածներով:

8. Նկարագրի Հասանի տնակը՝ օգտվելով հերիարի համապատասխան հատվածներից:

9. Բացատրի հերիարի վերնագիրը:

10. Հորինի՛ր նոր վերնագիր այս հերիարի համար եւ պատճառարանի՛ր:

Ամեն, ամեն ինչ ուկեզօծվել է,  
Ուկի են բվում տերև ու ճյուղ,  
Ուր որ նայում ես, դեղին բոցեր են,  
Դեղին իրդեհ է և դեղին ծովս:

Ջրվեժը, առուն, ծառը, ծտերը  
Աշնան քամուն են ծափահարում:  
Քամին է այս ծով գանձերի տերը,  
Այս ուկու տերը՝ մեծահարուստ:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ. ԱՌԱՋԱՊՐՄԱՆԸՆԵՐ

- Ինչպե՞ս ես հասկանում հետեւյալ պատկերը.  
Ջրվեժը, առուն, ծառը, ծտերը Աշնան քամուն են ծափահարում:
- Ո՞ր պատկերն է քեզ ավելի շատ դուր գալիս: Ինչո՞ւ:
- Ինչո՞վ է աշրի ընկնում քանաստեղծությունը զույնո՞վ, ձայնո՞վ, քեզ շարժումով: Դուրս գրիր այն տողերը որտեղ «գորին» կա:
- Կարո՞ղ ես արծակ վերապատմել քանաստեղծությունը: Եթե ոչ՝ ինչո՞ւ:

## ՆՈՒԿԻՄ ԶԱՂԱՅԻ ԽԵԼՈՁՆԵՐԸ

**Ճ**ամանակով մի քաղաք է եղել Նուկիմ անունով: Անունը կա, քայլ տեղը մինչև հիմա հայտնի չէ: Այդ քաղաքը շատ ցուրտ է, եղել՝ երկու ձմեռ, մի ամառ: Մի օր ժողովորդը հարահրոցով հավաքվում, ափ է առնում քաղաքի առաջավոր մարդկանց դոները.

- Էս քաղաքում էլ ապրել չի լինի, սառանք, ախագե՛ր, սառանք: Ելեք պատգամ գնացեք քազավորի մոտ. գնացեք, քազավորին ասեք, թե որ երկու ամառ, մեկ ձմեռ չանի՝ մենք էս քաղաքում էլ մնացողը չենք:

- Ժողովրդի կամքը սուրբ է, - ասում են առաջնորդները, որ քաղաքի խելոքներն են լինում. խորիրդի են նստում և որոշում են քազավորի մոտ գնալ խնդրելու և քազավորի ամրությ շամելու համար էլ մի քակ ուկի նվեր են տանում ժողովրդի կողմից: Շինում են մի երկար նիզակ, նիզակի ծայրից կախում են քակը և՝ «քազավոր, որտե՞ղ ես, զալիս ենք քեզ մոտ», ասում են քաղաքի առաջավորներն ու ճամփա ընկնում: Մի ավանի միջով անցնելիս տեսնում են խանուրպանի մեկը կրակի կարմիր բոցի պես մի քան է ծախում: Դրա տեսքը շատ է իրապուրում Նուկիմ քաղաքի պատգամավորներին:

- Էն ի՞նչ ես ճախում, ախագեր, - հարցնում են նրանք:

- Տարեղեղ, - պատասխանում է խանուրպանը:

Առաջին անգամն են տեսնում տարեղեղը, առաջին անգամն են լսում տարեղի անունը:

- Ուտելու քա՞ն է, - հաիցնում են նրան:

- Ուտելու քան է, քա ո՞նց, - պատասխանում է խանուրպանը:

- Որ եղանակ է, մի կշեռք է ասածից տուր:

Ավագ պատգամավորը տարեղեղից մի հատ կծում է, քերանք մրմում է, աշերը արցունքություն են, նետում է մյուսին, սա էլ մի կտոր կծում է, նետում է մյուսին: Էսպես մինչև վերջին պատգամավորը: Քերանները մրմռալով, աշերը արցունքութելով, խանուրպա-



Հին հայիոյելով շարունակում են ճանապարհը:

Սի որիշ ավանով անցնելիս, տեսնում են խանութանի առաջ սալաների վրա դարսված... չեն իմանում ինչ:

- Եղ ի՞նչ ես ծախում, ալսպեր:
- Խաղող:

Առաջին անգամն են տեսնում խաղողը, առաջին անգամն են լսում խաղողի անունը:

- Ուտելու քա՞ն է,- հարցնում են նրան:
- Են էլ ո՞նց,- պատասխանում է խանութանը:
- Դև մի կշեռ տուր:

Վճարում են, առնում ուտում, համը բերաններն է մնում: Շրբները լիզելով, խանութանին օրինելով, շարունակում են ճանապարհը:

Սի որիշ ավանով անցնելիս տեսնում են խանութանի մոտ կտոր-կտոր ճերմակ քաներ:

- Եղ ի՞նչ ես ծախում:
- Շաքար:
- Շաքար... Ո՛չ տեսել էին, ո՛չ լսել:
- Ուտելու քա՞ն է,- հարցնում են նրան:
- Են էլ ո՞նց:
- Դև, մի կշեռ տուր:

Վճարում են, առնում, կոր-կոր ուտում, համը բերաններն է մնում: Գնում են, գնում, զիշերը վրա է հասնում, նիզակը տնկում են զետնի մեջ, իրենք էլ պարկում են նրա շորջը, միամիտ քնում: Գոյզ ինչպես կարող է բարձրանալ վերև, նիզակի ծայրից կախված քակը առնելի, խկի խելքի մոտ քա՞ն է:

Հակառակի պես, զիշերը մի ճամփորդ է անցնում ել տեղերով, տեսնում է մի տնկած ծողի շորջը մարդիկ անուշ քնել են: Վեր է նայում՝ ծողի ծայրից քան է կախված: Վար է բերում ծողը, քա անում քակը՝ մեջը դեղին ոսկի: Ոսկին լցնում է իր խորդիչին մեջ, փոխարենը քակի մեջ լցնում է խիճ ու ավագ, ծողը նորից կանգնեցնում:

Սուպոտը Նուկիմ քաղաքի խելքները շարունակում են իրենց ուղին: Հարցնելով, հարցնելով հասնում են քազավորանիստ քաղաքը: Մայրաքաղաքի դռան մոտ նստում են, ծախսերի հաշիվ են տեսնում, որ գումարը իրար մեջ արդար քամանեն:

Ավագ պատգամավորն ասում է.

- Են կարմիր քանը, որ ես կերա, քեզ զցեցի, դու կերար, մեկէլին զցեցիր՝ մեկ արծար. Են քանը, որ աստված շինել էր, մենք քանինցինք՝ մեկ արծար. Են քանը, որ քանց ծյուն ճերմակ էր, քանց մոր կար անուշ՝ երկու արծար:

Հաշիվը տեսնելուց հետո գնում են քազավորի պալատի դռանը կանգնում: Դռնապանը իմաց է տալիս պալատականներին, պալատականներն էլ իմաց են տալիս քազավորին, քե Նուկիմ քաղաքից պատգամավոր են եկել: Թագավորը հրամայում է ներս կանչել նրանց:

Պատգամավորները գլուխ են տալիս քազավորին և քարե բռնած կանգնում են առաջը:

Ավագ պատգամավորը քսակը մոտեցնում է քազավորին և ասում է.

- Թագավորն ապրած կենա, մենք Նուկիմ քաղաքի ժողովրդի կողմից ենք եկել խորհրդանութ, եղ մի քսակ ոսկին էլ քեզ նվեր ենք քերել ժողովրդի կողմից: Մեր քաղաքը շատ ցուրտ քաղաք է՝ երկու ծմեռ, մեկ ամառ: Մեն որ երկու ամառ, մեկ ծմեռ չամես, էլ մեր քաղաքում մենք մնացողը չենք, լավ իմացած լինես:

Մյուս պատգամավորները գլխով հաստատում են նրա ասածը:

Թագավորի գանձապահը, որ վերցրել էր քսակը, քազավորի ականջին փսխում է, քե ոսկու տեղ խիճ ու ավագ է:

Թագավորը մտածում է՝ սրանք նպատակո՞վ են ոսկու տեղ խիճ ու

ավագ բերել, թէ՝ միամիտ սրտով: Փորձելու համար հրամայում է նրանց առաջ մի սինի սև սալր դնեն, խառը սև բոլոճների հետ:

Պատզամավորները վրա են պրծնում. ավագ պատզամավորը ասում է.

- Տղե՛ք, առաջ ոստավորը ուտենք՝ չփախչեն, անոտը մեր ծառան է: Թագավորը տեսնում է նրանց խելքի չափը և դառնալով նրանց, ասում է.

- Գացեր ձեր տները, մինչև տեղ հասնեք՝ մեկ էլ ամառը եկած կի-  
նի:

- Թախտիդ հաստատ մնաս,- ասում են պատզամավորները և ու-  
րախ-զվարք դառնում են իրենց քաղաքը:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՁԵՐ

1. Բացատրի՞ր հետեւյալ արտահայտությունները.

ափ առնել, պատզամ զնալ, մի կշեռ, իմաց տայ, հաշիվը տես-  
մել, խելքի մոտ բամ, գրուս տապ մեկիմ եւ բարեւ բռնած կանգնել,  
վրա պրծնել, խելքի չափը տեսմել:

2. Հերիաքը բաժանի՞ր մասերի եւ վերնագրի՞ր յուրաքանչյուր  
մասը:

3. Համառոտ պատմի՞ր նուկիմցիների ուղեւորության մասին:

4. Թագավորի զանձապահի անոնից պատմի՞ր բազավորի  
պալատում պատզամավորների ընդունելության մասին:

5. Գտի՞ր այն հատվածները, որտեղ երեւում է նուկիմցիների  
«խելք» լինելը:

6. Կարդա՛ այն հատվածը, որտեղ հանելուկներով են խոսում,  
զուշակի՞ր այդ հանելուկները:

7. Հորինի՞ր նմանատիպ հանելուկներ:

8. Կարդա՛ հերիաքի առաջին պարբերությունը: Քո կարծիքով,  
ինչո՞ւ հայտնի չէ այդ քաղաքի տեղը:

9. Նուկիմցի պատզամավորները տուն վերադառնալիս  
ճանապարհից հեռացիր են ուղարկում իրենց ժողովրդին.  
շարադրի՞ր այն:

10. Շարունակի՞ր հերիաքը:

11. Նկարագրի՞ր դեպքեր, երբ պատզամավորները առաջին  
անգամ կտեսնեն ընկոյզ, նարինջ...

ՎԻՃԱՄՄԱՐՈՅԱՆ

## ՎԻՐԱՎՈՐ ԱՌՅՈՒՑ ՈՒ ԿՐԻԱՆ



**Ի՞՞լ** մոտալուտ մահն զգալով՝ առյուծը մոնչում էր ցավից, երբ  
սողեսող նրան մոտեցավ կրիան ու հարցրեց.

- Ի՞նչը է ցավում:

- Որտորդի զնդակն է դիպել ինձ, - պատասխանեց առյուծը:  
Կրիան սաստիկ զայրացավ, ասաց.

- Օր ու արև չտեսնեն այդպիսի մարդիկ, որոնք ձեռք են բարձ-  
րացնում երկնային այնպիսի մեծ արարածների վրա, ինչպիսին  
ենք ես և դու:

- Քուրիկ, - ասաց առյուծը, ներողամիտ եղիք, քայց պետք է քեզ  
ասեմ, թե այն վերը, որ հասցել է ինձ որտորդը, շատ ավելի քի-  
ցավ է պատճառում, քան ըստ խոսքերը:

Այս ասելուց հետո առյուծն անմիջապես շունչը փչեց:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բացատրիք ինույևալ արտահայտությունները. ներդամիտ եղիք, մոտապոտ մակը, օր ու արեւ չտեսմել, ցավ պատճառել, ձեռք բարձրացնել ինչ-որ մեկի վրա, վերք հասցնել շունչը փշել:
2. Ինչո՞ւ կրիայի խոսքերը մեծ ցավ պատճառեցին առյուծին:
3. Ի՞նչ կարող էր ասել կրիան, որ չվիրավորվեր առյուծը:
4. Անկ բառով բնուրազրիք առակի  
ա) առյուծին  
բ) կրիային:
5. Ո՞րն է առակի իմաստը:
6. «Առաջանի» բաժնից դուրս գրիք առակին համապատասխան առաջներ:
7. Քո կարծիքով ինչո՞ւ է ինդինակը ընտրել հատկապես առյուծին և կրիային:
8. Հորինիք նմանատիպ առակ՝ ընտրելով ուրիշ կենդանիներ:

*ԳիՏԵ՞Ս, ՈՐ...*

Այսուհետեւ գաղանակ արքան է: Այդ «տիտղոսին» ոչ որ չի կասկածում, և ոչ մեկը չի վիճարկում: Իսկ ինչո՞ւ հատկապես առյուծին է շնորհվել այդ տիտղոսը: Նա զիշտահներից ամենաուժե՞ղն է: Հազիվ թե: Ուժով, կարելի է ասել, զիջում է վագրին: Ամենաճարպի՞շն է: Նույնպես ոչ նա զիջում է ընձառյուծին: Գիշատիչներից ամենախոշո՞րն է: Դարձայ ոչ սպիտակ արջը՝ 700-800 կիլոգրամ և կշռում, նույնիսկ վազրը, որ 300 կիլոգրամ է, ավելի խոչքոր ու ծանր է: Հասուն արու առյուծի առավելագույն քաշը 230 կիլոգրամից ավել չէ: Եվ, համենայն դեպք, առյուծն է զազանների արքան: Եվ նա այլ տիտղոսը կրելու իրավունքն ունի: Ըստ երևոյթին, առյուծին զազանների արքա նն կոչել ոչ թե ուժի, այլ՝ կեցվածքի համար, վեհ ու հպարտ կեցվածքի և նույնարան վեհ ու հպարտ բնակորդության համար: Առյուծը քաց տարածությունների բնակի է, չի բարնվում դարանում ու սպասում որսի: Նա որսի վրա բացահայտ է զնում՝ իր մոնշցով բռնորդին նախազգուշացնելով, որ զազանների արքան որսի է եւել: Եվ ամեն մի կենդանի էակ դորում է այդ «արքայական մոնշոցից»: Բայց առյուծը նաև մեծահոգի է, երբեք չի ոչնչացնում կենդանիներին, եթե կուշտ է: Եվ, կարծես թե իմանալով այդ բանը, նրա «հպատակները» զերերն ու անտիլոպները, կարող են հանգիստ արածել որսն ուստող զիշտակի կողքին:

## ՎԱԽԹԱՆԳ ԱՆԱՆՅԱՆ

### ԸՆՏԱՆԻ ՕՉԵՐ

Մարատ գյուղում շատ ընտանիքներ ունեն «իրենց» օձերը: Ամառվա շոգին նրանք բարնվում են բներում և երեկոները, երբ հովն ընկնում է, որի ու ջուր խմելու են դուրս զայխ: Գյուղի կենարունով անցնող ասֆալտապատ ճանապարհին նրանք շնու երևում: Բայց մյուս փողոցներում, որ երբեք նկույրունը քիչ է, ամեն երեկո օձեր են վխուում: Այնպէս որ ամեն առավոտ բնակիչները, երբ դուրս են զայխ իրենց տներից, փողոցի փոշու մեջ ծովումուու հետքեր են տեսնում: Կարծես զիշերը մեկը պարաներ է քարշ տվել փողոցի մի ափից մյուսը: «Ընտանի» օձեր են: Ապրում են տներում, պատերի ճնշուերում, հաճախ ման են զայխ սենյակում, բակում, սողում են հավերի հետևից, և նրանց ոչ ոք ձեռք չի տայխ: Նրանք էլ իրենց հերքին ոչ որի չեն խայրում:

- Տանու օձը իրեն տիրոջը ճանաչում է, վճառ չի տայխի, - համոզված ինձ ասաց գյուղի տարիքավոր բնակիչներից մեկը:

Ահա այդպիսի օձերից մեկի մասին այլ գյուղացի մի կին մի բան պատմեց, որ ավելի հերթարի է նման, քան իրականության: Բայց որովհետև այդ դեպքը որոշ խրատական իմաստ ունի, ուստի այն նկարագրում եմ պատմողի խոսքերով:

Գարունը եկավ, մեր բակը տաքացավ, ու մի օր էլ տեսանք, ընը, իրեն մեր օձը ձմռան քնից վեր է կացել, դուրս եկել բակ ու պատի տակ արևելոյն է արել:

- Մայրիկ, մեր օձը ամբողջ ձմեռ ոչինչ չի կերել, - հարցրեց իմ որի վաշիկը:

- Ո՞նց ուտեր, քնած է եղել:

- Հիմա ինչքա՞ն քաղցած կինի, մա՞ն, մի բան տուր իրեն տանք... Երեխայի խոսքը չկոտրեցի, մի կավե ամանով կար տվի իրեն: Վաշիկս վախվսելով մոտենցավ օձին, ամանը նրանից քիչ հեռու դրեց ու ետ փախսավ:

Օձը ոլոր-մոլոր պառկած է՝ աշքերը բաց, չզիտես բնա՞ծ է, թե արքուն: Չարծվեց: Երևի կարի հոտ առավ: Գնաց, գլուխը ամանի մեջ կոխսեց ու խմեց:

Որ ասեմ Վաշիկս նրանից շատ ուրախացավ՝ հավատա:

Ես գնում ի քամբակի դաշտ՝ կոլտողի աշխատանքին ու ամեն զնալիս մտրովս անց էր կենում՝ օձը չկծի՝ երեխային...:

- Զգույշ կաց, Վաշիկ ջան, մեր պապերն ասել են՝ «օձը տարացնողին կկծի», դրանից հեռու կաց, - խրատում էի ես:

- Այնպես եմ կաշառել, խկի կկծի՝ որ,- ծիծաղելով մի անգամ ինձ ասաց տղաս:

- Ինչո՞վ ես կաշարել, - հարցրի ես:

- Դու որ գնում ես գործի, ես իմ քաժին կարից նրան եմ տալիս... Ինձ ճանաչում է, ազնիվ խոսք, այ, տե՛ս, կարի ամանը ցոյց տամ, տես ոնց է զալիս հետևիցս:

Ու Վաշիկը վերցրեց պոռունկը կոտրված կավե ամանը, որով օձին կար էր տալիս, մեկնեց դեպի պատն ու շվացրեց:

Գյուրզան զլուսը ճեղքից դորս հանեց, բարկացած դես-դեն նայեց ու Վաշիկի տեսնելով՝ մեղմացավ, սողաց դեպի նա ու զլուսը մեկնեց ամանին: Հետո, տեսնելով, որ ամանի մեջ բան չկա, զլուսը բարձրացրեց ու նայում է Վաշիկին, կարծես հարցնում է. «Ինչո՞վ ես ինձ խարում»:

- Կար տոր, Վաշիկ ջան, կրարկանա, մի փորձանք կրերի մեր զլուսը, օձի հետ ընկերուրյուն ամել չի ինի, - ասացի ես: Բայց հետո պարզվեց ինձ համար, որ օձին մինչև ինք վատուրյուն չանես՝ նա քեզ վատուրյուն չի անի: Հիմի ես դա կիաստառեմ մի դեպքով:

Այդպես զյուրզան մեզ հետ խաղաղ ապրում էր, երբ մի օր էլ նկատեցի, որ դա ֆշացնելով ընկել է Վաշիկին հետևից, իսկ նա լեղապատռ վախչում է: Երեխան տուն եկավ, ես՝ հետևից: Դուռը ներսից փակեցինք:

- Ի՞նչ է պատահել, այ տղա, ինչի՞ է բարկացել քեզ վրա, - հարցրի ես վախչուց փշաքաղված:

- Զգիտեմ, ոչինչ չեմ արել... - ասում է տղաս, բայց զգում եմ, որ մի բան կա:



Մյուս օրը, երբ դաշտից տուն եկա ու մտա ներս, տեսա Վաշիկը մի ինչ-որ բան է ուզում ինձնից պահի: Սի փորբիկ տուփ էր: Ձեռիցը լսեցի եղ տուփը, բաց արի՝ տեսնեմ միջին առանց կճեպի, փափուկ, փորբիկ ծվեր են:

- Այ տղա, սրանք ին օձի ծվերն են, որտեղից ես վերցրել,- բարկացան ես:

- Այ, են ավագի հետ խաղալիս դորս եկամ... մեջը բաղված էին:

- Վայ քոռանամ ես, դրա համա՞ր է քշնամացել հետդ, ախր սրանք մեր օձի ծվերն են ... Արի, շուտ արի ցոյց տոր, որտեղից ես վերցրել...

Երեխան ցոյց տվեց, ես ծվերը դրի տաք ավագի մեջ ու ծածկեցի:

Տուն եկանք, բայց սենյակի դուռը բաց էինք բողել: Բաց դռնից տեսանք, որ օձը տիսո՞ւր, բույլ-բույլ սողաց դեպի կույտը, ավազը դնչով փորփրեց, համկարծ ծվերը դորս եկան և երևի դրանից շատ ուրախացավ: Այդ ժամանակ այդ կենդանին չտեսնված-չլսված մի բան արավ, մի բան, որ ամեն անգամ հիշելիս մազերս փշաքաղվում են, սիրոս համ ահով է լցվում, համ ուրախուրյունով:

Ասա ի՞նչ արավ: Դա ծվերը բողելց բաց ու արագ եկավ, տուն ընկապ, հասավ պատին ու սկսեց բարձրանալ բարեքը, որի վրա բաժակով դրված էր Վաշիկի բաժին կարը:

- Այ տղա, կարը մինչև իհմի ինչի՞ չես խմել, - բարկացան երեխայի վրա, փայտը վերցրի ու գնացի օձի առաջը կտրեցի, որ շնութենա կարին:

- Դե, արի վերցրու, խմի՞ր, - գոռացի ես:

Մինչև Վաշիկը տեղից կշարժվեր, օձը իմ փայտին էլ չնայեց, իմ բարկուրյանն էլ, արագ հասավ բարեքին, պոչը բափ տվեց օդում, լախտի նման խփեց բաժակին ու ցած գցեց: Բաժակը ջարդվեց, կարը բափվեց: Իսկ օձը հանդարտված հջավ բարեքից և առանց շտապելու գնաց դորս ու նոր միայն սկսեց իր ծվերը ծածկել ավազով...

Ես ու երեխան բարացած - կանգնած նայում ենք, թե սա ի՞նչ իրաշը է, ինչի՞ բափեց կարը:

Բայց շուտով իրաշը պարզվեց, մեր ագահ կատուն այդ ժամանակ լսկում էր բափված կարը: Լակեց, լակեց, առաջ կարուտ գետինը լիզեց, հետո իր շրբունքները ու վեր ընկապ ուտավ, ուտները գցեց ու սատկեց: Սի տես ի՞նչ բախտ եմ ունեցել, որ երեխան էղ օրը ժամանակին չէր կերել... Պարզվեց ես բարի լուսի պես, որ օձը

կրեմի համելու համար քոյն է քափել կարի մեջ...

Բայց դե ևս օձին չեմ մեղադրում. ամեն մոր համար իր զավակներից քանի քան չկա աշխարհի երևան: Ու եղ գյուրզա մերը, որ արդեն զրկվել էր իր ծվերից, որոնց մեջ իր ապազա զավակներն էին, ինձ էլ էր ուզում զրկել իմ զավակից, որ սիրտը հովացնի:

Բայց մերը ինչքան որ կատաղի է կրեմի Ժամանակ, Լճան էլ քարի է, երբ իր զավակները կան, ապրում են: Ու որ տեսավ իր ծվերը եւս են բերել, մի տեսնեիր, թե ո՞նց զլիսապատառ եկավ, տուն ընկավ. չինչ՝ թե բունավորված կարը խմած լինեն...

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ՍՊԱԶԱԴՐԱՆՁԵՐ

1. Համառոտ պատմի՞ր:
2. Պատմվածքը բաժանի՞ր մասերի և վերնագրի՞ր յուրաքանչյուր մասը:
3. Պատմի՞ր ընտանի օձերի մասին:
4. Գրի՞ր ինչո՞ւ է օձը  
ա) կարը բունավորում  
բ) կարը քափում:
5. Երե համառոտելու լինես, ո՞ր հատվածները կիանես:
6. Ի՞նչ է խրատում այս պատմվածքը:
7. Ի՞նչ հետաքրիր պատմույթուններ գիտես օձերի մասին:
8. Գրի՞ր դարձվածքներ «օձ» քառով:

LUT'L ԵՍ ...

**Մ**անգամ մամուլում երևաց մի փորբիկ հողված այն մասին, թե ինդոնեզական կղզիներից մեկի մի բնակիչ բռնել է փորբիկ մի վիշապ, ընտելացրել երան: Մեծանալով՝ վիշապը դարձել է զյուղացու հավատարիմ բարեկամն ու օգնականը. նա քարծիանում էր կոկոսյան արմավենու վրա և քափ տալիս ընկույցները:

Հնուց հայտնի է, որ օձերի հիմնական սնունդը կրծողներն են: Եվ վաղուց արդեն մարդիկ դրանց օգտագործում են մկների ու առնետների դեմ պայքարելու համար: Աֆրիկայի ու Հարավային Ամերիկայի բնակիչները փորբիկ վիշապներ են բերում տուն, մեծացնում, և նրանք ոչ միայն չեն հևուանում իրենց տերերից, այլև հիանալի կերպով փոխարինում են կատուներին:

Բրազիլիայում այդպիսի վարժեցրած օձեր վաճառում են նոյնիսկ շուկաներում: Ի դեպ, օձերին, իբրև կրծողներ ոչնչացնողների, օգտագործում են նաև Հեռավոր Արևելքում, որտեղ ապրում է հեշտ վարժեցվող անորյան վիշապ օճը: Երկմնտրանց օճը այստեղ հաճախ «ընտանիքի լիիրավ անդամ» է. նա ազատ սողում է տանը, բակում, ապրում է ցախանցներում ու ամբարներում, երե այստեղ մկներ են երևում: Խսկ երե այնտեղ էլ պակասում են կրծողները, «հերքափոլիսի է ելնում» բանցարանոցներում:

Սակայն կրծողներին ոչնչացնելը նոյնպես օձերի միակ ծառայությունը չէ մարդկանց հանդեպ: Կենդանիների հրաշալի զիտակներ ու սիրահարներ ամերիկյան հնդիկները վաղուց նկատել են, որ այստեղ, որտեղ ապրում է վիշապը (կամ ինչպես նրան ավանում են Հարավային Ամերիկայում՝ արքայական վիշապը), բունավոր օձեր չկան: Հնդիկները օգտագործեցին այդ վարժեցրած վիշապները սկսեցին մարդկանց բնակավայրերը պահպանել բունավոր օձերի ներլուստումից: Եվ այնչափ բարեհաջող:

Հնդիկների փորձը ընդորինակեցին Ամերիկա բնակուրյան եկած եվրոպացիները: Եվ այժմ Բրազիլիայի շատ տներում, այն շրջաններում, որտեղ շատ են բունավոր օձերը, հավատարմորեն ծառայում են արքայական վիշապները: Այդ հսկա, չորս մետրանոց սողունները, պարզում է, շատ բնիուշ ու նվիշված սիրտ ունեն: Նրանք շատ են կապվում երեխաների հետ: Ընտեկացված վիշապը, որն ապրում է այն տանը, որտեղ փորբիկ երեխաներ կան, անընդհատ հետևում է նրանց, ուղեկցում զբոսանքի ժամանակ, և ծնողները կարող են միանգամայն հանգիստ լինեն. ոչ միայն բունավոր օձերը, այլև մոտակայրում հայտնված ոչ մի զիշատիչ կենդանի չի համարձակվի մոտենալ երեխային, որին հսկում է վիշապը:

## ՀԱՅՈ ՍԱՀՅԱՆ

Մշուշների շղարշի տակ  
Աշնան խաշամն է խշխում,  
Քամու ձեռքերն անհամարձակ  
Ամպի փեշերն են բաշրջում:

Ամպը լեզուն կուլ է տվել,  
Հնար չունի որոտալու:  
Ցերեկն էլ է ցրտից կծկվել,  
Չէ, երևի ձյուն է գալու:

## ՀԱՐՁԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՆԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպէ՞ս ես հասկանում հետեւյալ պատկերները.

Մշուշների շղարշի տակ...  
Ամպը լեզուն կուլ է տվել...  
Ցերեկն էլ է ցրտից կծկվել...

2. Դո՞րս գրիր թեզ դոր եկած պատկերը:

3. Ի՞նչ գոյներ կօգտագործես այս բանաստեղծությունը նկարագրելիս:

## ՎԱԽԹԱՆԳ ԱՆԱՆՅԱՆ

### «ԳԻՏՆԱԿԱՆԸ»

**Ա**յո՛, մարտունեցի որսորդ Բալաբեկը ես եմ, որ կամ: Ո՞նց չես ճանաչում ինձ, այսր իմ մասին նոյնիսկ մի զրքում գրել ես՝ «Աղվեսից խորամանկը...»: Հենց էլ աղվեսից խորամանկը ես եմ որ կամ. Ճյուղը մեր դաշտերը ծածկեց քե չէ՝ զնում եմ զիշերը հանդում մի սավան զցում զյսիս ու տակին կուչ եկած՝ ծվծվում եմ մկան նման: Հենց խարված աղվեսը մոտենում է, սավանը ես եմ շպրտում ու դրմբացնում դրա հետևից՝ փովում է:

Բա՛, աղվես չի պրծնում իմ ձեռքից, բոլորին էլ խարում եմ, որին բակարդով եմ բռնում, որին մկան ծվծվոց մոտս կանչում: Ըսյց մի անգամ մի շատ փորձված աղվես ինձ խարեց ու լավ խարեց: Ասա՞ ո՞նց: Մի տարի մազեղեն մրերող գրասենյակը ինձ բույնի հարեր տվեց, քե՝ տար աղվեսներին ուտեցրու, բող սատկեն, մորքիները բեր մեզ հանձնիր: Թույնով աղվես բռնելը դեռ չին արգելել: Գյուղի մոտ մի կածան կա, որով ամեն զիշեր աղվեսները զալիս են ու հեռվից կարոտով նայում ֆերմայի հավանոցին... Էղ կածանում էստեղ-էնտեղ մի բան հար բաղեցի և որախ-որախ տուն զնացի. դե ոնց լինի, որ էս զիշեր մի հինգ աղվես հար չուտի ու չընկնի...»

Առավոտը զնացի տեսա ոչ մի աղվես չի երևում ձնի վրա պառկած: Ստուգեցի՝ հարերը չկա: Այ թեզ հրաչը: Նայում եմ՝ աղվես է անցել կածանով: Այ մարդ, էս հարերից մեկը որ հինգ աղվեսի ուտեցնեմ, բոլորն էլ կսատկեն տեղն ու տեղը, էս ո՞նց է բանը կերել ու չի սատկել:

Գնացի բայազետցի որսորդ Գարոյի Եփրեմի մոտ, պատմեցի զլիսի նկածը: Բեղի տակ ծիծաղեց, զլուխը տմբացրեց:

- Խելքի ի՞նչ է կտրում, հարերն ո՞վ է տանում, - հարցրի ես համբերություն հատած:

- Ո՞վ... զիտնական աղվեսը... բա՛, նրանց մեջ էլ զիտնականներ կան, որ զիտուրյուն չունեն, բայց փորձ ունեն: Հավարում է, տանում մի տեղ հորում: Հետքով զնա՞ կզունես:

Գնացի էլ աղվեսի հետքը տարա, տեսնեմ մի տեղ ձյունը բանդել է, հարերը հորել մեջը...

Նորից զնացի Գարոյի Եփրեմի մոտ:

- Այ Եփրեմ քեռի, քա հիմի ի՞նչ անեմ, ալսր ինձ վառեց քո գիտնական աղվեսը:

- Թույն չի ուտի, պիտի քալակով բռնես, ճար չկա,- խորհուրդ տվեց նա:

Թալակը տարա լարեցի դրա ճամփին՝ թերանք բաց: Լուսաղեմին զնացի տեսա քալակի թերանք փակված:

- Այ քեռի Եփրեմ, սա ի՞նչ իրաշը է...

Ծիծաղում է քերի տակ ու գլուխը էի դժբանքանում:

- Այ մարդ, ալսր ձմեռն անց է կենում և մազեղենի պլան չեմ կատարում, մի հնար ցույց տուր:

- Հնար կա,- հանգիստ ասաց նա: - Գիտնական աղվեսը պոչով խփում է քալակին թերանք փակում ու միջի միաց վերցնում զնում: Գնա ստուգիր, տե՛ս, ճի՞շտ եմ ասում, նոր հնարք քեզ ցույց կտամ:


Սեկ էլ քալակներ շարեցի կածանի երկայնքով, չաղ մսի կտորներ դրի, քայց լուսաղեմին զնացի տեսա քալակները փակ, մսերը չկան: Լավ նայեցի՝ տեսնեմ մի քալակի թերանում մի փունջ մազ է մնացել: Ուրեմն ճիշտ է ասում քեռի Եփրեմը. Էղ սրիկան պոչով խփում է, տրաքացնում քալակները:

Էլի զնացի Գարոյի Եփրեմի մոտ:

- Բա հիմի ի՞նչ անեմ...

- Չորս քալակ կշարես իրար դիմաց, շախմատի նման: Հենց որ շուր զա, որ պոչով խփի հետևից քալակին, առաջին ոտք կընկնի քալակներից մեկի մեջ...

Այդպես էլ արի ու մյուս օրը ծեզը ծեզին զնացի կածանի կողմը:



Վայ Գարոյի Եփրեմ, այ մարդ, դու իմաստո՞ւն ես, թե աղվեսի բնում ես մեծացել... Նայեմ տեսնեմ «զիտնական աղվեսը» իր քալակը ոտից քարշ տալով զնում է: Ո՞ւր ես տանում, անտեր, ալսր ես եղ քալակին փող եմ տվել... զոռացի ու հետևից որ չդրմբա՛ցրի՝ Եփրեմ քեռու «զիտնականը» մեկնացեց...

Դե, հիմի զնա, զրքերում զրի, աղվեսից խորամանկը ե՞ս եմ, թե բայազետցի Գարոյի Եփրեմը:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՊՐՄՆՁՆԵՐ

1. Հետեւյալ քառերն ու արտահայտուրյունները փոխարինի՛ք այլ բառերով և արտահայտուրյուններով.

Դրմբացնել, մազեղեն մրերող գրասենյակ, խելք ի՞նչ է կարում, հորեւ, մեկին փառել, ճար չկա, ծեզը ծեզին, կածան:

2. Աղվեսի անունից պատմի՛ք, թե ինչպես էր ինքը խարում որպող Բալարեկին:

3. Այս պատմուրյունը բաժանի՛ր մասերի և վերնագրի՛ր յուրաքանչյուր մասը:

4. Բնուրագրի՛ր որսորդ Բալարեկին:

5. Բնուրագրի՛ր Գարոյի Եփրեմին՝ օգտվելով համապատասխան հատվածներից:

6. Բացատրի՛ր վերնագրիր:

7. Հորինի՛ր վերնագրիր այս պատմվածքի համար:

8. Օգնի՛ր «Գիտնականին»... Թող նա նորից խարի որսորդին:

9. Ի՞նչ զիտևս արգելանոցների և «Կարմիր զրի» մասին:

10. Ի՞նչ զիտևս աղվեսների մասին:

11. Գրի՛ր պատմուրյուն «Խորամանկ աղվեսը երկու ոտքով քալարդ կընկնի» վերնագրով (Կարեյի է գրել ե՛ւ ուղիղ, ե՛ւ փոխարեւական իմաստով):

12. «Արածանի» բաժնից դո՛րս զրիր այն առածները, որանդ օգտագործված է աղվես քառը: Փորձի՛ր բացատրել յուրաքանչյուրի փոխարեւական իմաստը:

## ԹՈՒԽԻԿԸ

**Ա**սում են, ժամանակով Երևան քաղաքում մի նշանավոր որտղ-բժիշկ է եղել: Նա ազուավի բնից աղվամազով ծածկված մի ձագ է հանել թերել տուն:

Ժամանակ է անցել, ազուավը մնեցել է, գորշ փետուրները դարձել են բոլով, և նա բռչնային բնազդով կապվել է տիրոջ հետ:

Ասում են, նա բժշկի հետ սեղան էր նստում, իր համար պատրաստված արոտակից կոցում էր իր քամին կերակուրը, «Ղա՛-Ղա՛» կանչելով շնորհակալուրյուն էր հայտնում տիրոջն ու զնում քաղաքային այգու ծառերի վրա աղմկերու և զվարճանալու իր ցեղակիցների հետ: Երեկոյան դեմ տուն էր վերադառնում, իր կոշտ ձայնով քարի զիշեր մասրում բժշկին և զնում քառերու:

Բժիշկն ազուավին հաճախ էր որսի տանում: Խելացի բռչունը երկնքից իր սուր հայացքով խուզարկում էր լեռան ծերպերը, զտնում էր որսը և զալիս տիրոջ ուսին քառում՝ կտուցը որսի ուղղությամբ մեկնած: Գնում էր որտղը ազուավի կտուցի ուղղությամբ, և այդ նրա լավագույն կողմնացույցն էր:

Իսկ քանձր մառախուտին, անտառում մոլորված ժամանակ, հավատարիմ ազուավը ցույց էր տալիս նրան ճանապարհը:

Բժիշկը դուրս էր զալիս քաղաքի զիշավոր փողոցը, և ընկերները քախանձում էին նրան.

- Դե՞, բժիշկ, ի՞նչ կիහնի կանչես քո ազուավին:

Բժիշկը, շրջապատված հետարքիր քազմությամբ, մոտենում էր քաղաքային այգուն, որ ծառերի վրա աղմկում էին ազուավները, և կանչում էր հեռվից:

- Թուխիկ, Թուխիկ...

- Ղա՛ ղա՛ ... լսվում էր պատասխանը՝ ծառին իջած երամի միջից: Հասարակությունը զարմանում էր ազուավային այդ պատասխանի վրա:

- Թուխիկ, թե՛ք եմ սպասում, - ձայն էր տալիս բժիշկը:

- Ղա՛, ղա՛ ... այսինքն՝ զալի՛ սեմ, զալի՛ ս-, լսվում էր պատասխանը և երամից քածանվում էր Թուխիկը, պտույտներ էր զործում ու նստում իր տիրոջ ուսին:



Այսեց երկինքը: Քիչ անց ազուավների մի մեծ երամ էր անցնում:

- Թուխիկ, ինձ քաղցած սպանեցիր, անպիտա՞ն, այսր թե՛ք եմ սպասում, սրտնեղած ձայն տվեց նա:

- Ղա՛, ղա՛ ... լսվեց երկնքից, և երամից մի ազուավ քածանվելով՝ պատուիանից ներս ընկավ, թառեց սեղանին: Ու այն ժամանակ միայն տերը ճաշ պատվիրեց:

Այնուհետև բժշկը ամեն անգամ զնում էր այգու ճաշարանը և սպասում էր իր Թուխիկին:

Քաղաքում անելիք էր դարձել Թուխիկը:

Այդպես սիրով ապրեցին իրար հետ որտղը բժիշկն ու իր փետրավոր ընկերը:

Բայց որովհետև ազուավը հաճախ մարդուց շատ է ապրում, ուստի տերը զառամեց ու մեռավ, իսկ ազուավը նրա դագաղի վրա տխուր ու զլվիկոր նստած, մարդկանց ուսերի վրա տարվեց մինչև գերեզմանատուն:

Դագաղն իջեցրին փոսը, բայց ազուավը բռչելու փորձ չարավ:

- Թուխիկ, դո՛րս եկ,- լսցի միջից ձայնեց բժշկի այրին:

Չլսվեց պատասխան «ղա՛-ղա՛»-ն, կարծես բռչունը վշտից ուշը կորցրել էր:

Նրան գերեզմանից հանեցին և բժշկի աճյունը հողով ծածկեցին:

Բարակ անձք էր տեղում: Ծողովուրդը ցրվեց, բայց Թուխիկը մնաց քարմ հողարմբին՝ վշտահար ու նորը կանգնած:

## ՀՈՎՎԻ ՀՐԱԺԵՏՈ

Մնար բարով, դուք, արոտներ սիրուն,  
Ամառն անց կացավ, հոտն իշնում է տուն:

Մենք ետ կզանք ձեզ նորից զարունին,  
Երբ զարբնեն ուրախ երգերը կրկին,  
Երբ որ սարերը զուգվեն կանաչով,  
Երբ որ ջրերը վազեն կարկաչով:

Մնար բարով, դուք, արոտներ սիրուն,  
Ամառն անց կացավ, հոտն իշնում է տուն:

Հին, քարսիրտ աշխարհում մարդիկ տեսան այդ դեպքը, ականա-  
տես եղան այդ բռչունի արարքին, և ծերերը քրթմնջացին.

- Երանի չ.՝, որ բոլոր արարածներն եւ այն բռչունի չափ իրար  
հավատարիմ մնային...

Եվ երբ գերեզմանին պատվանդան կառուցեցին և վրան դրին ան-  
վանի բժշկի կիսանդրին, քանդակագործը չնոռացավ նրա հավա-  
տարիմ Թուլիսիկին քանդակել ամրոց ուսին քառած:

Ասում են, մինչև այժմ էլ մի ծեր ագռավ տխուր-տրտում քառում է  
բժշկի կիսանդրու ուսին: Թուլիսիկն է. դար է անցել, բայց չի մոռա-  
նում իր տիրոջը...

Իսկ նրա դիմաց, քաղաքային այգու հնամենի ծառերի տեղը  
կանգնած ջահել բարդիների վրա, որախ աղմկում են ծեր Թուլիսի-  
կի երիտասարդ սերունդները...

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՊԱԶԱԴՐԱՆՁԵՐ

1. Դուքս զրիդ անձանոր քառերը եւ քառարանի օգնությամբ քա-  
ցատրի՞ր:
2. Համարու պատմի՞ր:
3. Պատմվածքը քածանի՞ր մասերի եւ վերճագրի՞ր յուրաքան-  
չյոր մասը:
4. Պատմի՞ր բժշկի եւ Թուլիսիկի ընկերության մասին:
5. Բացատրի՞ր հետեւյալ նախադասությունը՝ Քաղաքում ասե-  
լիք էր դարձել Թուլիսիկը:
6. Ո՞ր հատվածում է ավելի լավ երեւում ագռավի հավատարմո-  
րյունը:
7. Նկարագրի՞ր Թուլիսիկին:
8. Քո կարծիքով, իրակա՞ն է այս պատմությունը:
9. Գրի՞ր պատմություն «Իմ սիրած կենդանին» վերնագրով:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՊԱԶԱԴՐԱՆՁԵՐ

1. Ի՞նչ տրամադրություն է արտահայտված քանաստեղծությու-  
նում:
2. Ո՞ր տողերում է հատկապես լավ արտահայտված այդ տրա-  
մադրությունը:
3. Բանաստեղծությունում զոփի՞ր կրկնված տողերը. ո՞րն է նրանց  
դերը քանաստեղծության մեջ:
4. Բարձրածայն կարդա քանաստեղծությունը:

## ԵՂԻԿԸ



«Մի անգամ իմ քարեկամ մի որսորդ մեր հանդի անտառուտ սարերից մի եղնիկ նվեր բերեց եղեխաներիս համար»:

Այսպես սկսեց ընկերս աշնանային մի երեկո, երբ նատած միասին նրա պատշզամբում, հիացած նայում էին հերիարական վերջալույսով վառվոուն սարերին, որոնց վրա մակաղած հոտերի նման մեղմօրոր հանգչում էին ոսկեգեղմ անտառերը:

«Այդ մի մատադ ու խարտյաշ եղնիկ էր, խորունկ, սև ու զինջ աչքերով, որ ծածկվում էին երկայն, նորր քարքիշների տակ: Երբ քննում էի նրան՝ քնրուշ մարմինը կուչ էր գալիս գրկիս մեջ, և սիրտը քրրում էր այնպես արագ, թիրենի քերի նման: Կամաց-կամաց մեր վրա ստվորեց նա. Էլ չէր վախենում մեզնից, մանավանդ շատ մտերմացել էր եղեխաներիս հետ, նրանց հետ միասին վազվում էր պարտեզում, նրանց հետ ճաշում էր, նրանց հետ քննում: Մի քան ինձ շատ էր զարմացնում: Եղնիկը քեև այնպես ընդելացել էր մեզ, ստվորել էր մեզ, ստվորել էր մեր տանն ու դրանը, քայլ մեկ-մեկ մեզնից քաքուս քարձրանում էր պատշզամբը և ուշագրավ, լիկ նայում էր հեռո՛ անտառներով փարարված սարերին. ականջները լարած՝ խորասոյզ լսում էր անտառների խուլ ու անդրչի շառաչը, որ երթեն ուժեղանում էր, երթենն քարականում՝ նայելով հովերի քափին: Նայում էր նա այնպէ՞ս անքարը և այնպէ՞ս ինքնամոռաց, որ երբ պատահում էր քարձրանում էի պատշզամբը, ինձ քավական միջոց չէր նկատում և երբ հանկարծ ուշքի էր գալիս, նետի պես ծլկվում էր մոտից:»

Արյուր գիտե՞՞ր նա, որ ինքը այդ դողանջուն անտառների ազատ եղեխան է եղնի, որ իր մայրը այնտեղ է կար տվել իրեն, որ այնտեղ է իր հայրը եղջյուրները խփել կաղնիներին: Արյուր գիտե՞՞ր, որ այդ

խուլ շառաչը անո՞ւշ-անո՞ւշ օրորել է իրեն առաջին անգամ, և ո՞վ գիտե, գուցե երազներ է բերել իրեն, սիրուն երազներ...»

Խե՞նդ եղնիկ... Կարոտ իր սիրած գորգորող անտառներից ու զանգակ աղբյուրներից, իր խարտյաշ մորից և շնկշնկան հովերի հետ վազող ընկերներից, հիմա տանջվում, տառապում է մեզ մոտ, մտածում էի նս: Եվ այնպես սրտանց ցավակցում էի նրան... Չէ՞ որ նա էլ մեզ պես մտածող և զգայուն հովի ունի...»

Ես շատ էի հարգում նրան, խնդրեմ չծիծաղես վրաս, այո՛, այնան, որ երբ նա քարձրանում էր պատշզամբը, հեռացնում էի երեխաներիս, և բողնում էին նրան մենակ իր ապրումների հետ...»

Երբ գրկում էի նրան՝ այդ նազելի էակին, և նայում էի լեռնային աղբյուրների նման վճիռ աշուկների մեջ, տեսնում էի այնտեղ մի քախծախի երազուն կարոտ...»

Մի զիշեր, մի քամի զիշեր, սարերից անսանձ փշում էր քամին, դուռն ու պատուհանները ծեծում ու ծեծկում: Պարզ լսվում էր, որ այնտեղ, անտառում, դարավոր կաղնիներն ու վայրի ընկուզենիները ճակատում էին հողմի դեմ, աղմկում ու գոռում: Եվ քամին թերում էր անընդհատ անտառի այդ լիակործք խշշոցն ու մոռնչը, ու բվում էր, թե հենց մեր դրան առջևն է աղմկահոյզ, հողմածեծ անտառը:»

Երեխաներս վախսից կուչ էին եկել. մինչդեռ եղնիկը դողում էր մի խենք սարսուուով: Աչքերը կայծակին էին տալիս: Անքարը, ամրողովին լսելիք դարձած՝ ականջ էր դնում նա անտառի հումկու շառաչին, որ խոսում էր նրա հետ մայրենի լեզվով:

«- Անտառը կանչում էր նրան, ընկերների ազատ վազքն էր տեսնում նա մրին քավուտների մացառուտ ժայռերն ի վեր, - մտածում էի նս:»

Մի փոքր հետո ավելի սաստկացավ քամին՝ փորորիկ դառնալու չափ. մեկ էլ աղմուկով քացվեցին լուսամուտի փեղկերը, և մի ուժգին շառաչ միանգամից ներս խումեց: Եղնիկը հանկարծակի մի ուտյունով ցատկեց լուսամուտի գոզը՝ աչքերը սուզելով շառաչուն խավարի մեջ: Ես խկույն վրա վազեցի քռնելու նրան, սակայն նա մի ակնքարքի մեջ քոավ լուսամուտից պարտեզը և ծածկվեց խավարի մեջ: Դեհի, հիմա զնա ու գտիր նրան իր հայրենի անձայր անտառներում...»:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՊԱՉԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Դուքս գրիր անձանոր բառերը և բառարանի օգնությամբ բացարի՞ր:
2. Պատմվածքը համառոտ պատմի՞ր:
3. Եղիկին նկարազրի՞ր:
4. Դուքս գրիր եղնիկի հոգեվիճակն արտահայտող նախադասությունները:
5. Դուքս գրիր այն հատվածները, որտեղ արտահայտված է հենանակի վերաբերմունքը եղնիկի նկատմամբ:
6. Դուքս գրիր պատմվածքի ամենահոգիշ հատվածը:
7. Ո՞րն է այս պատմվածքի հիմնական իմաստը:
8. Դուքս գրիր աշոնք պատկերող հատվածը:
9. Ինչպիսի՞ն է անտառը փորորկի ժամանակ:
10. Ինչպիսի՞ն կլիներ պատմվածքն առանց բնուրյան պատկերի: Ինչո՞ւ:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

## ԵՐԶԱՆԻԿ ԽՐՃԻԹԸ

Մրուխտյա գետակի վրա մի խեղճ ջրաղաց կար:  
Ջրաղացի դրան առջև, կանաչ ուռենու տակ, թիկն էր տվել  
ջրաղացանք և ջիրովս գոն ծխում: Կողըին նստել էր կինը,  
իսկ նրանց աշքերի առջև մի սիրուն մանուկ, նրանց երեխան, խաղ  
էր անում: Մեղմիկ սոսափում էր ուռենին, և ջրաղացն անու  
մտմտալով, ասես իին օրերից մի իին հերիար էր պատմում:

Ինչպես եղավ, մի օր այդ սիրուն մանուկը վազելով թիրեննիկի հե-  
տև ից, հեռացավ ջրաղացից, ընկալ մացանների մեջ, անցավ ձո-  
րակից ձորակ, կորցրեց ջրաղացի շավիդը ու գնաց, գնաց, հասավ  
մեծ ճանապարհին, նստեց եգերքին ու լաց եղավ:

Անցավ մի քարավան. մի ուղևոր տեսավ լացող մանուկին, լսդաց, վեր առավ և իր հետ տարավ:

Տարավ իր տունը և, որպինուն զավակ չուներ, որդեգրեց նրան: Մանուկը մեծացավ, դարձավ մի շնորհայի երիտասարդ:

Ամենը սիրում էրն նրան և ուրախանում նրա վրա, բայց նա  
տխուր էր, միշտ տխուր:

Երբ երեկոները մենակ նստում էին իրենց շքեղ պատշգամբում, ո-  
րի շորջը քացվում էր պարտեզը՝ հովասոն ծառեղով և կարկաչուն  
շատրվաններով, նրա հոգին սլանում էր մի ուրիշ վայր, որ հեռավոր  
երազի պես մեկ երևում էր, մեկ չքանում... Երևում էր մի խեղճ ջրա-  
ղաց զմրուխտյա գետակի վրա, որ օր ու գիշեր մանկուրյան պես սի-  
րուն մի հերիար էր պատմում, տեսնում էր երկու հարազատ դեմքեր՝  
նստած կանաչ ուռենու տակ. մեկը մտրի մեջ ընկած ջիրովս է  
ծխում, մյուսը արցունքու աշքերով նայում է հեռուն:

- Ինչո՞ւ ես տխուր, ի՞մ որդի, - ասում էր հարուստ հայրը նրան, -  
հայտնիք ի՞նչ է պակաս, թե սեր ունիս մի աղջկա, հայտնիք, թե չէ,  
ի՞նչ կա...

Եվ խնջույք էր սարքել բարի հայր՝ որդուն ուրախացնելու հա-  
մար. դահլիճները լուսավորված էին ջահերով, նազելի աղջկները  
պատել էին երիտասարդի շորջը, ասում ու ծիծաղում:

Եվ երիտասարդը մի օր զգոյց դուրս եկավ դահլիճներից, անհայ-  
տացավ խավարի մեջ ու էլ չվերադարձավ:



Նա զնաց, շրջեց, քափառեց շատ ու շատ տեղեր, հարցուի որդ արավ և մի օր վերջալույսի շողերի տակ տեսավ զմրուխտյա զետակի վրա մի խեղճ ջրաղաց: Տեսավ՝ ջրաղացին կոնակը տվել է մի հին խրճիր, որի բոլոսարիկից մարմանդ ծովս է ելնում:

Սուտեցավ խրճիրին, կամացուկ նայեց լուսամուտից ներս. նստել էր մի ավելոր մարդ և մտախոհ չի բռում, մի երերուն պառավ ցամաքած ձեռքերով սեղանն էր փոռում: Երբ նրանք հացի նստան, պառավը վերցրեց մի կտոր հաց ու ասավ.

- Այս էլ որդուս քածին:

- Այ կնիկ, այս քանի տարի է, միշտ էլ որդուս քածինն ես պահում ու առավոտն անձանոր անցորդներին տալիս... հե՞յ վախ, մեր որդին էլ չի գա:

- Այ մարդ, աստված զիտե, մեր որդին իմի ո՞ւմ պատի տակ է կուչ եկել, որիշի մոր ձեռքին է նայում. կարելի է այն մոր տղան էլ հեռու տեղ է, ու ես նրան իմ որդուս քածինն եմ տալիս. ի՞նչ իմասս, կարելի է նա էլ իմ որդուս իրենի քածինն է տալիս...

Այդ միջոցին ներս ընկավ որդին, գրկեց մորն ու հորը, համբուրեց և լացեց:

- Ա՛ա, մեր որդին, - քացականչեցին ձերունիները և գրկների մեջ առան իրենց կորած, կարոտացած որդուն և լաց եղան:

Օջախի մեջ կարմիր կրակը ուրախ-ուրախ թւին է տալիս, պայծառ ու տաք ժայտով լցնում է երջանիկ խրճիրը:

Զրադացը անուշ-անուշ մտմտարով, մանուկ օրերից մի հերիար է պատմում մանկության պես սիրուն, մանկության պես ոսկի...

## ՀԱՐՁԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՁԵՐ

1. Հնտեւյալ քառերը, քառակապակցուրյուններն ու արտահայտուրյունները փոխարինիր իմաստով մոտ քառերով, քառակապակցուրյուններով ու արտահայտուրյուններով.

Րիկմ տայ, վեր առնել, մտրի մեջ թնկած, սեր ունենայ, ալեւոր մարդ, մտախոհ, հացի նստել, պատի տակ կուչ զալ, որիշի ծեռքին նայել, քածին տայ, գրկների մեջ առնել, կրակը թնիմ տայ:

2. Կարդա՛ այն հատվածները, որտեղ երեւում է խրճիրի երջանիկ լինելը:

3. Գտիր պատմվածքում կրկնվող տողերը և քացատիրի դրանց նշանակուրյունը:

4. Սանրամասն նկարագրի խրճիրն ու տունը, որտեղ մեծացավ տղան:

5. Ո՞րն է պառումվածքի արտահայտած իիմնական իմաստը:

6. Վերնագրի՛ր առանձնացված մասերը:

7. Կարեւո՞ր է պատմվածքի երկրորդ մասը: Ինչո՞ւ:

8. Գտիր նոր վերնագրի այս պատմվածքի համար:

## ՂԱՂԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

# ՀԻՃՈՂՈՒԹՅՈՒՆ

Ծիծենակը բույն էր շինում,  
Ե՞վ շինում էր, ե՛ւ երգում,  
Ամեն մի շյուղ կպցնելիս՝  
Առաջվա բույնն էր հիշում:

Մեկ անգամ էր նա բույն շինել  
Եվ շատ անգամ կարկատել,  
Բայց այս անգամ վերադարձին  
Բույնն ավերակ էր գտել:

Այժմ նորից բույն էր շինում,  
Ե՞վ շինում էր, ե՛ւ երգում,  
Ամեն մի շյուղ կպցնելիս՝  
Առաջվա բույնն էր հիշում:

Նա հիշում էր անցած տարին  
Իր սնուցած ձագերին,  
Որոնց ճամփին հափշտակեց  
Արյունաքրու քշնամին:

Բայց նա կրկին բույն էր շինում,  
Ե՞վ շինում էր, ե՛ւ երգում,  
Ամեն մի շյուղ կպցնելիս՝  
Առաջվա բույնն էր հիշում:

## ՀԱՐՁԵՐ ԵՎ ՍՈՍԶԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ տրամադրություն է արտահայտում բանաստեղծությունը:
2. Բացատրի՛ր կրկնվող տողերի նշանակությունը բանաստեղծության մեջ:
3. Ո՞րն է այս բանաստեղծության փոխարեական իմաստը:  
Փորձի՛ր կտպ տևմել այս ծիծեննակի և մարդու միջև:
4. Ինչո՞ւ է բանաստեղծությունը կոչվում «Հիշողություն»:

## ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Ասում են, թե սա դարիք-դուրբանի (պանդուստ) նման զարունը բացվելուն պես զայխ է մեր կողմերը, իր համար տուն ու բույն շինում, ծագ հանում: Խսկ երբ վրա է հասնում ուշ աշունը, հավաքում է զերդաստանը և գնում Երուսաղեմի կողմերը: Ասուծու անմեղ բոշունն է, մարդկանց բախտի ու հաջողության նշանը: Ով վճառ տա ծիծեննակին, չի ապրի:

## ՈՍԿԻ ԶԿՆԻԿ

(բարգմանուրյունը՝ Դ. Աղայանի)

Ա

Մի ծերուկ ձկնորս և իր պառավ կին  
Բնակվում էին Մեծ ծովի ափին.  
Ծերը զնում էր ծուկ քոնում ծովից,  
Պառավն էլ տանը թել մանում բրդից.  
Այսպես միասին՝ մի հին գետնատան,  
Երեսուներեք տարի ապրեցան:

Ահա մեկ օր էլ ծերը զնաց ծով,  
Որ ծուկը որսա իր մաշված ցանցով.  
Նա ուրախ-ուրախ ցանցը ծով ձգեց,  
Առաջին անգամ միայն տիղմ հանեց.  
Երկրորդ անգամը ցանցը ձգեց ծով,  
Ցանցը դուրս եկավ ծովային խոտով.  
Իսկ երրորդ անգամ, որ ցանցը ձգեց,-  
Ո՞վ կարե ասել, թե ի՞նչ դուրս հանեց.-  
Նա բերավ իր հետ մի ոսկի ձկնիկ՝  
Զկանց արքայի դուստրը գեղեցիկ.-  
Ծերի ցանցն ընկավ, իբրև խեղճ զերի,  
Ուկի աղջիկը ծուկ-քազակորի:  
Խե՞ ո՞սկի ձկնիկ, ինչպէ՞ս է խոնդրում,  
Մարդկային լեզվով ծերին աղաշում,  
«Ճո՞ն ինձ, քո՞ն, ծերո՞նկ, քո՞ն ինձ անվտանգ,  
Քեզ կվճարեմ քանիկազին փրկանը,  
Ինչ սիրտդ ուզի, ինչ որ կամենաս,  
Ուղիղն եմ ասում, ինձնից կստանաս»:

Վախեցավ ծերը մնաց զարմացած:  
Նա այնքան տարի ձկնորս էր եղած,  
Բայց ձկան մասին երբեք չի խնի.  
Թե նա մարդու պես կարող է խոսել:  
«Գնա, Տեր ընդ քեզ, - ասաց ծերունին,-



Ինձ հարկավոր չէ փրկանք բանկազին.  
Գնա թեզ համար դու Ծիրանի ծով,  
Ու այստեղ ապրիր ազատ, ապահով»:

Այս դեպքից հետո ծերը տուն դարձավ,  
Պատմեց պառավին, թե ինչ քան տեսավ.  
«Այսօր ես ծովից, զիտե՞ս ինչ, ա՛ կնիկ,  
Բնեցի հանկարծ մի ոսկի ձկնիկ.  
Ոսկի եմ ասում և ոչ քո զիտցած.  
Այսպիսի հրաշք ոչ որ չի տեսած:  
Նա խոսիլ զիտեր ուղիղ մեր լեզվով,  
Աղաշանք արավ, որ ես ձգեմ ծով.  
«Թո՞ղ, ասաց, խնդրեմ, քող ինձ անվտանգ,  
Քեզ կվճարեմ քանկազին փրկանք».  
Բայց ես ոչ մի քան չպահանջեցի,  
Ոչինչ չեմ ուզում, գնա՛, - ասացի, -  
Գնա՞ քեզ համար դու Ծիրանի ծով,  
Ու այնտեղ ապրի ազատ, ապահով»։

Պառավը, երբ որ այս քանը լսեց,  
Խեղճ ալւորին շատ հանդիմանեց,  
Թե ինչո՞ւ ձկնից փրկանը չի ուզել  
Ու այնպես ձրի ետ ծովն է ձգել:  
«ԱՇ ի հիմար, անմիտ, - հայինյեց ծերին, -  
Գոնք կասեիր դու ոսկի ձկնին՝  
Սի նոր տաշտակ տոր տանեմ իմ կնկան,  
Մերը կոտրած է, ել չէ պետքական»...  
Դարձավ ծերունին ծովի ափ զնաց.  
(Տեսավ նա ծովը մեղմիկ ծածանված).  
Ակսեց կանչել ոսկի ձկնիկին.  
Չուկը լողալով՝ մոտեցավ ծերին.  
«Ի՞նչ ես կամենում, ծերովկ», - հարցրեց.  
Ծերը զլուխ տվակ ու պատախանեց.  
«Ողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,  
Ինձ նախատում է իմ պառավ կնիկ,

Հանգիստ չի բռնում խեղճ ալևորիս,  
Վրաս մրգմրում, ուշունց է տալիս.  
Մի նոր տաշտակ է հարկավոր իրան,  
Սերը կոտրած է, էլ չէ պետքական»...  
Ուսկի ձկնիկը ծերունուն խոդաց.  
«Գնա՛, Տեր ընդ քեզ, մի՛ տխրի, - ասաց,-  
Թող քո պառավը շատ չնեղանա,  
Այսօր նա մի նոր տաշտակ կունենա»...

Ետ դարձավ ծերը դեպի իր տնակ,  
Տեսավ կնկա մոտ մի սիրուն տաշտակ.  
Բայց կինը գոհ չէր. նա այս անզամ էլ  
Ակսեց ծերին սաստիկ նախատել.  
«Գնացիր, անխելք, տաշտակ ուզեցիր,  
Ինչո՞ւ մի որիշ բան չխնդրեցիր.  
Էլ մի՛ ուշանար, շոտով ե՞տ դարձիր,  
ԵՎ ոսկի ձկնից մեկ լավ տուն ուզիր»:  
Ծերունին դարձավ ծովի ափ գնաց.  
(Այս անզամ տեսավ ծովը պղտորված).  
Ակսեց կանչել ոսկի ձկնիկին.  
Զուկը լողալով՝ մոտեցավ ծերին.  
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», - հարցրեց.  
Ծերը գլուխ տվակ ու պատասխանեց.  
«Ողորմա՞ծ լինիս, Թագուհի-Ձկնիկ,  
Ինձ շատ նախատեց իմ պառավ կնիկ.  
Գնացիր՝ ասում է՛ տաշտակ ուզեցիր,  
Ինչո՞ւ մեկ սիրուն տուն չխնդրեցիր»:  
Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.  
«Գնա՛, Տեր ընդ քեզ, մի՛ այսրիյ, - ասաց,  
Թող լինի այնպես, ինչպես կամենա,  
Այսօր նա մեկ լավ տուն էլ կունենա»...  
Ծերը ետ դարձավ կրկին դեպի տուն՝  
Էլ նա չգտավ իր իին գետնատուն.  
Մի նոր տուն տեսավ լուսամուտներով,

Կտորից հանած ծխահաններով,  
 Պատ ու վառարան մարուր սվաղած,  
 Կրով ու կավճով սպիտակացրած,  
 Վարպետի տաշած, կաղնի տախտակից,  
 Մեծ դրուն էլ կախած լայն քակի կողմից:  
     Պատուիանի տակ կինն ուռած նստել,  
 Իր չարուրյունից ուզում է տրաբել.  
 Ի՞նչ անեծք ասես աշխարհիքս տակին՝  
 Բոլորն էլ քափեց խեղճ մարդի զլսին.  
 Վերջը՝ երբ փորք-ինչ քարկուրյունն իջավ,  
 Սոռորը կախած՝ ծերունուն դարձավ.  
 «Անշնորիք ծերուկ, տնակ ուզեցիր,  
 Երևի քո մեջ մեծ բան կարծեցիր.  
 Ետ դարձիր, անխելք, ետ դարձիր գնա՝,  
 Ուսի ծկնիկին իմ կողմից ասա,  
 Որ էլ չեմ ուզում մնալ զեղջկուիի,  
 Ուզում եմ լինել մեծ իշխանուի»...

### Պ.

Ծերունին դարձյալ ծովի ափ գնաց.  
 (Այս անգամ տեսավ ծովը վրդովված).  
 Մկնեց կանչել ոսկի ծկնիկին.  
 Չուկը լողալով մոտեցավ ծերին.  
 «Ի՞նչ ես կամենում, ծերուկ», - հարցրեց.  
 Ծերը զլուխ տվակ ու պատասխանեց.  
 «Ողորմա՛ծ լինիս, Թագուիի-Ձկնիկ,  
 Հանգիստ չի տալիս ինձ իմ չար կնիկ,  
 Ել չի կամենում մնալ զեղջկուի,  
 Ուզում է լինել մեծ իշխանուի.  
 Զգիտեմ զլուխն ի՞նչ քամի մտավ,  
 Որ գեղջկուրյունից հանկարծ ձանձրացավ»...  
     Ուսկի ծկնիկը ծերունուն խնդաց.  
 «Գնա՛, Տեր ընդ քեզ, մի՛ տխրիլ, - ասաց, -  
 Ծոյն քո պառավը հենց այսօրվանից  
 Ազատ համարվի իր գեղջկուրյունից»...

Ետ դարձավ ծերը, և ի՞նչ է տեսնում.  
 (Կարծեց ցնորք է աչքին երևում).  
 Մի տուն հոյակապ, վերնասրահում  
 Պառավն է կանգնած ինչպես նոր խանում.  
 Հազին սամույթն քածկոնակ սիրուն,  
 Գլխին դիպակն չարդար գոյնզգույն.  
 Վիզը զարդարած մարզարիտներով,  
 Մատներին մատնիք անզիմ քարերով.  
 Մաշկներն ինչպես կաս-կարմիք որդան,  
 Մյուս հազուտներն էլ մետաքս պատվական:  
 Ծառաներ ունի մի քանի տասնյակ,  
 Բոլորն էլ իրան հլու հպատակ:

Մարդին որ տեսավ՝ պառավը կատդեց,  
 Խեղճ ծառաներին ծեծել սկսեց.  
 (Կարծում էր խեղճը, որ իշխանուին  
 Պետք է որ ծեծե իր ծառաներին).  
 Հայիոյանք քափեց ամների վրա,  
 Տեղի-անտեղի քորկեց անխնա.  
 Սնկի մազերից քոնեց քաշքչեց,  
 Մյուսին էլ մի լավ ապառակներ զարկեց:

Ծերը մոտեցավ դող-դող քայլերով՝  
 Ասաց պառավին՝ խոր զլուխ տարլով.  
 «Բարով գերազնիկ խանում-խարունիս,  
 Հիմա խոս գո՞՞ն ես, հանգի՞ստ կիմնիս»...  
     Պառավ տիկնիղ այնպես բդավեց,  
 Որ խեղճաներունու լեղին պատառեց.  
 Նրան հրամայեց, որ խսկույն գնա  
 Գոմն ավել, քերե ու այնտե՛ղ մնա...

### Ե

Մեկ-երկու շաբար հազիկ անց կացավ,  
 Պառավ խանումը նորից կատդեցավ.  
 «Ծուտ կանես կերպաս, - ասում է մարդին, -  
 Ու իմ կողման կասես ծկնիկին,  
 Որ էլ չեմ ուզում տիկնուրյուն անել,

Ուզում եմ ազատ քագուիի լինել»...

Այս խոսքի վրա ծերունին սոսկաց,  
Եվ աղաշելով պառավին ասաց.

«Գծվել ես, ա՛ կնիկ, ես չեմ հասկանում,  
Արդյոք դու գիտե՞ս ինչ ես ցանկանում.

Մեկ նայիր վրայ, շենք ու շնորհիդ,  
Լրիան լեզվիդ, ծուռումուր քայլիդ,

Այսր ի՞նչ ունիս քագուիու վայել,  
Որ խելքիդ այդպես քամի է փշել.

Արի լսի՞ր ինձ, մի՛ ամիլ այդպես,

Ամբողջ աշխարհին կծիծաղացնես»...

Ել չհամբերեց մեր պառավ տատը,  
Որ վերջացներ մարդն իր խրատը.

Նա այնպես զորաց, այնպես որոտաց,  
Որ ամբողջ տունը իհմնովին քնդաց.

«Ինչպե՞ս թե այդպե՞ս, հանդո՞ւզն ստահակ», -  
Գոչեց ու զարկեց մի ուժգին ապտակ,

«Համարձակվո՞ւմ ես, զոեիկ անգետ,  
Վիճել վեհանձն իշխանութուս հետ.

Քեզ հրամայում եմ պատվավոր խոսրով,  
Որ իսկոյն զնաս քո հոժար կամքով,

Երեւ ոչ ահա ժողովված կշտիդ,  
Սրանք կտանեն՝ խիելով վզիդ»:

Ծերունին դարձյալ ծովի ափ զնաց.  
(Այս անզամ տեսավ ծովը սևացած).

Սկսեց կանչել ոսկի ձկնիկին,  
Զուկը լողալով՝ մոտեցավ ծերին.

«Ի՞նչ ես կամենում, ծերո՞ւկ», - հարցրեց.  
Ծերը զորիս տփավ ու պատասխանեց.

«Ողորմած լինիս, Թագուիի-Ձկնիկ,  
Ելի է կրովում իմ պառավ կնիկ.

Ներիր ինձ, խնդրեմ, ես ամաչում եմ,  
Որ շար պառավիս նոր ուզածն ասեմ.

Քայց ո՞ր ջորճ ընկնիմ, հանգիստ չի բողնում,  
Կրակն է օցել, այրում, խորովում.

Գնա՛, ասում է, - ա՛խ, նզովյա՛ կին, -  
Ծո՛ւտ զնա, ասա՛ ոսկի ձկնիկին,

Որ էլ չեմ ուզում տիկնուրյուն անել,  
Ուզում եմ ազատ քագուիի լինել»...

Ուսկի ձկնիկը ծերունուն խղճաց.  
«Գնա՛, Տեր ընդ քեզ, մի՛ տիսրիլ,- ասաց, -

Թող քո պառավի ուզածը լինի,  
Թող զնա դառնա ազատ քագուիի»:



Ո՞վ կարե պատմել, թե ծերն ինչ տեսավ,  
Երբ ձկան մոտից տուն վերադարձավ.

Ել ի՞նչ տուն, ի՞նչ քան, դու արքայական  
Ապարանք ասա, կամ հսկայական

Մեծ-մեծ պալատներ շարեշար կանգնած՝  
Բարձր բուրգերով չորս կողմը պատած,

Ծրեղ դահիճներ, անրիվ սենյակներ,  
Մարդ կշշկվեր, երեւ մեջն ընկներ:

Ծերը բարձրացավ մարմար սանդրտըռվ,  
Մի դահիճ մտավ խիստ պատկառանը.

Առջև բացվեց մի նոր տեսարան,  
Երբ այստեղ գտավ իր պառավ կնկան.

Նա իմա ազատ քագուի դառած՝  
Առոր ու փառոր ճաշի է նստած.

Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու թեզեր  
Ուի են կանգնած որպես ծառաներ.

Թագուիու համար զինի են ածում  
Եվ ահուդողվ աչք-ունքին նայում.

Ծեմքում կանգնել են ահեղ զինվորներ.  
Ուսերին բռնած կացնածև սրեր.

Մենակ պառավն էր սեղանին քազմել,  
Ո՞վ կիանդգներ նրա հետ նստել.

Բայց կերակուրներ այնքան շատ էին,  
Որ հարյուր հոգի կկշտացնեին.

Եվ քանի՛ տեսակ անծանոք քաներ,  
Ի՞նչ անուշեղեն, ի՞նչ տապականեր...

Պառավն ուտում էր մեծ ախորժակով,

Ու գիճին դարտկում լիքը բաժակով.  
 Վերջն էլ մեղրահա կերպ բավական,  
 Որ բաղցրացնե շրունք ու բերան:  
 Ծերն այս տեսնելով՝ մնաց շփորփած,  
 Ընկավ պառավի ոտքերն ու ասաց.  
 «Բարո՞վ քեզ, բարո՞վ, ահեղ բագուիի,  
 Քո մեծությունը հավիտյա՞ն լինի»:  
 Այս խոսքից հետո կամաց շշնչաց  
 Ու փսփալով պառավին հարցրեց.  
 «Հիմա որ բախտի վերին ծայրումն ես,  
 Խոմ բավակա՞ն ես, ա՛ կնիկ, ի՞նչ կասես»:  
 Թագուիի դառած պառավն այս անգամ  
 Մարդի երեսին շնայեց անգամ.  
 Հրաման մոռնաց նա քրի տակին,  
 Որ դորս վոնդեն մեր անկոչ հյուրին:  
 Հենց որ խվեցավ բագուիու իրաման,  
 Հնազանդ երևալ ամենքն ուզեցան.  
 Մեծ-մեծ իշխաններ, խաններ ու քեզեր,  
 Ինչպես որսորդի արնախում շներ,  
 Խփելով ծերի շներակորին:  
 Ծերեղ դահիլիցից դորս վոնդեցին.  
 Շեմքումը կանգնած պահապաններն էլ  
 Իրանց կացիններն էին պատրաստել.  
 Վրա վազեցին ամենքը մեկեն,  
 Ու քիչ մնաց որ՝ խեղճին խոդիսողեն:  
 Ինչպես որ եղավ, մի կերպ դորս պրծավ,  
 Դորսն էլ ամբոխի ծաղրի տակն ընկավ,  
 Որ կարծես նրան լիներ սպասում  
 Անձրիի տակին՝ ցեխոտ փողոցում.  
 - «Ա՞յ քե լավ արին, ծերո՞ւկ, դու անգետ.  
 Ո՞ւմ հետ ես մեկնում անձոռնի ոտներդ,  
 Թող այդ քեզ համար լինի լավ խրատ,  
 Որ էլ չցանե՞ս մանր կտավատ»...

Ե

Այս դեպքից հետո շատ օրեր չանցան,  
 Պառավի այծերն էին մոտ եկան.  
 Ուղարկում է նա իր իշխաններին,  
 Որ գտնեն քերեն արտաքած ծերին:  
 Եկավ ծերունին: Պառավն սկսեց.  
 «Դու պետք է գնաս ձկան մոտ, - ասաց, -  
 Կերքաս խոր գլուխ կտաս դու նրան  
 Ու իմ փափաքը կհայտնես իրան.  
 Կասես՝ չեմ ուզում մնալ բագուիի,  
 Ուզում եմ լինել ծովի տիրուիի.  
 Ուզում եմ օվկիան ծովումը կենալ,  
 Ուկի ձկնիկին ծառա ունենալ,  
 Որ իմ իրամանին միշտ պատրաստ լինի,  
 Եվ ինչ ուզենամ, խկույն կատարի»...  
 Պառավին լսեց ծերը լուր ու մուշ,  
 Առանց հայտնելու որևէ տրոտունչ:  
 Ծերունին դարձյալ ծովի ափ գնաց.  
 (Այս անգամ ծովը խիստ էր փորորկված.  
 Փրփրած ալիքներ սարեր դառնալով՝  
 Իրար են զարկվում՝ ահեղ գոռալով).  
 Ողբածայն կանչեց ուկի ձկնիկին.  
 Զոկը լողալով՝ մոտեցավ ծերին,  
 «Ի՞նչ ես կամենում, ծերո՞ւկ», - հարցրեց.  
 Ծերը զլուխ տվավ ու պատասխանեց.  
 «Ողորմած լինիս, թագուիի-Ձկնիկ,  
 Իսպառ զմկել է իմ պառավ կնիկ.  
 Ի՞նչ անեմ արյոց այդ նզովյալին,  
 Մինչև ե՞րբ տանջվիմ բավրադի ձեռին.  
 Էլ չի կամենում բագուիի լինել,  
 Այլ տես, անիծածն ի՞նչ է միտք արել՝  
 Իշխել է ուզում բոլոր ջրերին  
 Ու իշխանուիի դառնալ ծովային.  
 Ուզում է օվկիան ծովումը կենալ,  
 Ուկի ձկանդ ծառա ունենալ,  
 Որ իր իրամանին միշտ պատրաստ կենաս,  
 Ու ինչ ուզենա, շուտ կատարում տաս»...

Ոսկի ծկնիկը լոռ ու մունջ լսեց,  
 Բայց էլ ծերունուն շպատասխանեց.  
 Չքի երեսին շրմիեց պոչով  
 Ու անցավ, գնաց դեպի խորին ծով...  
 Շատ մնաց ծերը և շատ նայեցավ,  
 Բայց ոսկի ծկնիկն էլ չերևաց.  
 Դարձավ զլիսիկոր, որ հայտնե կնկան,  
 Թե ի՞նչ փորձանքի մեջ զցեց իրան...  
 Եվ գնաց, տեսավ... (բայց ի՞նչ տեսնի լավ.  
 Որ արդար լինի և ոչ անիրավ).  
 Հին խորի շեմքում պառավը նստած,  
 Կոտրած տաշտակը առջև ն ընկած...

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՁԵՐ

- Հերիարք համառոտ պատմի՞ր:
- Հերիարի առանձին մասերը վերնազրի՞ր:
- Պատմի՞ր ծեր ծկնորսի մասին՝ հաստատելով ասածներդ համապատասխան տողերով:
- Բնուրազրի՞ր պառավ կնոջը:
- Ըստ կարծիքով, ինչո՞ւ պառավը միանգամից շուգեց ծովերի բազուիի դասնալ:
- Ինչպե՞ս պատճեց պառավը: Իսկ զու ինչպե՞ս կպատմեիր պառավին կամ զուց չէի՞ր պատմի:
- Դո՞ւս զրիք հերիարին համապատասխան առածներ:
- Ի՞նչ կապ ես տեսնում ծովի տրամադրուրյան եւ ինտո կատարվող դեպքերի միջև:
- Հերոսներին բեր մեր ժամանակները և նոր հերիար զրի՞ր:
- Հերիարից դո՞ւս զրիք դարձվածքները և բացատրի՞ր:
- Նամակ զրիք ծեր ծկնորսին:

## ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

### II

Առյուծ Սիերը, զարմով դյուցազուն,  
 Քառասուն տարի իշխում էր Սասուն.  
 Իշխում էր ահեղ, ու նրա օրով  
 Հավըն էլ չէր անցնում Սասմա սարերով:  
 Սասմա սարերից շատ ու շատ հեռու  
 Թնդում էր նրա հոչակն ահարկու,  
 Խոսվում էր իր փառքն, արարքն անվեհեր,  
 Հազար բերան էր - մի Առյուծ-Սիեր:

### III

Էսպես, ահավոր առյուծի նման,  
 Սասմա սարերուն նստած էր իշխան  
 Քառասուն տարի: Քառասուն տարուն  
 «Ա՛յ» չէր քաշել նա դեռ իրեն օրուն.  
 Բայց իիմի, երբ որ եկավ ծերացավ,  
 Են անահ սիրտը ներս սողաց մի ցավ:  
 Սկսավ մտածել դյուցազուն ծերը.  
 - Հասել են կյանքին աշնան օրերը,  
 Շուտով ու հողին կերրամ ես գերի,  
 Կանցնի ծխի պես փառքը Սիերի,  
 Կանցնեն և անուն, և՝ սարսափ, և՝ ահ.  
 Իմ անտեր ու որք աշխարհի վրա  
 Ոտի կկանգնեն հազար քաջ ու դի...  
 Մի ժառանգ չունեմ իմ անցման ետև  
 Իմ բոլոր կապի, Սասուն պահպանի...  
 Ու միտք էր անում հսկան ծերունի:

### IV

Մի օր է՛ էն գորշ հոնքերը կիտած  
 Երբ միտք էր անում, երկնքից հանկարծ  
 Մի հոլ-հրեղեն հայտնվեց բաջին,  
 Ոտները ամպոտ կանգնեց առաջին:

- Ողջու՛ յն մեծագոր Սասմա հսկային.

Քու ծենը հասակ աստծու զահին,

Ու շոտով նա քեզ մի զավակ կտա:

Բայց լավ իմանաս, լեռների՝ արքա,

Որ օրը որ քեզ ժառանգ է տվել,

Են օր կմեռներ՝ քու կինն էլ, դու էլ:

- Իր կամքը լինի, - ասավ Սիերը, -

Մենք մահինն ենք միշտ ու մահը մերը,

Բայց որ աշխարհում ժառանգ ունենանք,

Մենք էլ նրանով անմեռ կմնանք:

Հրեշտակն էստեղ ցոլացավ նորից,

Ու էս երջանիկ ավետման օրից

Երք ինը ամիս, ինը ժամն անցավ,

Առյուծ-Սիերը զավակ ունեցավ:

Դավիր անվանեց իրեն կորյունին,

Կանչեց իր ախպեր Զենով Օհանին,

Երկիրն ու որդին ավանդեց նրան,

Ու կինն էլ, ինքն էլ էն օրը մեռան:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐՄՆՁՆԵՐ

- Գտի՞ր կյանքի դաժան օրերը, ծխի պես անցնել, հոր-երեղեն, ամպոտ ոտներ, զարմով դյուցազուն, ավանդել, իր կամքը լինի, անմնող մնալ բաներն ու արտահայտությունները եւ բացատրի՛ք:
- Դուքս զրիք Սիերին վերաբերող տողներն ու բառակապարզությունները:
- Ենչո՞ւ Սիերը ընդունեց «հոր-երեղենի» առաջարկը. կարծիքը իմնափորիք:
- Առյուծ-Սիերի անոնից պատմի՛ք այս հատվածը:

## IV

Էս դարում Մար անհաղոր ու հզոր

Սյրա-Մելիքն էր նստած բազավոր:

Հենց որ իմացավ՝ էլ Սիեր չկա,

Վեր կացավ կովով Սասունի վրա:

Զենով Օհանը ահից սարսափած՝

Թշնամու առաջն ելավ զլսարաց,

Աղաշաճը արավ, ընկավ ոտները.

- Դու՛ եղիք, - ասավ, - մեր զլիսի տերը,

Ու քու շվարում քանի որ մենք կանք,

Քու ծառան լինենք, քու խարջը միշտ տանք,

Սիայն մեր երկիր քարուքանդ շանես

Ու քաղցր աշբով մեզ մտիկ անես:

- Զե՞ւ, - ասավ Սելիք, - քու ամբողջ ազգով

Անց ախտի կենաս իմ քրի տակով,

Որ էգուց-էլօր, ինչ էլ որ անեմ,

Ոչ մի սասունցի քուր չառնի իմ դեմ:

Ու զնաց Օհան՝ բոլոր-բովանդակ

Սասունը բերավ, քաշեց քրի տակ,

Սևնակ Դավիլը, ինչ արին-շարին,

Սուտ շեկավ դուշման Սելիքի քրին:

Եկան բաշեցին՝ քեզ զոռով տանեն,

Թափ տփավ, մարդկանց զցեց դես ու դեն.

Փոքրիկ ձկույրը մի քարի առավ,

Ապառած քարից կրակ դուրս քռավ:

- Պետք է սպանեմ ևս փոքրիկ ծուղին, -

Ասավ բազավորն իրեն մեծերին:

- Թագավոր, - ասին, - դու կարան հզոր,

Թրիդ տակին. է ողջ Սասունն էսօր.

Ի՞նչ պետք է անի քեզ մի երեխա,

Թեկուզ իր տեղով հենց կրակ դառնա:

- Դու՛ր զիտեր, - ասավ Սյրա բազավոր, -

Բայց քեզ իմ զլիսին փորձանք զա մի օր,

Էս օրը վկա,

Սրանից կզա:

## V

Էս որ պատահեց, մեր Դավիթ հսկան  
Սի մանուկ էր դեռ յոր-ուր տարեկան,  
Մանուկ եմ ասում, քայլ էնքան ուժեղ.  
Որ նրա համար թե մարդ - թե մժեղ:  
Քայլ վա՞յ խեղճ որքին աշխարհի վրա,  
Թեկուզ Առյուծի կորյուն լինի նա:

Չենով Օհանին ուներ մի շար կին:  
Մին-երկու լոեց, մի օր էլ կարգին  
Իրեն մարդու հետ սկսավ կռվել.  
-Ես մենակ հոգի, հազար ցավի տեր,  
Ինչ ես ուրիշի երիմը բերել,  
Նստեցրել գլխիս պարապ հացակեր...  
Հո՞դեմ զոյլսր... ես գերի հո չե՞մ.  
Ամենքի քեֆի ետևից բռչեմ...  
Սի կուռ կորցրու՛; կարգի՞ր մի քանի,  
Գնա իր համար աշխատանք անի...  
Ու հետն սկսավ ողբալ ու կոծել,  
Իր օրը սգալ, իր քախտն անիծել,  
Թե անրախտ եղավ աշխարքի միջում,  
Ոչ մի տեր ունի, ոչ մարդն է խղճում...  
Գնաց Օհանը երեխի ոսի  
Սի զոյզ ունաման բերավ երկարի,  
Երկարի մի կոռ շալակին դրած,  
Ու արավ Սասմա քաղքի զառնարած:

## VII

Քշեց զառները մեր հովիկ հսկան,  
Ելավ Սասոնի սարերն աննման.  
- Ե՛յ, ջան սարե՛ր՝  
Սասմա սարե՛ր...  
Որ կանչեց, նրա ձենից ահավոր  
Դղորդ-դմրդմբոցն ընկավ սար ու ձոր,  
Վայրի զազաններ բներից փալսան,  
Քարերար ընկան, դատարկուն եղան:  
Դավիթը ընկավ նրանց ետևից,

Որին մի սարից, որին մի ձորից -  
Աղվես, նապաստակ, զել, եղնիկ բռնեց,  
Հավաքեց, բերավ, զառներին խառնեց,  
Իրիկվան քշեց ողջ Սասմա քաղաք:  
Կաղկա՛նձ ու ոռնո՛ց, աղմո՛կ, աղաղա՛կ...  
Քաղրցից հանկարծ մին էլ էն տեսան:  
Գալիս են իրես անհամար զազան.

«Վա՞յ, հարա՞յ, փախսե՞ք...»:  
Մեծեր, երեխեր  
Սրտաճար եղած,  
Գործները բողած,  
Որք առն ընկավ, ո՞րը ժամ, խանուր,  
Ու ամուր փակեց դուռն ու լուսամուռ:  
Դավիթը եկավ, կանգնեց մեյդանում.  
-Վա՞հ, էս մարդիկը ի՞նչ վաղ են քնում.  
Հե՞յ ուղաստեր, հե՞յ զառնաստեր,  
Ելե՛ք, շուտով քացեք դռներ.  
Ով մինն ուներ - տասն եմ բերել,  
Ով տասն ուներ - քասն արել...  
Շուտով եկե՛ք, եկե՞ք, տարե՞ք,  
Զեր զառն ու ով զոմերն արեք:  
Տեսավ՝ չեն զալի, դուռ չեն քաց անում,  
Ինըն էլ մեկնվեց քաղքի մեյդանում,  
Գլուխը դրավ մի քարի՝ մնաց,  
Ու մուշ-մուշ ընեց մինչև լուսաբաց:  
Լուսին իշխաններ եղան միասին,  
Գնացին Զենով Օհանին ասին.  
-Տո՛ Զենով Օհան, տո՛ մահի տարած,  
Էս խենը բերիր, արիր զառնարած,  
Ոչ զառն է ջոկում, ոչ զելն ու աղվես,  
Գազանով լցրեց մեր քաղաքն էսպես,  
Աստված կսիրես դիր ուրիշ քանի,  
Թե չէ էս խալսին լեղաճար կանի:

## VIII

Ելավ Օհանը, Դավիթ մոտ գնաց.  
-Հորեղբայր Օհան, հեռո՛ եկ, կամա՛ց,

Ուկեր կփախչեն: Մին էլ էնտեղից  
 Սի բող նապաստակ, ականջները ցից,  
 Խրտնեց ու ահից դուրս պրծավ հաճկարձ:  
 Դավիթն էր. ելավ, ետևից ընկած  
 Են սարք քշեց, ետ քերավ էս ձոր,  
 Քերավ, ուլերին խառնեց նորից նոր:  
 -Օ՞ք, ի՞նչ դժվար է, հորեղբայր Օհան.  
 Աստված օյննել է են սև-սև ուկեր,  
 Ամա բոզալուկ էս ուկեր, որ կան,  
 Փախչում են, ցրվում ողջ սարերմ ի վեր.  
 Էնքան եմ երեկ վազել, չարչարվել,  
 Մինչև հավաքել ու տուն եմ քերել...  
 Նայեց Օհանը, որ Դավիթի հազին  
 Ունաման ջի էլ մնացել կարզին,  
 Մահակն էլ մաշվել, մինչ բուռն է հասել,  
 Մի օրվա միջում էնքան է վազել  
 -Դավիթ ջան, - ասավ, - չեմ բողնի էսպես,  
 Բոզալուկ ուկեր չարչարում են քեզ.  
 Էզուց նախիրը կտանես արոտ:  
 Ասավ Օհանը ու մյուս առավոտ  
 Գնաց, նորից նոր մեր Դավիթի ոտի  
 Մի ջուխտ նոր տրեխս քերավ երկարի,  
 Երկարի մի կոռ հարյուր լրական  
 Ու շինեց Սասմա քաղրի նախրապան:

### VIII

Քշեց նախիրը մեր նախրորդ հսկան,  
 Ելավ Սասունի սարերն աննման:  
 «Ե՞յ, ջան սարեր,  
 Սասմա սարե՞ր,  
 Ի՞նչ անուշ է  
 Զեր լանջն ի վեր...»  
 Որ կանչեց, նրա ձենից ահավոր  
 Դ-դորդ-դմրդմրոցն ընկավ սար ու ձոր:  
 Վայրի գազաններ բներից փախսան,  
 Քարեքար ընկան, դատարկուն եղան:  
 Դավիթն էր. ընկավ նրանց ետևից,

Որին մի սարից, որին մի ձորից,  
 Գել, ինձ, առյուծ, արջ, վազը բռնեց,  
 Հավաքեց, քերավ, իր նախրին խառնեց  
 Ու առաջն արավ դեպ Սասմա քաղաք:  
 Ունո՞ց, մոնջու՞ն, աղմու՞կ, աղաղա՞կ...  
 Վախսկոտ քաղցիք մին էլ ի՞նչ տեսան,  
 Հենց քաղրի վրա անհամար զազան...  
 «Վա՞յ, հարա՞յ, փախսե՞ք...»  
 Սեծեր, երեխեր  
 Սրտաճար եղած,  
 Գործները քողած  
 Փախսան, ներս ընկան տուն, ժամ կամ խանուր,  
 Ամոր փակեցին դուռն ու լուսամուտ:  
 Դավիթը եկավ կանզնեց մեյդանում.  
 - Վա՞հ, էս քաղցիք ի՞նչ վաղ են քնում:  
 Հե՞յ կովատեր, ին՞յ զոմշատեր,  
 Ելե՞ք, շուտով քացեք դոներ,  
 Ով մինն ուներ - տասն եմ քերել,  
 Ով տասն ուներ - քասն արել:  
 Շուտով ելե՞ք, եկե՞ք, տարե՞ք,  
 Զեր եզն ու կով զոմերն արեք:  
 Տեսավ՝ չեն զալի, դուռ չեն բաց անում,  
 Ինքն էլ մեկնվեց քաղրի մեյդանում,  
 Գլուխը դրավ մի քարի, մնաց,  
 Ու մուշ-մուշ քնեց մինչ լուսաբաց:  
 Լուսին իշխաններ եկան միասին,  
 Գնացին Ձենով Օհանին ասին.  
 -Ամա՞ն, քեզ մատադ, այ Օհան ախապեր,  
 Սեր եզն ու մեր կով քող մնան անտեր,  
 Միայն սրանից ազատ արա մեզ:  
 Ոչ արջն է ջոկում, ոչ գոմեշն ու եզ,  
 Մի օր էս քաղցին փորձանք կրերի,  
 Արցերոց կանի, կտա կավերի:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Պատմիք այս հատվածը:
2. Կարդա՛ Մելիքին բնուրագրող տողերը: Համեմատիք նրան Միերի հետ:
3. Բնուրագրիք Զենով Օհանին՝ օգտվելով համապատասխան բառերից ու արտահայտություններից:
4. Գտիք այն տողերը, որտեղ երեսում է մանոկ Դավիթի աշխարհական աշխարհը:
- 5) Ճայմք
- 6) Ճառարյունք
- 7) Ճիամտորյունք:
5. Ինչո՞ւ Մելիքը Դավիթին «ծուռ» անվանեց:
6. Նկարագրիք զառնարած և նախրապան Դավիթի հագուստը:
7. Բնուրագրիք Դավիթին:
8. Թվարկիք եկրոսմերին և բնուրագրիք նրանց դիպուկ բառերով:
9. Դու՞րս գրիք կրկնվող հատվածները, ցույց տուր փոփոխությունները (Երե կամ) և բացատրիք կրկնվող հատվածների նշանակությունը:
10. Դու՞րս գրիք դարձվածքները և բացատրիք:
11. Մի բնակչի անոնից պատմիք Դավիթի նախրապանության մասին:

## IX

Դավիթ չղառավ, մի կրակ դառավ:  
Ճարը կտրված՝ Օհանը բերավ  
Նետ-աղեղ շինեց ու տվավ իրեն:  
Գնա, որս անի սարերի վրեն:  
Դավիթ նետ-աղեղն առավ Օհանից,  
Հեռացավ Սասման քաղը սահմանից  
Ու դառավ որսկան: Գնաց, մի կորկում  
Լոր էր սպանում, ճնճղուկ էր զարկում,  
Մրանը զնում իրեն հոր ծանոր  
Աղբատ, անորդի, մի ծեր կնկա մոտ,

Վիշապի նման, երկար, ահազին  
Սնկնվում, բնում կրակի կողքին:  
Մի օր էլ, երբ որ իր որսից դարձավ,  
Պառավը վրեն սաստիկ բարկացավ.  
-Վա՛յ Դավիթ, - ասավ, - մասս տաճի քեզ,  
Դու՞ պետք է էն հոր զավակը լինե՞ս:  
Զետից ու ոտից ընկած մի ծեր կին -  
Ես եմ ու էն արտն աստծու տակին,  
Ինչո՞ւ ես զնում, տափում, տրորում,  
Իմ ամբողջ տարվան ապրուստը կտրում:  
Թե որսկան ես դու - նետ-աղեղի առ,  
Ծծնակա զլսից մինչև Սեղանասար  
Քու հերը ծերիմ մի աշխարհ ուներ,  
Որսով մեջը լի որսի սար ուներ.  
Եղնիկ կա էնտեղ, այծյամ ու պախրա.  
Կարո՞՞ն ես - զնա, էնտեղ որս արա:  
- Ի՞նչ ես, այ պառավ, էլ ինձ անհծուն.  
Ես զահի եմ դեռ, ես նոր եմ լսում:  
Ո՞րտեղ է հապա սարը մեր որսի...  
- Գնա՛, հորեղբայրդ՝ Օհանը կասի:

## X

Հորեղբոր շեմքում մյուս օրը ծեզին  
Դավիթը կանգնեց աղեղը ծեռքին:  
-Հորեղբայր Օհան, ինչո՞ւ չես ասել  
Իմ հերը որսի սար է ունեցեն,  
Այծյամ կա էնտեղ, եղջերու, կլստար.  
Վեր կաց, հորեղբայր, տար ինձ որսասար:  
-Վա՛յ, - կանչեց Օհան, - Էղ քու խոսր չէր,  
Էղ ով քեզ ասավ, լեզուն պապանձվեր:  
Էն սարը, որդի՛, զնաց մեր ծեռից,  
Էն սարի որսն էլ զնաց էն սարից,  
Էլ չկան այծյամ, եղջերու, կլստար:  
Քանի լուսեղեն քու հերը դեռ կար,  
(Ե՛յ գիղի օրեր - ո՞րտեղ եր կորել),  
Ես շատ եմ լատեղ որսի միս կերել ...  
Քու հերը մեռավ, աստված խոռվեց,

Մսրա բազավոր զորքեր ժողովեց,  
Եկավ, մեր երկիր բարուրանդ արավ,  
Էս սարի որսն էլ բալանեց, տարավ.  
Եղնիկը գնաց, եղջերուն գնաց...  
Մեր զիրն էլ հալքար էղպես էր զրած:  
Անցել է, որդի, քո բանին գնա,  
Մսրա բազավոր ձենդ կիմանա...  
- Մսրա բազավոր ինձ ի՞նչ կանի որ...  
Ես ինչ եմ հարցնում Մսրա բազավոր.  
Մսրա բազավոր բող Մսր կննա,  
Իմ հոր սարերում ինչ զործ ունի նա...  
Վեր կաց, հորեղքայր, նետ-աղեղդ առ,  
Կապարճ կապի՛ր, գնանք որսասար:  
Ելավ Օհաննը ճարք կտրված,  
Գնացին տեսան՝ էլ ի՞նչ որսասար.  
Անտառը ջարդած, պարխապն ավերած,  
Բուրգերը արած գետնին հավասար...

## XXI

Գիշերը հասավ, մնացին էնտեղ:  
Զենով Օհանն էր, իր նետն ու աղեղ  
Դրավ զլսի տակ, հանգիստ խոմփաց.  
Դավիրը մնաց մտքի ծովն ընկած:  
Մին էլ նկատեց, որ մուրը հեռվում  
Մի թեժ, փայլփուն կրակ է վառվում:  
Էն լուսը բռնած՝  
Վեր կացավ, գնաց,  
Գնաց ու գնա՞ց, բարձրացավ մի սար,  
Բարձրացավ, տեսավ մի մեծ մարմար բար  
Կիսից պատոված,  
Ու միջից վառված  
Քիսում է լուսը պա՞րզ, բուլա-քուլա՝,  
Բարձրանում, իշնում ետ քարի վրա:  
Վար իշավ Դավիր էնտեղից կրկին,  
Վար իշավ, կանչեց Զենով Օհաննի.  
- Ե՛լ հորեղքայր, բանի՞ քննս,  
Ե՛լ էն պայծառ լուսը մի տես:

Լուս է իշել բարձր սարին,  
Բարձր սարին, մարմար բարին:  
Ե՛լ, հորեղքայր, անուշ քնից.  
Էն ի՞նչ լուս է բխում բարից:  
Ելավ, խաչ բաշեց Օհանն երևին.  
- Ե՛յ, որդի, - ասավ, - մեռնեմ իր լուսին,  
Էն մեր Մարուրա սարն է զորավոր:  
Էն լուսի տեղը կանգնած էր մի օր  
Սասմա պավեն, Սասմա պահապան  
Մեր սուրբ Տիրամոր վաճրը Չարխափան:  
Մշտական, երբ որ կռիվ էր զնում,  
Էնտեղ էր քո հերն իր աղորքն անում:  
Քու հերը մեռավ, աստված խոռվեց,  
Մսրա բազավոր զորքեր ժողովեց,  
Մեր վանքն էլ եկավ քանդեց էն սարում,  
Բայց դեռ սեղանից լուս է բարձրանում...

## XII

Դավիրը էս էլ երբ որ իմացավ,  
- Անուշ հորեղքայր, հորեղքայր, - ասավ, -  
Որք եմ ու անտեր աշխարհի վրա,  
Հեր չունեմ՝ դու ինձ հերություն արա՛:  
Էլ չեմ իշնի ևս Մարուրա սարից,  
Մինչև չշինեմ մեր վաճրը նորից:  
Քեզանից կուգեմ իշնաց հարյուր վարպետ,  
Հինգ հազար բանվոր մշակ նրանց հետ,  
Որ զա՞ն էս շարար կանգնեն ու բանեն,  
Առաջվան կարգով մեր վաճրը շինեն:  
Գնաց Օհանն ու թերավ իր հետ  
Հինգ հազար բանվոր, իշնաց հարյուր վարպետ:  
Վարպետ ու բանվոր եկան կանգնեցին,  
Չըրլսկ հա ըրըլսկ նորից շինեցին,  
Առաջվան կարգով, փառորվ փառավոր  
Բարձր Մարուրա վաճրը Տիրամոր:  
Ցրված միաբանք ետ նորից եկան,  
Նորից բնդացին աղորք, շարական.  
Ու երբ շեն արավ հոր վաճրը նորից,  
Ցած իշավ Դավիր Մարուրա սարից:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՁԵՐ

1. Գտի՞ր կրակ դառնալ, ճարր կտրված, վիշապի նման, ապրուսը կտրել, լուսեղեն, մարի ծովն բնկած, շեն անել, հայրաքաներն ու արտահայտորյունները եւ բացատրի՞ր:
2. Ալանձնացրո՞ւ բոլոր միջադնավերը:
3. Պատմի՞ր որսկան Դավիթ մասին:
4. Կարդա՛ արտատեր պառավի հանդիմանուրյունը: Ինչպիսի՞ն է պառավը քո կարծիքով:
5. Դու՞րս գրիր պառավին բնուրագրող բառերն ու արտահայտուրյունները:
6. Ի՞նչ իմացար որսասարի մասին:
7. Դավիթ անունից պատմի՞ր Չարխափան վանքի մասին:
8. Կարդա՛ Դավիթին բնուրագրող հատվածները:

## XIII

Համբավը տարան Մսրա Սելիքին.  
 - Հապա՛ չես ասիլ՝ Դավիթը կրկին  
 Հոր վանքը շինել, իշխան է դառել,  
 Դու օխտը տարվան խարջը չես առել:  
 Սելիք զայրացավ. -  
 Գնացե՛ք, ասավ,  
 Բաղին, Կողբաղին,  
 Սյուղին, Չարխափին,  
 Սասմա քար ու հող տակն ու վեր արեք,  
 Իմ օխտը տարվան խարաջը թերեք:  
 Քառոսուն կույս աղջիկ թերեք արմադան,  
 Քառոսուն կարծ կնիկ, որ երկանք աղան,  
 Քառոսունն է երկար, որ ուղտոնք բառնան,  
 Իմ տանն ու դուն դարավաշ դառնան:  
 Ու Կողբաղին առավ գորքեր.  
 - Գլուխի՛ս վրա, - ասավ, - իմ տեր.  
 Գնամ հիմի քանդեմ Սասուն,

Կանայց թերեմ քառոսուն-քառոսուն,  
 Քառոսուն թեռնով դեղին ոսկի,  
 Տեղը ջնջեմ հայոց ազգի:

Ասավ, Մսրա աղջիկ ու կին  
 Պար բոնեցին ու երգեցին.  
 - Մեր Կողբաղին զնաց Սասուն,  
 Կանայց թերի քառոսուն-քառոսուն,  
 Քառոսուն թեռնով ոսկի թերի,  
 Մեր ճակատին շարան շարի,  
 Կարմիր կովեր թերի կրան՝  
 Գարնան շինենք եղ ու չորքան:  
 Զա՛ն Կողբաղին, քաջ Կողբաղին,  
 Սասմա Դավիթին զարկեց գետին:  
 Ու Կողբաղին փքված, ուռած,  
 - Ընորհակալ եմ, քույրեր, - զոռաց, -  
 Սինչև զալս դեռ համբերեք,  
 Էն ժամանակ պիտի պարեք...

## XIV

Էսպես երգով,  
 Զոռով-զորքով  
 Գոռ Կողբաղին մտավ Սասուն.  
 Օհան լսեց՝ կապվեց լեզուն:  
 Աղ ու հացով,  
 Լաց ու բացով  
 Առաջն ելավ,  
 Խնդիրք արավ.  
 - Ինչ որ կուզես՝ առ, տա՛ր, ամա՛ն,  
 Վարդ աղջիկներ, կանայց Սասման,  
 Դառը դադած դեղին ոսկին,  
 Սիայն թե զքա մեր խեղճ ազգին,  
 Մի՛ կոտորիիր, մի՛ տար մահու,  
 Վերև աստված, ներքի ը՛ դու...  
 Ասավ, թերավ շարան-շարան  
 Վարդ աղջիկներ, կանայց Սասման:  
 Ու Կողբաղին կանգնեց, ջոկեց,



Մարազն արավ, դուռը փակեց,  
Քասուն կույս աղջիկ, սիրուն, արմադան,  
Քասուն կարծ կնիկ, որ երկանք աղան,  
Քասուն էլ երկար, որ ուղտեր բառնան,  
Մսրա Սելիքին դարավաշ դառնան:  
Դեղ-դեղ կիտեց դեղին ոսկին,  
Սև սուզ կալավ հայոց ազգին:

## XV

Հեյ, ո՞ր ես, Դավիթ, հայոց պահապան,  
Քարը պատովի - դուրս արի մեյդան:  
Քանդած հոր վանքը որ չինեց նորից,  
Ցած իջավ Դավիթ Մարուրա սարից,  
Ժանգուած, ամկոր մի շնորհիկ զտավ,  
Գնաց պառավի շաղգամը մտավ:

Պառավն էր. եկավ՝ անե՛ծք, աղաղա՛կ.  
- Վա՛յ, խելան Դավիթ, շաղգամի տեղակ  
Դու կրակ ուտես, ցավ ուտես, - ասավ, -  
Քու աչքն աշխարհում մենակ ի՞նձ տեսավ.  
Կորեկս արիր գետնին հավասար,  
Էս էր մնացել ձմեռվան պաշար,  
Էս էլ կտրում ես,  
Էլ ո՞նց ապրեմ ես:  
Թե կտրիմ ես դու, աղեղդ ա՛ն զնա՛,  
Քու հոր աշխարհին տիրուրյուն արա՛,  
Քու հոր զանձը կե՛ր,  
Թողել ես անտեր,  
Մսրա թագավոր դրկել է՝ տաճի:  
- Էլ ի՞նչ ես վրես բարկանում, նանի՛,  
Էղ ի՞նչ ես ասում, ես չեմ հասկանում,  
Մսրա բազավոր մեր ի՞նչն է տաճում:  
- Մսրա բազավոր մեր ի՞նչն է տաճում...  
Մսրա բազավոր քու աչքն է հանում,  
Դանդալոշ Դավիթ. դրկել է հրեն,  
Եկել են Սասմա բաղաքի վրեն .  
Բաղին, Կողբաղին,  
Սյուտին, Չարխաղին,  
Թալան են տալի բովանդակ Սասուն.  
Քասուն քեռ ոսկի խարաջ են ուզում,  
Քասուն կույս աղջիկ սիրուն, արմադան,  
Քասուն կարծ կնիկ, որ երկանք աղան,  
Քասուն էլ երկար, որ ուղտեր բառնան,  
Մսրա Սելիքին դարավաշ դառնան:  
- Ի՞նչ ես, ա՛յ պառավ, էլ ինձ անհծում.  
Ցույց տուր մի տեսնեմ՝ ո՞րտեղ են ուզում:  
- Որտե՞ղ են ուզո՞ւմ... Մահս տանի քե՞զ.  
Դու՛ պետք է էն հոր զավակը լինե՞ս...  
Եկել ես՝ էստեն շաղգամ ես լափում...  
Ոսկին Կողբաղին ձեր տանն է շափում,  
Աղջիկներ վկեկ մարագն են լցրած:  
Չաղգամը բռնեց Դավիթ ու զնաց:  
Տեսավ՝ Կողբաղին իրենց տան միջին,

Չափում է ոսկին թեղած առաջին,  
 Սյուտին, Չարխաղին պարկերն են բռնել,  
 Ձենով Օհանն էլ շինքը ծոել,  
 Կանգնել է հեռու, ձեռները ծոցին:  
 Տեսավ, աչքերը արնով լցվեցին:  
 - Վեր կաց, Կողքաղին, հեռու կանգնիր դու,  
 Իմ հոր ոսկին է - ես եմ չափելու:  
 - Կողքաղին ասավ. - Է՞յ, Ձենով Օհան,  
 Կտաս - տուր խարջը ես օխտը տարվան,  
 Թե չէ կզնամ, միրուրս վկա,  
 Մսրա-Մելիքին կպատմեմ, կգա,  
 Ձեր Սասմա երկիր քար ու քանդ կանի,  
 Տեղը կվարի, բռստան կցանի:  
 - Կորեր, անզգամ.դուր Մսրա շներ,  
 Բա չե՞ք իմացել դուր Սասմա ծոեր...  
 Մեռա՞ծ եք կարծում դուր մեզ, քե՞ շվար,  
 Կուզեր մեր երկիր նմեր խարջի տա՞կ...  
 Բարկացավ Դավիր, չափը շպրտեց,  
 Տվակ Կողքաղին գլուխը ջարդեց,  
 Չափի փշրանքը պատն անցավ, զնաց,  
 Մինչև օրս էլ դեռ զնում է բռած:  
 Ու ելամ՝ բափած ոսկին բողեցին,  
 Հայոց աշխարհից փալսան զնացին  
 Բաղին, Կողքաղին,  
 Սյուտին, Չարխաղին:

## XVI

- Վա՞յ, վա՞յ, հորեղբայր, ի՞նչ ասեմ ես քեզ.  
 Մենք ունենք էստե դեղին ոսկու դեզ.  
 Դու արել ես ինձ քաղաքի ծառան,  
 Դու բողել ես ինձ օտարի դուա՞ն...  
 Հորեղայրն ասավ, - Այ լսենք, լսելազար,  
 Ոսկին պահել եմ Մելիքի համար,  
 Որ քաղցր լինի աչքը մեզ վրա:  
 Չտվիր, իմի որ զորք առնի՛ զա,  
 Սասմա քար ու հոր հեղեղի, տանի,  
 Ո՞վ դեմք կերրա, ո՞վ կոխվ կանի:

- Դու կա՛ց, հորեղբայր, բող զա, ես կերրամ,  
 Կերրամ, ես նրան պատասխան կտամ:  
 Ու մոր մարազի դրանը զարկեց,  
 Փակած աղջիկներ հանեց, արձակեց:  
 - Գնացե՛ք, - ասավ, - ազատ ապրեցե՛ք,  
 Սասունցի Դավիրն արև խնդրեցեք:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Համառոտ պատմիր այս հատվածը:
2. Առանձնացրու բոլոր միջադիմումները:
3. Կարդա՞ այն հատվածը, որտեղ զայրացած է Մելիքը: Ի՞նչն էր նրա զայրույթի պատճառը:
4. Նկարագրիր Դավիր, հանդիպումը հարկահանների հետ:
5. Համեմատիր հարկահաններ - Դավիր եւ Մելիք-Դավիր հանդիպումները:
6. Բնուրագրիր Կողքաղնին՝ մեջ բերելով համապատասխան բառերն ու արտահայտուրյունները:
7. Առանձնացրու Դավիր եւ պառավի երկխոսուրյունը:
8. Դու՞րս զրիր Ձենով Օհանին բնուրագրող հատվածները:
9. Դու՞րս զրիր դարձվածները եւ բացատրիր:

## XVII

Էսպես ջարդված, արյունլվա  
 Փախսան, ընկան հողը Մսրա  
 Բաղին, Կողքաղին,  
 Սյուտին, Չարխաղին:  
 Մսրա կանայք հեռվից տեսան,  
 Հեռվից տեսան, ուրախացան  
 Ու ծափ տվին կտերներին.  
 - Եկա՞ն, Եկա՞ն, բերի՞ն, բերի՞ն...  
 Մեր Կողքաղին զնաց Սասուն,  
 Սանայք բերավ քառսուն-քառսուն,

Կարմիր կովեր քերավ կրան՝  
 Գարնան շինենք եղ ու չորրան...  
 Հենց մոտեցան, նկատեցին,  
 Ծափ ու խնդում ընդհատեցին,  
 Քրքացին  
 Ու կանչեցին.  
 - Է՞յ, Կողքաղին մեծարերան,  
 Եղ ո՞րտեղից լերան-լերան,  
 Լերան-լերան կզաս փախսած,  
 Հաստ զլուսդ կիսից ճղած:  
 Են դու՞ չափիր՝ զնամ Սասուն,  
 Կանայք բերեմ քառսուն-քառսուն,  
 Քառսուն բերենվ ոսկի հանեմ,  
 Հայոց երկիր ավեր անեմ:  
 Գացիր Սասուն քանց գել զազան,  
 Ետ ես զալի քանց շուն վազան...  
 Ու Կողքաղին խիստ քարկացավ.  
 - Սու՞ս կացեր դուր, լրբե՛ր, - ասավ. -  
 Ձեր մարդիկն եք տեսել, դուր դեռ,  
 Դուր չեք տեսել Սասմա ծոեր:  
 Սասմա ծոեր լերան-լերան,  
 Նետեր ունեն մի-մի գերան,  
 Սասմա երկիր քար ու կապան,  
 Դժար սարեր, ձոր ու ծապան,  
 Նրանց խոտեր - ինչպես կեռ քոր,  
 Զորք ջարդեցին երեք հարյուր...

Ասավ ու էլ չառավ դադար,  
 Վոազ-վոազ, զիխապատան  
 Վազեց իրեն քազավորին:  
 Խնդաց քազավորն իր արորին:  
 - Ապրե՛ս, ապրե՛ս, քաջ Կողքաղին,  
 Արժե՛ կախեմ ես քու ճտին  
 Մեր դուզդունի մեծ նշանը՝  
 Պարզեց քու մեծ հաղորդյանը:  
 Ու՞ր են, հապա առաջ քեր  
 Սասմա ոսկին ու աղջկեներ:  
 Ասավ Մելիք, ու Կողքաղին

Գլուխ տվավ մինչև գետին.  
 - Ապրա՞ծ կենաս, մեծ քազավոր,  
 Զորով փախսա ես ծիավոր,  
 Ո՞նց քերեկ Սասմա ոսկին:  
 Մի խներ ծնվեց հայոց ազգին,  
 Ոչ ահ զիտի, ոչ տեր ու մեծ,  
 Գլուխս էապես տվավ ջարդեց,  
 «Չե՞մ տալ ասավ, իմ հոր ոսկին,  
 Չե՞մ տալ կանայք իմ հայ ազգին,  
 Սասմա երկիր ձեզ տեղ չկա...  
 Չո քազավոր, ասավ, քո՞ն զա,  
 Թող զա՝ ինձ հետ կոփ անի,  
 Թե դոշադ է՝ զորով տանի»:  
 Կատաղեց, փրփրեց Մսրա քազավոր.  
 - Կանչեցե՞ք, ասավ, իմ զորքը բոլոր.  
 Հազար հազար մարդ նորելուկ մանուկ,  
 Հազար հազար մարդ անքեղ, անմորուր,  
 Հազար հազար մարդ նոր քախտից ելած,  
 Հազար հազար մարդ քուս միրութավոր,  
 Հազար հազար մարդ սիպտակ ալուր,  
 Հազար հազար մարդ, որ փողեր ինչեն,  
 Հազար հազար մարդ, որ բմբուկ զարկեն...  
 Կանչեցե՞ք, բող զան, հազնեն զե՞նք, զրա՞ն,  
 Կոփ տի զնամ ես Դավթի վրա,  
 Սասուն ավերեմ,  
 Հեղեղեմ, քերեմ:

### XVIII

Էսպես անհամար զորքեր հավաքեց,  
 Եկավ Սասմա դաշտ, քանակը զարկեց  
 Ու ծանր նստեց Մսրա քազավոր:  
 Էնքան ահազին քազմորյունն էն օր  
 Բարմանա ջրին եկավ ու չորեց,  
 Ով եկավ, խմեց - զետը ցամաքեց,  
 Սասմա քաղաքում մնացին ծարավ:  
 Զենով Օհանին զարմանքը տարավ:  
 Քուրքը ուսն առավ, սարը քարձրացավ.

Սարը բարձրացավ, տեսավ, ի՞նչ տեսավ.  
 Շերմակ վրանից դաշտը ճերմակել,  
 Ասես՝ էն զիշեր ձմեռը եկել,  
 Սպիտակ ձյունով պատել էր Սասուն:  
 Լեղին ջոր կտրեց, կապ ընկավ լեզուն,  
 Հարա՞յ կանչելով՝ փախավ տուն ընկավ.  
 - Վա՞յ, փախե՞ք, եկա՞վ... հա՞յ, հարա՞յ, եկավ...  
 - Ի՞նչը, հորեղբայր, ի՞նչը, ի՞նչն եկավ...  
 - Ցավն ու կրա՞յ Դավթի պինչն եկավ:  
 Մսրա բազավոր եկել է, եկել,  
 Եկել, մեր դաշտին բանակ է զարկել.  
 Թիվ կա աստղերին, թիվ չկա զորքին...  
 Վա՞յ մեր արևին, վա՞յ մեր աշխարհին...  
 Ե՞կ, ոսկին տանենք, աղջիկներ տանենք,  
 Չորենք առաջին, պաղատանք անենք,  
 Գուցել քե զրա,  
 Մեզ սրի չտա...  
 - Դու կա՞ց, հորեղբայր, դու դարդ մի՛ անիր,  
 Գնա, քու օդում դու հանգիստ քնիր.  
 Հիմի ևս կենեմ, Սասմա դաշտ կերրամ,  
 Մսրա-Մելիքին պատասխան կտամ:  
     Ու զնաց Դավիր ծանոր պառավին.  
 - Նանի՛ ջան, - ասավ, - ժանգոտած ու իին  
 Երկարի կտոր, անքարոց, շամփուր,  
 Ինչ ունես չունես, հավաքի՛ր, ինձ տոր,  
 Մի էշ է զայիր, որ վրեն նատեմ,  
 Կոփս տի զնամ Մսրա զորքի դեմ:  
 - Վա՞յ, Դավիր, ասավ, մահս տանի քեզ.  
 Դու՞ պետք լ, լն հոր զավակը լինե՞ս...  
 Քու հերն ուներ կովի համար  
 Հրեղևն ձի, ոսկի քամար,  
 Ծալ-ծալ կապեն, զորզը պողպատ,  
 Թամբ սաղափեն, կուռ սաղավարտ,  
 Խաչ պատրաստին իր աջ բազկին,  
 Զրահ շապիկ, Թուր-Կեծակին,  
 Դու եկել ես, այ խենք ու ծուռ,  
 Ինձնից կուզես էշ ու շամփո՞ր...

- Ամա՞ն, նանի, չեմ լսել դեռ:  
 Ու՞ր են իիմի իմ հոր զենքեր:  
 - Հորեղբայր գնա հարցուր.  
 Ու՞ր են, ասա, հանի՛ր, քեր, տոր:  
 Բան է, քե որ չտա սիրով,  
 Աչքը հանիր՝ խիմ զոռով:

## ՀԱՐՁԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՄԱՋՄԱՋԵՐ

### 1. Նկարագրի՛ր հարկահաններին

#### ա) Սասունում

#### բ) Մսրում:

2. Կողքադի աշքերով պատմիր Սասունի եւ սասունցիների մասին:

3. Դուրս զրիր Կողքադին վերաբերող հաստվածներ:
4. Առանձնացրու Մելիքի հրամանը՝ ուղղված իր ժողովրդին:
5. Դուրս զրիր Մելիքի զորքին բնուրագրող հատվածը:
6. Կարդա՛ Դավիր եւ պառավի երկվոտուրյունը: Բնուրագրի՛ր Դավիրին ու պառավին:

7. Թվարկի՛ր Դավիր հոր՝ Մելիքի զենքերը: Սովորակա՞ն էին, քե՞...

8. Դուրս զրիր դարձվածները եւ բացատրի՛ր:

## XIX

Դավիր զնաց հորեղբոր մոտ,  
 - Է՞յ հորեղբայր, - կանչեց հերսոտ, -  
 Իմ հերն ուներ կովի համար  
 Հրեղեն ձի, ոսկի քամար,  
 Ծալ-ծալ կապեն, զորզը պողպատ,  
 Թամբ սաղափեն, կուռ սաղավարտ,  
 Խաչ պատրաստին իր աջ բազկին,  
 Զրահ շապիկ, Թուր-Կեծակին,  
 Կտաս - քեր տոր...

- Վա՞յ, Դավիր ջա՞ն, -

Անից գոռաց Զենով Օհան. -

Քու հոր մահվան տարուց-օրից

Դուրս չեմ հանել ձին ախոռից,

Ոչ սնդուկից Թուր-Կեծակին,

Չրահ շաապիկ, ոսկի գոտին...

Ինձ բող, ամա՞ն, մի՛ սպանիր,

Կուգես- իրեն, զնա հանիր:

## XX

Հազավ Դավիր զենքն ու զրահ,

Կապեց գոտին Թուր-Կեծակին,

Խաչն էլ իր հաղը բազկի վրա,

Ելավ, հեծավ Առյուծ հոր ձին,

Հոր ձին հեծավ ու մտրակեց.

Զենով Օհան լալով երգեց.

- Ափսո՞ս, հազա՞ր ափսոս իրեղեն մեր ձին,

Ա՞յս, իրեղեն մեր ձին,

Ափսո՞ս, հազա՞ր ափսոս մեր ոսկի գոտին,

Ա՞յս, մեր ոսկի գոտին.

Ափսո՞ս, բան կապեն, որ հազին տարավ,

Ա՞յս, որ հազին տարավ...

Դավիր բարկացավ,

Ձին քշեց, դարձավ,

Օհանը վախեց,

Իր երգը փոխեց,

«Ափսո՞ս, նորելուկ Դավիրս կորավ,

Ա՞յս, Դավիրս, կորավ»:

Ես որ իմացավ,

Դավիր մեղմացավ,

Իջավ, Օհանի ձեռքը համբուրեց:

Զենով Օհանն էլ, ինչպես հայր ու մեծ,

Օրինեց, խրատեց նրան հայրաբար,

Դեպի Սասմա դաշտ դրավ ճանապարհ:

## XXII

Սասունցի Դավիրն տներ մի քետի,

Անոնը Թորոս, ահեղ աժդահա:

Սա էլ իմացավ համբավը կովի,

Մի բարդի ուսին զախս է ահա:

Գախս է հեռվից բարձր գոռալով.

- Ի՞նչ եք վեր եկել էս դաշտի միջում,

Քանի զլխանի մարդիկ եք կամ ո՞վ,

Սասունցի Դավիրն որ չեք ճանաչում...

Բա չե՞ք իմանում, որ Էստեղ է նա

Գալո՞ խաղացնի իր ձին թևավոր,

Չըվեցե՞ք, հիմի ուր որ է կզա,

Եկել եմ սրբեմ մեյդանը Էսօր:

Ասավ ու քաշեց իր ուսի բարդին,

Սրբեց բանակից մի բան վրան...

Դավիրն էլ ահա սարի գազարին

Կանգնած՝ գոռում է վիշապի նման.

- Ով քնած եք՝ արրուն կացե՞ք,

Ով արրուն եք՝ ելե՞ք, կեցե՞ք,

Ով կեցել եք՝ զենք կապեցե՞ք,

Զենք եք կապել՝ ձի բամբեցե՞ք,

Զի եք բամբել, ելե՞ք, հեծե՞ք.

Հետո չասեք՝ թե մենք քնած -

Դավիր գող-գող եկավ, զնաց...

Էսպես կանչեց, ասպանդակից,

Ու, ինչ ամպից կեծակ զարկի,

Սսրա զորքի մեջտեղ զարկեց,

Շողացնելով Թուր-Կեծակին:

Զարդեց, փշրեց մինչև կեսօր.

Կեսօր արինն ելավ հեղեղ,

Քշեց, տարավ հազարավոր

Սարդ ու դիակ ողջ միատեղ:

- Կար զորքի մեջ մի ալևոր,  
Աշխարհը տեսած ու բանագետ,  
- Տղերը, ասավ, ճամփա տվեր,  
Գնամ խոսեմ ես Դավթի հետ:

Գնաց՝ կանգնեց Դավթի առաջ,  
Էսպես խոսեց էն ծերունին.  
- Դալար կենա՛ կոտոյ, ո՞վ քաջ,  
Սուրդ կտրուկ միշտ քո ձեռին:

Մի ծերունու խոսքին մտիկ,  
Տես, քո խելքը ինչ է կտրում:  
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,  
Հե՞ր ես սրանց դու կոտորում:

Ամեն մինը մի մոր որդի,  
Ամեն մինը մի տաճ ճրազ,  
Որը կինն է քողել էնտեղ  
Աչք ճամփին, խեղճ ու կրակ,

Որը մի տուն լիք մանուկներ,  
Որը ծնող աղքատ ու ծեր,  
Որը լացով, քողն երեսին,  
Նորապսակ ջահել հարսին...

Թագավորը զոռով-քրով  
Հավաքել է, էստեղ քերել:  
Խեղճ մարդիկ ենք՝ պակաս օրով,  
Սենք քեզ վնաս ի՞նչ ենք արել:

Թագավորն է քո քշնամին,  
Կոիկ ունես - իր հետ արա,  
Հե՞ր ես քաշում թուր-կեծակին  
Էս անճարակ խալիսի վրա:

- Լավ ես ասում դու, ծերունին,  
Ասավ Դավթին ալևորին,  
Բայց քազավորն ու՞ր է իիմի,  
Որ սև կապեմ նրա օրին:

- Մեծ վրանում քնած է նա,  
Է՞ն, որ միջից ծովսը կելնի.  
Էն ծովսն էլ հո ծովս չի որ կա,  
Գոլորշին է իր քերանի:

Ասին. դեպի մեծ վրանը  
Ասպանդակեց Դավթին իր ձին,  
Քշեց, զնաց ու դուանը  
Գոռաց կանգնած արաբներին.

- Ու՞ր է, ասավ, ի՞նչ է կորել,  
- Ես ամեն օր կզամ քո ե-  
տևից, - ասաց տնտեսութին:
- Ես քեզ չեմ սիրում, - կրկնեց  
տղան:

Տնտեսութիւն սիրուր ցավում  
էր, որ տղան պետք է դպրոց  
գնա, բայց ինչ արած, նա  
պարտավոր էր գնա:

Դպրոցի շենքը երկուսին էլ  
մի տեսակ անձո՞րի երևաց:  
Տնտեսութին իրեն վաս զգաց,  
և երբ աստիճաններով վերև  
էին բարձրանում, հանկարծ  
ուզեց, որ տղան իսկապես դպրոց չգնար: Նախարահներն ու դա-  
սասենյակները վախեցնում էին նրանց, այնտեղից ինչ-որ օտարո-  
տի ու տհած հոտ էր գալիս:

Տնօրեն միստր Բարբեր տղային դուր չեկավ: Էմին արհամար-  
հանրով վերաբերվեց նրան:

- Ինչպե՞ս է ձեր որդու անունը, - ասաց միստր Բարբերը:
- Սա քժիշկ Լուի Դևիի որդին է, - ասաց Էմին: - Անունը Ջիմ է: Ես  
քժիշկ Դևիի տանը աշխատում եմ իրեւ տնտեսութի:
- Ջև՞նս, - ասաց միստր Բարբերը:
- Ոչ, Ջևնս չէ, - ասաց Էմին: - Պարզապես Ջիմ:
- Շատ լավ, - ասաց միստր Բարբերը: - Իսկ երկրորդ անուն ունի՞:
- Ոչ, - ասաց Էմին:
- Նա դեռ շատ փոքր է: Ուսդակի Ջիմ Դևի:
- Շատ լավ, - ասաց միստր Բարբերը: - Մենք նրան կփորձենք ա-  
ռաջին դասարանում: Եթե գլուխ չհանի, կփոխադրենք մանկա-  
պարտեզ:

- Քժիշկ Դևին ասաց՝ տալ նրան դպրոցի առաջին դասարան և ոչ  
քեզ մանկապարտեզ, - ասաց Էմին:

- Շատ լավ, - ասաց միստր Բարբերը:

Տնտեսութին հանկանում էր, որ տղան ինչպես էր վախեցած, երբ  
նստեց արռողին, տնօրենի առաջ, և ջանում էր զգացնել տալ քեզ



ըլ ինչպես է սիրում նրան և ինչպես է ցավում այս ամենի համար: Նա ուզում էր որևէ քննուչ խոսք ասել տղային, բայց չգիտեր, թէ ինչ: Եվ նա իրեն հպարտ զգաց, տեսնելով, թէ Ջիմին ինչպիսի քե-  
րւուրյամբ ցած բռավ արողից ու կանգնեց միստր Բարբերի կողքին,  
որպեսզի նրա հետ դասարան գնա:

Տուն դառնալիս նա այնպես հպարտ էր տղայով, որ նոյնիսկ ար-  
տասվեց:

Առաջին դասարանի ուսուցչուի միստր Բիննին բոլորովին շարա-  
ցած պատավ մի լեյի էր: Դասարանը իրեն էր փոքրիկ տղաներով ու  
աղջկեներով: Առաջին պես ինչ-որ օտարութի ու սրտնեղից հոտ էր  
գալիս: Ջիմը նստեց նստարանին և սկսեց ուշադիր լսել:

Նա լսում էր, թէ ոնց է ուսուցչուին անունները տալիս՝ Չարլզ, Օլ-  
վին, Էրնստ, Նորման, Բետոն, Հաննա, Չուլիետ, Վիոլա, Պոլլի:

Նա ուշադիր լսում էր, և ահա միստր Բիննին ասաց.

- Հաննա Վինտեր, այդ ի՞նչ ես ծամում:

Ջիմը տեսավ, թէ ոնց Հաննա Վինտերը կարմրեց: Հաննա Վին-  
տերն իսկույն դուր եկավ նրան:

- Ծամոն, - ասաց Հաննան:

- Գցիր աղբարկողը:

Ջիմը տեսավ, թէ ոնց փոքրիկ աղջկեր զնաց դեպի դռան մոտի  
անկյունը, ծամոնը հանեց բերանից ու զցեց աղբարկողը: Նա լսեց,  
թէ ինչպես միստր Բիննին ասաց.

- Էրնստ Հասկին, իսկ դո՞ւ ի ինչ ես ծամում:

- Ծամոն, - ասաց Էրնստը:

Էրնստը նոյնպես դուր եկավ Ջիմին:

Նրանք հանդիպեցին դպրոցի բակում, և Էրնստը զանազան  
զվարճայի բաներ ստվորեցրեց Ջիմին:

Էմին նախասենյակում սպասում էր դասերը վերջանալուն: Նա  
մույլ կիտել էր հոնքերը և շարացած էր ամենքի դեմ, մինչև որ տե-  
սավ Ջիմին: Նրան ապշեցրեց, որ տղան բնավ չի փոխվել, որ նա  
ողջ-առողջ է, ոչ որ չի սպանել ու չի հաշմել նրան: Դպրոցը և այն  
ամենը, ինչ կապված էր դրա հետ, մահու չափ վախեցնում էր Է-  
միմին: Նա բռնեց տղայի ձեռքը և դուրս եկավ դպրոցից հպարտ ու  
բարկացած:

Ջիմն ասաց.

- Հինգն ու մեկը ինչքա՞ն կանի:

- Ահա:

- Երեսիդ մուր քավեց:

Ընթրիքի ժամանակ հայրը լուս նստել էր:

- Հինգն ու մեկը ինչքա՞ն կանի, - ասաց տղան:

- Վեց, - ասաց հայրը:

- Երեսիդ մուր քավեց, - ասաց Զիմը:

Առավոտան նա հորից իինգ սենք խնդրեց:

- Փողն ինչի՞ն է հարկավոր, - ասաց հայրը:

- Ծամոնի համար, - ասաց տղան:

Հայրը մի իինգսենքանոց տվեց նրան: Դպրոց զնալիս Զիմը կանգ առավ միսիս Ռայի կրպակի մոտ և մի տուփ «Անանուխ» ծամոն առավ:

- Ուզո՞ւմ ես մի հատ, - հարցյեց նա Էմիին:

- Իսկ դու ուզո՞ւմ ես ինձ տալ, - ասաց տնտեսուիին:

Զիմը մտածեց ու ասաց.

- Այո:

- Դու ինձ սիրո՞ւմ ես:

- Սիրում եմ, - ասաց Զիմը: - Իսկ դո՞ւ ինձ: - Այո, - ասաց տնտեսուիին:

- Դպրոցը քեզ դո՞ւ է զալիս:

Զիմը հաստատ ասել չէր կարող, միայն զիտեր, որ ծամոնի խաղն իրեն դուր է զալիս: Հանճա Վինտերն էլ: Երնըստ Հասկինը նոյնապես:

- Զիտեմ, - ասաց նա:

- Երգեր երգո՞ւմ եք, - ասաց տնտեսուիին:

- Չե, չենք երգում:

- Իսկ խաղեր խաղո՞ւմ եք:

- Խաղում ենք: Միայն ոչ քեզ դպրոցում, այլ բակում:

Ծամոնի խաղն անշափ դուր էր եկել նրան:

Միսս Բիննին ասաց.

- Զիմ Դեի, այդ ի՞նչ ես ծամում:

«Հա-հա-հա», - մտածեց նա ու ասաց.

- Ծամոն:

Նա զնաց դեպի աղքարկդն ու վերադարձավ իր տեղը. Հանճա Վինտերը նայում էր նրան, Երնըստ Հասկինը՝ նոյնապես: Դպրոցում եղածի լավն էլ հենց այդ էր:

Իսկ հետո ավելի ևս լավ եղավ:

- Երնըստ Հասկին, - բղավեց նա դպրոցի բակում, - այդ ի՞նչ ես

ծամում:

- Փողի հում միս, - ասաց Երնըստը, - Զիմ Դեի, այդ ինչ ես ծամում: Զիմն ուզեց որևէ ծիծաղելի բան մտածել, բայց չկարողացավ:

- Ծամոն, - ասաց նա:

Եվ Երնըստ Հասկինը ավելի բարձր ծիծաղեց, բան Զիմը, երբ ինը ըստեց փողի հում մսի մասին:

Ինչ էլ պատասխանեիր, մեկ է, ծիծաղելի էր ստացվում:

Բակից վերադառնալիս Զիմը նախարարություն տեսավ Հանճա Վինտերին:

- Հանճա Վինտեր, - ասաց նա, - այդ ի՞նչ ես ծամում շարունակ:

Աղջիկը շփորվեց: Նա ուզում էր մի հաջող սրամիտ պատասխան տալ, այնպես որ երևա, թե որքան հաճելի է, որ Զիմն իրեն անունազգանունով կանչեց և ծիծաղելի հարց տվեց, տնազելով ուսուցչուն, բայց չկարողացավ ոչինչ մտածել, որովհետև արդեն համարյա դասարանի դռանն էին, և նա ժամանակ չունեցավ:

- Տուտտի-ֆրուտտի, - շտապով ասաց նա:

Զիմին բվաց, թե երբեք այդպիսի հոյակապ խոսք չէր լսել, և ամբողջ օրը կրկնում էր ինքն իրեն:

- Տուտտի-ֆրուտտի, - ասաց նա տնտեսուին տան ճամփին:

- Եմի Լարսոն, - ասաց նա, - այդ ի՞նչ եր ծամում:

Ընթրիքի ժամին Զիմին այդ ամենը պատմեց հորը: Նա ասաց.

- Զորս կողմ ավագ, մեջը ակ: Եղ ի՞նչ եղավ:

- Զիտեմ, - ասաց հայրը: - Ի՞նչ է:

- Ավագակ, - ասաց տղան:

Տնտեսուին հիացած էր:

- Ավագ-ակ, - ասաց Զիմը: - Տուտտի-ֆրուտտի:

- Իսկ դա ի՞նչ է, - հարցյեց հայրը:

- Ծամոն, - ասաց Զիմը: - Ծամոնի մի տեսակ, որ ծամում է Հանճա Վինտերը:

- Ո՞վ է այդ Հանճա Վինտերը, - ասաց հայրը:

- Մեր դասարանի է, - ասաց Զիմը:

- Օ՛, - ասաց հայրը:

Ընթրիքից հետո Զիմը պառկեց հատակին, վերցնելով իր կարմրա-կապտա-դեղնավուն փոքրիկ հոլլ, որը պտտեցնելիս բզզում էր: «Ամեն ինչ կարգին է», - մտածում էր Զիմը: Շիշտ է, դպրոցում նա դեռևս տխրում էր, բայց ժամոնի խաղը ծիծաղելի էր, իսկ Հանճա

Վիճուերը շատ լավիկն էր: «Փոխ հում միս», - հանկարծ հիացմունքով իիշեց նա:

- Փոխ հում միս, - բարձրածայն ասաց նա հորը, որը երեկոյան բերքն էր կարդում:

Հայրը ծալեց թերքն ու նստեց հատակին՝ նրա մոտ: Տնտեսուիին նրանց տեսավ կողը-կողը նստած և, չզիտես ինչու, նրա աշքերուն արցունքներ երևացին:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Համառոտ պատմիր այս պատմվածքը:
2. Ինչախի՞ վերաբերմունք ուներ Եմին Զիմի հանդեպ: Ասածներդ հաստատի՞ ի համապատասխան հատվածներով:
3. Ի՞նչ էր մտածում Զիմը դպրոցի մասին:
  - a) մինչեւ դպրոց գնալը
  - b) հետո:
4. Կարդա՞ թեզ դուր եկած հասովածը: Հիմնավորի՞ քո բնորույունը:
5. Բնուրագրի՞ հորը:
6. Թվարկի՞ հերթաներին:
7. Քո կարծիքով, ինչպիսի՞ն էր միսս Բինենին:
8. Համեմատի՞ նրան քո ուսուցիչների հետ:
9. Ինչպի՞ն կրնանան հետազայտմ Զիմի գործերը դպրոցում, քո կարծիքով:
10. Ըստիական բացիկ ուղարկի՞ Զիմին դպրոց գնալու առիթի:
11. Եթե Զիմը գրանանաչ լիներ, ի՞նչ կգրեր օրագրում այս երկու օրվա մասին:
12. Գրի՞ շարադրույուն «Իմ առաջին օրը դպրոցում» վերնագրով:
13. Գրի՞ ք, թե ինչն է ուրախացնում, ինչն է տիսրեցնում թեզ դպրոցում:

## ՄԱՐԿ ՏՎԵՆ

# ԹՈՄ ՍՊՅԵՐԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Եկուշարքի առավոտյան մուսն իրեն շատ լժրախտ զգաց: Նա միշտ իրեն դժբախտ էր զգում, որովհետև այդ օրով էին սկսվում մի նոր շաբարված տանջանքները դպրոցում: Նա այդ օրը ցանկանում էր, որ ընդհանրապես կիրակի չիններ. գերույան մեջ լինելը դրանով ավելի ատելի էր դառնում: Մոմք պառկած մտածում էր: Հանկարծ նա ցանկացավ հիվանդ լինել. այդպիսով կարող էր դպրոց չգնալ և տանը մնալ: Այստեղ ինչ-որ անորոշ հնարավորույթուն կար: Նա ինըն իրեն ստուգեց: Ոչ մի տեղում չէր ցավում: Նորից ստուգեց: Այս անզամ բվաց, թե փորացավի նշաններ կան, և նա դրանց հետ որոշակի հույս կապեց: Բայց շոտով այդ նշանները բոլյացան և հետզինեւ ամբողջովին անհետացան: Մոմք նորից սկսեց մտածել: Հանկարծ մի նոր բան հայտնաբերեց: Վերևի առամներից մեկը շարժվում էր: Դա արդեն մեծ բախտ էր: Որպես սկիզբ նա ուզում էր տնրալ, եթե մտածեց, որ եթե սկսի այդ պատճառաբանույթամբ, մորաքույրն այդ ատամը կբաշի, և դա ցալ կպատճառի: Նա որոշեց ատամը պահել որպես պահեստի ցավ և ուրիշ պատրիակ վիճակ: Որոշ ժամանակ ոչ մի բան չզտավ, հետո իիշեց քշկի պատմած մի հիվանդույթան մասին, որ մեկին մի բանի շաբարով անկողին էր զեղել՝ միաժամանակ սպառնալով մատի կորսուով: Նա վերմակի տակից հանեց ուրքը, սկսեց ուսումնասիրել վիրավոր մատոր: Բայց այդ հիվանդույթան նշանները չգիտեր: Այնուամենայնիվ, արժեր փորձել, և նա սկսեց եռանդով տնրալ: Իսկ Սիլլը շարունակում էր անտեղյակ մնալ ու ընել: Մոմք ավելի խորը տնրաց և նրան բվաց, որ մատն իրոք ցավում է: Ոչ մի արձագանք Սիլի կողմից: Սինչ այդ մոմի շունչը կտրվեց: Նա մի փոքր հանգստացավ, ուժ հավաքեց ու տնբոցների հիանալի մի շաբը արձակեց: Սիլը շարունակեց խոնֆալ: Մոմի համբերույթունն սպառվեց: Նա կանչեց. «Սի՞ ն, Սի՞ դ» և եղրոքը շարժեց: Դա ազդեց, և մոմն սկսեց դարձյալ տնրալ: Սիլը հառաչեց, ձգվեց, հենվեց արմունկին և մոմին նայեց: Մոմք շարունակում էր տնրալ:

Սիլր կանչեց նրան.

- Թո՞մ, լսի՞ր, թո՞մ:

Պատախան շկար:

- Լսի՞ր, թո՞մ, ի՞նչ է պատահել, թո՞մ:

- Նա շարժեց եղբորը՝ մտահոգ նայելով դեմքին:

Թոմը հառաջեց.

- Թո՞յ, Սի՞ն, համզիստ քող ինձ:

- Ի՞նչ է պատահել, թո՞մ, զնա՞մ մորաքույրին կանչեմ:

- Ո՞չ, հարկավոր չէ. զուցե կամաց-կամաց անցնի: Ոչ որի մի կանչիր:

- Բայց ես պարտավոր եմ: Այդպես մի՛ տնքա, թո՞մ, սարսափելի է: Ինչքա՞ն ժամանակ է, որ դու այդ վիճակում ես:

- Ժամե՞ր, ա՞խ, օ՛հ, ինձ ծնոք մի տուր, Սի՞ն, սպանում ես:

- Թոմ, ինչո՞ւ ինձ ավելի շուտ չարբնացրիր: Օ՛հ, թո՞մ, մի արա, մարմինս փշաքաղուում է: Թո՞մ, ի՞նչ է պատահել:

- Ես քեզ ամեն ինչ ներում եմ, Սի՞ն: (Տնրոց:) Ամեն ինչ, որ արել ես ինձ: Ես ի չեմ լինի...

- Օ՛յ, թո՞մ, մի՞քև մեռնում ես, թո՞մ. մի՞ մեռիր, օ՛յ, մի՞ մեռիր: Գուցե...

- Ես բոլորին ներում եմ, Սի՞ն: (Տնրոց:) Նրանց ասա, Սի՞ն: Հետո, Սի՞ն, իմ լուսամուսի շրջանակը և միաշրանի կատուն տուր այն աղջկան, որը նոր է քաղաք եկել: Ասա նրան...

Բայց Սիլր իր հագուստները վերցրել ու զնացել էր: Այժմ Թոմն խկապես տառապում էր. այնպես լավ էր նրա երկակայորյունը աշխատում, և այնքան բնական էին նրա տնրոցները: Սիլր սանդուրը ներից ցած բռավ և ասաց.

- Մորաքույր, արի, Թոմը մեռնում է:

- Մեռնո՞ւմ է:

- Այո՛, մի՛ կանգնիր, շտապի՞ր:

- Հիմարուրյուն է, չեմ հավատում: Բայց և այնպես նա վազեց վերև, Սիլրն ու Սիլրին նրա հետուից: Պառավի դեմքը սպիտակել էր, շրբները դողում էին: Երբ հասավ մահճակալին, նա հազիվ կարողացավ արտասանել:

- Թո՞մ, թո՞մ, ի՞նչ է պատահել քեզ:

- Օ՛հ, մորաքույր, ես...

- Ի՞նչ է պատահել, ի՞նչ է պատահել, տղաս:

- Օ՛հ, մորաքույր, իմ վիրավոր մատոր բունավորված է:

Պատավ լեյին բնկավ արողին և ծիծաղեց, հետո լաց եղավ, հետո՝ երկուսը միաժամանակ: Այդ համաստացրեց նրան, և նա ասաց.

- Թո՞մ, ի՞նչ խաղ խաղացիր զիսխս: Դե՛, վերջ տուր այդ հիմարուրյանը, վերջացրու:

Տնրոցները դադարեցին, և ցավը մատից չքացավ: Տղան փոքրինչ ամաչեց և ասաց.

- Մորաքույր Պոյի, ինձ քվաց, թե բունավորվել է և այնպես ցավում էր, որ ատամիս ցավը բոլորվին մոռացա:

- Աւա՞նդ: Ի՞նչ է պատահել ատամիդ:

- Մեկը շարժվում է և սարսափելի ցավում:

- Դե՛, դե՛, հերթիք է, այդ տնքոցը նորից մի՛ սկսի: Բերանդ քաց: Այո, ատամդ իրոք շարժվում է, քայց դրանից չես մահանա: Մերի, մետաքսն քելը և մի խանճող քեր խոհանոցից:

Թոմն ասաց.

- Խնդրում եմ, մորաքույր, մի քաշիր, այլևս չի ցավում: Երե նոյնիսկ ցավի, եւ չեմ տնքա: Խնդրում եմ, մորաքույր, չեմ ուզում տանը նստել և դպրոցից քացակայել:

- Ուրեմն այդպես, հա՞: Ուրեմն ամբողջ այս աղմուկը նրա համար էր, որ դպրոց զգնայիր և ձո՞ւկ որսայիր: Թո՞մ, թո՞մ, ես քեզ շասա եմ սիրում, իսկ դու ամեն կերպ քո չարուրյուններով աշխատում ես իմ ծերացած սիրու կոտրել:

Սիլր այդ ատամ քաշելու գործիքները պատրաստ էին: Եթե լեյին մետաքսն քելի մի ծայրը օղակ արեց ու անցկացրեց Թոմի ատամին, իսկ մյուս ծայրը կապեց մահճակալի ոտքին: Հետո վերցրեց խանճողը և համարյա կացրեց տղայի դեմքին: Եվ ահա ատամը կախված է մահճակալի ոտքից:

Բայց չկա շարիք, առանց քարիք: Երբ Թոմը նախաճաշից հետո դպրոց զնաց, բոլոր տղաներն սկսեցին նախանձել, որովհետև վերևի ատամնաշարի մեջ զոյացած քացը նրան հնարավորուրյուն էր տալիս մի նոր ու հիանալի ձևով քել: Նա իր շուրջը հավաքեց քազմարիկ տղաների, որոնց հետաքրքրում էր այդ երևույթը: Սի տղա, որ մատը կտրել էր ու մինչ այդ ընդիանուր ուշադրուրյան և հարգաճը կենտրոնում էր գտնվում, հանկարծ իրեն զգաց համակրանքից ու փառքից զրկված: Նա շատ վշտացավ և արհամարհանով ասաց, թե մեծ քան չէ Թոմ Սոյերի պես քելը, քայց մի որիշ տղա պատախանեց. «Խաղողը խակ է»: Տղան հեռացավ փառքից զրկված հերոսի նման:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Համառոտ պատմի՞ր այս հատվածը:
2. Ի՞նչ վերաբերմունք ուներ մորաքույրը Թոմի նկատմամբ: Կարդա՞ այդ հատվածները:
3. Քո կարծիքով ինչպիսի՞ տղա էր Թոմը:
4. Հևտնկայ դարձվածները փոխարինի՞ ուրիշ դարձվածներով. հոյար կապել, շունչը կարվել, ուժ հավաքել, համբերությունը սպառվել, գյուղին խաղ խաղախ, սիրաք կօտքել, պատրվակ փնտրել:
5. Մի փոքրիկ պատմույթուն հորինի՞ օգտագործելով 4-րդ առաջարդանքի դարձվածները:
6. Գրի քո մեկ օրվա օրագիրը:

\* \* \*

**C**ուսով Թոմը հանդիպեց զյուղի շրջմոլիկ Հերլերի Ֆինին, հարբեցողի տղային: Բոլոր մայրերն ամրող հոգով ատում էին Հերլերին և միաժամանակ վախենում, որովհետև նա ծոյլ, սանձարձակ, գոեհիկ ու վատ տղա էր, մինչդեռ բոլոր երեխաները համակրում էին նրան, սիրում նրա արգելված ընկերությունը, ցանկանում նմանվել նրան: Թոմը մյուս հարգարժան ընտանիքների տղաների նման նախանձում էր Հերլերին ազատ վիճակին: Նրան ևս խստորեն պատվիրել էին չխաղալ այլ տղայի հետ: Հենց դրա համար էլ Թոմը խաղում էր նրա հետ ամեն անզամ, երբ առիք էր ունենում: Հերլերին միշտ հազնում էր տարեց մարդկանց հնացած հագուստները, որոնք սովորաբար լինում էին պատառոտված և ծածկված տարրեր գույնի թերութ: Նրա զյլսարկը մի մեծ ճնորված քան էր, որի ճայրից պոկվել կախ էր ընկնում մի մեծ կտոր: Բածկոնք, երես բածկոն հազնում էր, համարյա կախվում էր մինչև կրունկները, իսկ ետևի կրծակները տեղափորված էին լինում մեջքից ցած: Միայն մի ուսակապ էր պահում շալվարը, որի նստատեղը նույնապես կախ էր ընկնում: Շալվարի ծոպավոր ծայրերը քարշ էին զախս ցեսի մեջ, երես դեպի վեր չէին ծալվում:

Հերլերին բափառում էր ինչպես խելքին փշեր: Լավ եղանակներն ընում էր դոների առաջ, իսկ ցուրտ օրերին՝ դատարկ տակառ-

ներում: Նա ստիպված չէր դպրոց կամ եկեղեցի գմալ, չուներ տեր ու տնօրեն և ոչ որի չէր հնազանդվում: Նա կարող էր ծովկ որսալու գմալ կամ լողալ երբ և որտեղ ոգենար, մնալ այնտեղ, ինչքան ուղինար: Ոչ որ չէր արգելում նրան կովել, նա կարող էր ուշանալ ինչքան ուղինար: Նա միշտ առաջին տղան էր, որ գարնանը բորիկ էր ման զախս և վերջինը աշնանը կոչիկ էր հազնում: Նա երբեք պարտավոր չէր լվացվել կամ մաքոր հազուսն հազնեկ: Կարող էր հրաշալի հայինյել: Մի խոսքով՝ ամեն ինչ, որ կյանքը բանկագին է դարձնում, այդ տղան ուներ: Այդպես էր մտածում Սենտ-Պիտերսբուրգի յուրաքանչյուր հարգարժան ընտանիքի պատկանող լավ դաստիարակված տղա: Թոմը ողջունեց ոռմանտիկ բափառաշրջիկներ:

- Հելո, Հերլեր:
- Բարի քեզ, երե ուզում ես:
- Այդ ի՞նչ է ձեռքիդ:
- Սատկած կատու:
- Մի տուր տեսնեմ, Հեր: Տես, է՛, ի՞նչ սիրուն է: Որտեղի՞ց ես գտել:
- Մի տղայից գնել եմ:
- Ի՞նչ տվիր:
- Մի կապույտ տոմս և սպանդանոցում գտած մի եզան փուչիկ:
- Որտեղի՞ց ճարեցիր կապույտ տոմսը:
- Երկու շաբար առաջ բնեն Ռուզերսից գնեցի՝ շրջանակ բաշելու մի ձոռով:
- Լսի՞ր, ինչի՞ են պետք սատկած կատուները:
- Ինչի՞ գորտնուկը բուժում են:
- Հա՞: Ես ավելի լավ միջոց գիտեմ:
- Գրագ կամ, որ չգիտես: Ի՞նչ միջոց:
- Հոտած ջուրը:
- Հոտած ջո՞ւրը: Հոտած ջուրը դատարկ քան է:
- Դատարկ քա՞ն, դատարկ քա՞ն: Փորձե՞լ ես:
- Ո՛չ, չեմ փորձել, բայց Բոր Տանըրը փորձել է:
- Ո՞վ ասաց:
- Նա ինքն է ասել Ջեֆ Թեչըրին, իսկ Ջեֆն ասել է Ջոնի Բեքըրին, Ջոնին ասել է Ջիմ Հոլեսին, Ջիմն ասել է Բեն Ռոջերսին, Բենն ասել է մի նեղոր տղայի, իսկ այդ նեղոր տղան ինձ է ասել: Հավատո՞ւմ ես այժմ:
- Է՛, հետո ինչ: Բոլորն էլ ստում են: Բոլորը, բացի նեղորից: Ես

նրան չեմ ճանաչում, բայց չեմ տեսել մի նեզը, որ չստի: Դատարկ քան է: Այժմ ինձ ասա, թե ինչպես է արել Բոր Տանըրը, Հեր:

- Դե, մատը բարախտել է փշակում հավաքված անձրևաջրի մեջ:
- Ցերե՞կը:
- Անշու՛շ:
- Դեմքը դեպի ծառի բո՞ւնը:
- Այո՛, հապա ինչպե՞ս:
- Որեւ բան ասե՞լ է:
- Չեմ կարծում, չփոխեմ:

- Տեսա՞ր. Էլ ինչպես կարող ես հոտած ջրով գորտնուկը բուժել այդրամ սխալ ձևով: Դա ոչ մի օգուտ տալ չի կարող: Պետք է մենակ զնալ անտառ, գտնել մի տեղ, որտեղ անձրևաջրով լցված փշակ կա և ճիշտ կեսզիշերին, մեջքդ փշակին, ձեռքդ պիտի բարախտել ջրի մեջ և ասեն.

Յորեն-զարի, ցորեն-զարի, ալյուր տուր:

Հոտած ջուր, հոտած ջուր, գորտնուկս առ:

Հետո փակ աչքերով, արագ, տասնմեկ քայլ պիտի հեռանաս, հետո երեք անգամ տեղոման շուր զա և տուն զնաս առանց որեւ մեկի հետ խոսելու: Որպիենու, երես խոսես, կախարդանքը կկորչի:

- Այո՛, երևում է, որ դա լավ ձև է, բայց Բոր Տանըրի ասած ձևի նման չէ:

- Այո՛, գրագ կզամ, որ այդպես չի արել քանի որ քաղաքի ամենաշատ գորտնուկ ունեցող տղան է: Են ոչ մի գորտնուկ չէր ունենա, եթե իմանար հոտած ջրով բուժմելու զադտնիքը: Ես ձեռքիցս հազարվոր գորտնուկներ եմ հանել, Հեր: Ես այնքան շատ եմ գորտերի հետ խաղում, որ միշտ գորտնուկներ եմ ունենում: Երբեմն ես դրանք հանում եմ լրով:

- Այո՛, լրին լավ է. ես այդ արել եմ:

- Ծի՞շտ: Ինչպե՞ս:

- Վերցնում և լրին բաժանում ես: Գորտնուկը կտրում ես այն քան, որ մի թիչ արյուն լրուր զա, հետո արյունը դնում ես լրու մի կտորի վրա, հետո էլ, կեսզիշերին, նորած լրանի լրյուրվ փորում ես մի խաշմերուկ և լրու կեսը բաղում: Այուս կեսն այրում ես: Այն կտորը, որի վրա արյուն կա, կսկսի քաշել, քաշել, փորձելով գտնել մյուս կտորը և այսպես օգնում է, որ արյունը քաշի գորտնուկը: Ծուտով գորտնուկը դրու է զալիս:

- Այո՛, այդպես է, Հեր, այդպես է, բայց բաղեկիս երես ասես՝ զնա լր-

ըի, տար գորտնուկը: Թող նա երբեք չզա ինձ մոտ, ավելի լավ կիրանի: Այդպես է անում Զո Հարպրը, իսկ նա համարյա Կունվիլ է հասել կամ եղել համարյա ամեն տեղ: Բայց լսիր, սատկած կատվով ինչպե՞ս ես բուժում:

- Վերցնում ես քո կատուն և կեսզիշերից առաջ զնում գերեզմանատուն, երբ այնտեղ արդեն բաղված է որևէ մեծ հանցագործ: Կեսզիշերին կզա մի սատանա, կամ երկուր, կամ երերը, բայց դու նրանց չես տեսնի. կարող ես խել քամու նման մի ծայն, կամ զուցե նրանց խոսելը, երբ այդ մարդուն տանելիս լինեն: Քո կատվին դրանց ետևից կույարկես և կասես. սատանան հետևում է դիակին, կատուն հետևում է սատանային, գորտնուկը հետևում է կատվին, դուր այլևս ինձ պետք չեք: Դա կոչնչացնի որևէ գորտնուկ:

- Խելիք մոտ քան է: Երբեւ փորձե՞ն ես, Հեր:

- Ո՛չ, ինձ Հոռակինս մայրիկն է պատմել:

- Ուրեմն՝ ծիշտ է, որովհետև ասում են, թե նա կախարդ է:

- Ասում են: Իսկ ես, Թո՞մ, հաստատ զիտեն, որ նա կախարդ է: Նա կախարդել է հորս: Հայրս ինքն է ասում: Մի անգամ տուն զալիս նա տեսել է, որ այդ կինն իրեն կախարդում է: Հայրս մի քար է Վերցնում, և երես տեղից շշարմվեր, նրան կլսիեր: Եվ հենց այդ զիշեր, հայրս հարրած քնած է լինում ծածկի տակ, ընկնում ու ձեռքն է կոտրում:

- Դա սարափելի է: Ինչպե՞ս է հայրդ իմացել, որ նա կախարդ է:

- Այ թեզ քան: Հայրս ասում է, որ դա հեշտ է: Նա ասում է, երես թեզ նայում են շուր աչքերով, և երես միաժամանակ փնտինում են, ուրեմն՝ կախարդում են: Երես փնտինում են, նշանակում է՝ ասուն ադրբեջ հակառակ կողմից են ասում:

- Լսի՞ր, Հեր, ե՞րբ ես փորձելու կատուն:

- Այս զիշեր: Ես կարծում եմ, որ սատանաներն այս զիշեր ծեր Ուփամսի ետևից զալու են:

- Բայց նրան շարար օրը բաղեցին, Հեր: Շարար օրն իսկ նրան տարած չե՞ն լինի:

- Ինչեր ես ասում: Ինչպե՞ս կարող ինձ նրան մինչև կեսզիշեր տանել, իսկ կեսզիշերից հետո արդեն կիրակի եր: Ես չեմ կարծում, որ սատանաները կիրակի օրերը շրջեն:

- Ստրովս շանցավ: Այդպես է: Հեր, բույլ կտա՞ս հետդ զամ:

- Անշու՛շ, երես չես վախենում:

- Վախենա՞ս չէ, մի: Կմլավե՞ս:



- Այո՛, իսկ դու պատասխանիր մլավոցով, եքս հնարավոր լինի: Վերջին անգամ դու ինձ այնքան մլավել տվեցիր, որ ծեր Հեյսը սկսեց քարեր զցել վրաս և ասել. «Անհծվի այս կատուն»: Դրա փոխարեն աղյուսակ ես նրա լուսամուտը ջարդեցի, բայց ոչ ոքի չասես:
- Չեմ ասի: Այո զիշեր ես՝ չկարողացա մլավել որովհետև մորաբուժություն հետևում էր ինձ, բայց այս զիշեր կմլավեմ: Լսի՞ր, Հե՞ր, դա ի՞նչ է:
- Ոչինչ, տիգ է:
- Որտեղի՞ց ճարեցիր:
- Անտառից:
- Ի՞նչ տամ:
- Զգիտեմ: Չեմ ուզում ծախել:
- Դե լավ, այնքան էլ փոքր է:
- Եհ, քոնք չէ, դրա համար էլ չես հավանում: Ես գոհ եմ: Ինձ ծեռք է տալիս:
- Անտառը լիբը տիգ է: Կարող եմ հազարներով քերել, եքս ուզեմ:
- Բա էլ ինչո՞ւ չես ուզում: Շատ լավ զիտես, որ չես կարող: Սա

շատ սիրուն տիգ է. առաջինը, որ այս տարի տեսել եմ:

- Լսի՞ր, Հե՞ր, ատամս կտամ դրա փոխարեն:

- Տոր տեսնեմ:

Թոմը մի բուղը հանեց և զգուշուրյամբ քացեց: Հերլեւիս աշաւ-դիր նայեց: Փորձուրյունը շատ մեծ էր: Ի վերջո, նա ասա:

- Իսկակա՞ն է:

Թոմը բարձրացրեց շրբունքը և ցույց տվեց ատամի դաւառուկ տե-դը:

- Դե լավ, - ասաց Հերլեւին, - տվեցի:

Թոմը տիգը դրեց տուփի մեջ, որտեղ բգեզն էր բանտարկված, ու տղաները բաժանվեցին, յուրաքանչյուրն իրեն ավելի հարուստ զգալով, բան առաջ:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՊՐԱՆՉԵՆԵՐ

1. Այս հատվածը մասերի բաժանիք և վերնագրիք յուրաքան-չյոր մասը:

2. Ի՞նչ վերաբերմունք ունեին Հ.Ֆինի նկատմամբ

ա) ծնողները

բ) երեխաները

գ) Թոմը:

իսկ դո՞ւ:

3. Կարդա՛ք քեզ դուր եկած երկխոսուրյունը:

4. Նկարագրիք Հերլեւի Ֆինին:

5. Ընուրագրիք Հերլեւի Ֆինին:

6. Ո՞վ էր Հուակինս ծայրիկը: Հավատո՞ւմ ես, որ նա կախարդ էր: Ինչո՞ւ:

7. «Առածանի» բաժնից դուրս գրիք առածներ սնահավատու-րյան մասին:

8. Հ.Ֆինի և Թոմի անուններից լրագիր հրատարակիք (լրագ-րում քող լինեն «Կախարդանքների մասին» և «Խորհուրդներ քո-լրին» բաժինները):

\*\*\*

ասնելով առանձնացած դպրոցի հին շենքին, Թոմն արագ ներս մտավ, շտապող բարեխիղ մարդու նման: Գլխարկը մեխից կախեց և զործնական արագուրյամբ զնաց դեպի իր նստարանը: Ուսուցիչը իր բարձր բազկարուխն թիկնած՝ ննջում էր դաս սերսող աշակերտների մոմոցի տակ: Թոմի գալը արքնացրեց նրան:

- Թոմա՞ն Սոյեր:

Թոմը զիտեր, որ երբ իր անունը արտասանվում էր լրիվ, դա արդեն զլսացավաճր է:

- Լուսն եմ, սրը:

- Այստեղ եկեք: Իսկ այժմ ասացեք, սրը, ինչո՞ւ նորից ըստ սովորյան, ուշացել եք:

Թոմն ուզում էր մի սուս ասելով ալրծնել, բայց երբ տեսավ խարտյաշ մազերի երկու հյուս՝ կախված մի մեջքի վրա, որը ճանաչեց սիրո էլեկտրական ուժով, երբ տեսավ, որ դրա կորդին էր աղջիկների շարքի միակ ազատ տեղը, բնազդաբար ասաց.

- Ես կանգնեցի Հերլերի Ֆինի հետ խոսելու:

Ուսուցչի շունչը կտրվեց, և նա անօգնական սառեց-մնաց: Դաս սովորդների մոմոցը դադարեց: Աշակերտները զարմացան. այս տղան հո խելքը չի կորցրել: Ուսուցիչն ասաց.

- Դուք... դուք ի՞նչ էիք անում:

- Կանգնեցի Հերլերի Ֆինի հետ խոսելու:


Դժվար էր այդ բառերի իմաստը սխալ հասկանալ:

- Թոմա՞ն Սոյեր, դա ամենազարմանալի խոստովանուրյունն է, որ ես երրեւ լսել եմ: Այդպիսի ամպատկառուրյան համար գավազանը քիչ է: Հանեցեք ձեր բաճկոնը:

Ուսուցչի ձեռքն այնքան աշխատեց, որ հոգնեց: Գավազանների կապուկը զգալի շափով պակասեց: Հետևեց հրամանը.

- Իսկ այժմ, սրը, զնացեք և աղջիկների հետ նստեցեք: Եվ դա բոլ ձեզ խրատ լինի:

Սենյակում բարձրացած հոհոոցը կարծես տղային ամորահար արեց, բայց իրականում շփորուրյան պատճառն այլ էր: Նա իր պաշտամունքի առարկայի նկատմամբ զգում էր վախ և երկյուղածուրյուն: Տղան բախտավոր էր: Նա նստեց նստարանի ծայրին, իսկ աղջիկը գլուխը բափ տվեց և մի կողմ բաշվեց: Փսխոցները,



իրմշտոցն ու քմիծաղներն անցան սենյակով մեկ, բայց Թոմը նստած էր հանգիստ, ձեռքերը երկարած, հայացքը նստարանին, կարծես զիքը էր կարդում: Աշակերտները նրան այլևս ուշադրույուն չդարձրին, և նորից ծայր առավ դպրոցական սովորական մոմոցը: Տղան սկսեց առջևակ կողմը գողունի հայացքներ նետել: Աղջիկը նկատեց: Նա դեմքը ծամածուց և մի բոպեի չափ գլուխը մյուս կողմը շուտ տվեց: Երբ զգուշորյամբ դեմքը շրթեց, իր առջև տեսավ մի դեղձ: Դեն իրեց: Թոմը նորից հանգիստ մոտեցրեց: Աղջիկը նորից հեռացրեց, բայց այս անգամ նվազ քշնամուրյամբ: Թոմը համբերուրյամբ վերադարձրեց այն իր տեղը: Աղջիկը բռդեց, որ մնա: Թոմն իր գրատախտակի վրա գրեց. «Խնդրում եմ, վերցրեք, ես էի ունեմ»: Աղջիկը նայեց գրածին, բայց ոչ մի նշան ցոյց չտվեց: Տղան սկսեց մի բան գրել գրատախտակի վրա՝ ձախ ձեռքով նկարածը ծածկելով: Որոշ ժամանակ աղջիկը դա չուզեց նկատել բայց կանացի հետաքրքրությունը իրեն զգացնել տվեց: Տղան շարունակեց աշխատել, առերկույր անտարքեր ծևանալով: Աղջիկը ականա շարժում արեց տեսնելու, բայց տղան ցոյց չտվեց, թե զգում է: Ի վերջո, աղջիկը տեղի տվեց և վարանելով հարցրեց.

- Թույլ տուր տեսնեմ:

Թոմը մասամբ բաց արեց նկարածը: Դա թեր տաճիրով մի տան ծաղրանկար էր: Ծխնելույզից ծովու էր բարձրանում, որը նման էր խցանահանի: Աղջկա հետաքրքրությունն սկսեց մեծանալ, և նա ամեն ինչ մոռացավ: Երբ նկարն ավարտված էր, աղջիկը մի պահ նայեց, հետո շշնչաց.

- Լավն է: Մի մարդ էլ նկարիր:

Նկարիչը բակում մի մարդ նկարեց, որը նման էր ամբարձիչ մեքենայի: Նա կարող էր տան վրայով քայլել: Բայց աղջիկը խստապահանջ քննադատ չէր: Նա գոհ էր այդ իրեշից և փսխաց.

- Չատ գեղեցիկ մարդ է: Այժմ ինձ նկարիր նրա կողդին:

Թոմը նկարեց արևի ժամացույց, վերևում լիալուսին, ծղոտե ուղեր: Չուծ մատների մեջ դրեց մի ահազին հովհար: Աղջիկն ասաց.

- Սա ավելի լավ է: Ափսոս, որ նկարել չգիտեմ:

- Հեշտ է, - փսխաց Թոմը, - ես թեզ կսովորեցնեմ:

- Խսկապես, ե՞րբ:

- Կեսօրին: Շաշին տո՞ւմ ես զնում:

- Շեմ զնա, երեւ ուզում ես:

- Լավ, պայմանավորվեցինք: Անոնդ ի՞նչ է:

- Բերի թեշըր: Քո՞նն ինչ է: Ասենք զիտեմ. Թոմաս Սոյեր է:

- Դա այն անոնն է, որով ինձ ծեծում են: Ես Թոմ եմ կոչվում, երբ լավն եմ: Դու ինձ Թոմ անվանիր, լա՞վ:

- Լավ:

Թոմը նորից սկսեց գրատախտակի վրա ինչ-որ բան գրուել, բառերը աղջկանից բարցնելով: Բայց այժմ աղջիկն այլևս մի կողմ չէր բաշվում: Նա խնդրեց ցոյց տալ: Թոմն ասաց.

- Ե՛, կարեոր բան չէ:

- Ո՛չ, ցոյց տուր:

- Ձ՛ւ, դու չեմ ուզենա տեսնել:

- Ուզում եմ, խսկապես ուզում եմ: Խնդրում եմ, ցոյց տուր:

- Ուրիշներին կասես:

- Ձ՛ւ, չեմ ասի. խսկապես, խսկապես, կրկնակի խսկապես, չեմ ասի:

- Ոչ որի չե՞ս ասելու. մինչև մահի չե՞ս ասի:

- Ո՛չ, երբեք ոչ որի չեմ ասի: Ձ՛ւ, ցոյց տուր:

- Բայց, ալլո, նայելու բան չէ:

- Որ այդպես ես անում, կնայեմ, Թո՞մ:

- Եկ նա իր փոքր ձեռքը դրեց նրա ձեռքին, և կարծառ պայքար տեղի ունեցավ. Թոմը ծևացնում էր, թե իբր դիմադրում է, բայց բռնում էր, որ իր ձեռքը աստիճանաբար սահի, մինչև հետևյալ բառերը երևացին. «Ես ծեզ սիրում եմ»:

- Այս, ինչ զգվելին ես, - և նա պինդ խփեց Թոմի ձեռքին, բայց կարմրեց և այնուամենայնիվ իրեն շյոված զգաց:

Ծիշտ այդ պահին տղան զգաց, որ մի զորավոր ձեռք բռնում է իր ականջից և դանդաղ վեր բարձրացնում: Ուսուցիչն այդ ծևով, ամբողջ դպրոցի հոփողի կրակի տակ, նրան դասարանի միջով տարավ նախկին տեղը: Ուսուցիչը նրա զիսապերեւ կանգնեց մի բանի սարսափելի բոպե և ի վերջո շարժվեց դեպի իր գահը առանց որևէ խոր ասելու: Թոմի ականջն այրվում էր, բայց սիրու ցնծում էր:

Երբ դասարանը հանդարտվեց, Թոմը ազնվորն ճիզ զործ դրեց պարապելու, բայց նրա ներքին հովումը շատ մեծ էր: Ընթերցանուրյան դասի ժամանակ նա բառերը իրար խառնեց, աշխարհազրույթան դասին լցերը վերածեց լեռների, լեռները՝ գետերի, իսկ գետերը՝ ցամաքամատերի, մինչև աշխարհում նորից բառու տիրեց: Թելալարուրյան դասին նա աղավաղեց ամենահասարակ, անգամ երեխաներին հայտնի բառերը: Նրա ձեռքից վերցրին անազյա այն մեղալը, որը հպարտուրյամբ մի բանի ամիս կրում էր:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Համառոտ պատմի՞ր:
2. Ի՞նչ վերաբերմունք ուներ Թոմք Շեքի Թևչըրի նկատմամբ: Ասածների հաստատի՞ր համապատասխան հատվածով:
3. Նկարագրիր Բեքի Թևչըրին:
4. Բնուրագրի՞ր ուսուցիչն:
5. Համեմատի՞ր Թոմի դպրոցը քո դպրոցի հետ (ուսուցիչներին, աշակերտներին, դասի ընթացքը):
6. Համեմատի՞ր այս հատվածը «Առաջին օրը դպրոցում» պատմվածքի հետ:
7. Դուքս զրիք դարձվածքները և քացարքի՞ր:
8. Գրիք քո դասարանի մասին:

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

1. Տրված երեք հատվածները վերնագրի՞ր:
2. Գրիք քո մտերիմ ընկերոջ մասին:
3. Երեք բեղ հետաքրքրեն Թոմի արկածները, վերցրո՞ւ Մարկ Տվեճի «Թոմ Սոյերի արկածները» գիրքն ու կարդա ամբողջությամբ:

## ՀԱՌՈՒ ՍԱՀՅԱՆ

## ՄԱՅՐԱՄՈՒՏԸ

Սարն առել վրան ծիրանի մի քող,  
Ննջում է կարծես ծաղկե անկողնում,  
Անտառն արևի բեկրեկուն մի շող  
Ծոցի մեջ պահել ու բաց չի բողնում:

Ժայռի ստվերը գետակին չորեկ,  
Վիզը երկարել ու ջուր է խմում,  
Հովն ամպի թեյց մի փետուր պոկել,  
Ինքն էլ չգիտե, թե ուր է տանում:

Քարափի վրա շողում է անվերջ  
Ուկե բոցի պես թեղ ծիծառի...  
Կանգ առ, հողագունդ, քո պտույտի մեջ  
Թող մայրամուտը մի քիչ երկարի:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Կարդա՝ բանաստեղծությունը:
2. Գեղեցիկ է հնչում բանաստեղծությունը: Ինչո՞ւ:
3. Դուքս զրիք բանաստեղծական գեղեցիկ պատկերները:
4. Նկարագրի՞ր քո տեսած մայրամուտը:
5. Օրվա ո՞ր պահն ես ավելի շատ սիրում: Նկարագրի՞ր այս:

## ԾԻՐԱՆԻ ԾԱՌԸ

**Յ**ովիսիս Մաքոլին շատ վաղ արքնացավ և արևի առաջին ճառագայթների տակ բռչկուտելով՝ զնաց կով ունեցող հարկ անի բակի ուղղությամբ: Բակ հասնելով, Յովիսիսը տեսավ կովը: Փորբիկ տղան կանգնեց և երկար դիտում էր: Վերջապես կովատերը դուրս եկավ տնակից՝ ծեռքին մի դոյլ և մի արռոռակ: Մաքրը մոտեցավ կովին և սկսեց կրել: Յովիսիսը ավելի մոտեցավ և կանգնեց մարդու ճիշտ ետևը: Եվ, որովհետև դեռևս լավ չէր տեսնում, նա ծունկի եկավ համարյա կովի տակ: Մաքրը տղային տեսավ, բայց ոչինչ չասաց: Նա շարունակեց կրել: Իսկ կովն ահա շրջվեց և նայեց Յովիսիսին, Յովիսիսն էլ նայեց կովին: Հատ երևոյրին կենդանուն դոր չեկավ տղայի այդրան մոտ լինելը: Յովիսիսը եկավ կովի տակից, հեռացավ և շարունակեց դիտել: Կովը իր հերքին նայում էր Յովիսիսին այնպիս, որ փոքրիկ տղան հասկացավ, որ իրենք բարեկամացան:

Տուն վերադառնալու ճանապարհին Յովիսիսը կանգ առավ դիտելու, թե ինչպես է մյուս հարկ անը ամքար շինում: Այդ մարդը շատ բարձրահասակ էր, նյարդային և անհամբեր. նա չպետք է ծեռնարկեր այդպիսի աշխատանք: Նա կատադրյամբ էր աշխատում, ամեն տեսակ սխալներ բույլ տալիս, Յովիսիսը դիտում էր նրան ու ոչինչ չէր հասկանում:

Յովիսիսը Սանրա Կլարա պողոտա վերադարձավ ճիշտ այն ժամանակ, երբ միստր Արենան հեծանիվով աշխատանքի էր գնում: Սերի Արենան դոնից ձեռքով հրամեշտ տվեց հորը և տուն մտավ:

Շարաք էր, Իրաքայի դպրոցների ամենասիրելի օրը: Փոքրինչ հեռու գտնվող մի տնից դուրս եկավ որ-ինը տարեկան մի տղա: Յովիսիսը ծեռքով ողջունեց այդ տղային և տղան պատասխանեց: Այդ տղան Լայնել Քերտոն էր, որին թեև հարկ անները հիմար էին համարում, սակայն մարդկային մի մեծ էակ էր, հավատարիմ, բարի և վնահնձն: Սի պահ հետո Լայնելը նորից նայեց Յովիսիսին և, շիմանալով անելիքը, դարձյալ ծեռքով ողջունեց: Յովիսիսը պատասխանեց: Այսպես այդ փոխադարձ ողջունը շարունակեց կանոնավոր ընդմիջումներով, մինչև որ Արայի մքերային խանորդ

կողքի տնից դուրս եկավ Օգյուստ Գորիիք:

Օգին բաղի երեխաների առաջնորդն էր դարձել այն օրվանից, ինչ Հոմեր Մաքոլին, տասներկու տարեկան դառնալով, հրաժարվել էր այդ դիրքից: Նոր առաջնորդը նայեց շուրջը, տեսնելու համար, թե հետևորդներից ովքեր են ներկա: Նա արհամարիեց Լայնելին՝ իրք իմարի և Յովիսիսին՝ իրք փոքրի, սակայն ողջունեց երկուսին է: Ապա զնաց փողոցի կենտրոն և սուլեց՝ լրազնական տղաներին հատուկ ոճով: Դա մի զիլ սուլոց էր, շատ հեղինակավոր, խիստ հրաժայական ու անպայմանորեն վճռական: Օգին սպասեց այն մարդու վատահությամբ, որը զիտի, թե ինչ է անում և ինչ արդյունքի պիտի հասնի: Անմիջապես լուսամուսներ բացվեցին և պատասխան սուլոցներ լսեցին: Շուտով մի խոսք երեխաներ փակելով եկան փողոցի անկյունը: Սի բանի բռպետում խումբը հավաքված էր: Օգի Գորիիք՝ առաջնորդը, Նիքի Փալոդան, Ալֆ Ռայֆը և Շեկ Մանուկյանը:

- Ո՞ր եք զնում, Օգի, - ասաց Նիքին:

- Գնում ենք տեսնելու, թե Հենդերտոնի ծիրանները հասե՞լ են, - ասաց Օգին:

- Ես կարո՞ղ եմ գալ, Օգի, - հարցրեց Լայնելը:

- Արի, Լայնել, - ասաց Օգին, - երեւ հասած լինեն, մի քիչ կգողանա՞ս:

- Գողանալը մեղք է, - ասաց Լայնելը:

- Ճիշտ է, բայց դա չի վերաբերում ծիրաններին, - հանդիսավոր ասաց Օգին, իսկ դու, Յովիսիս, - ասաց նա, - զնա սուն: Սա փոքր տղաների գործը չէ: Կտանգավոր է:

Յովիսիսը երեր բայլ հեռացավ, կանգնեց և դիտեց: Նա վիրավորված չէր Օգիի հրամաններից: Նա հասկանում էր օրենքը: Նա պարզապես դեռ պետք եղածին շափ մեծ չէր: Ու թեև ուզում էր հարգել օրենքը, բայց չէր կարողանում դիմանալ խմբի մեջ լինելու ցանկությանը:

Տղաները շարժվեցին դեպի Հենդերտոնի այգին: Փոխանակ փողոցներով ու մայրերով զնալու, նրանք անցնում էին դատարկ բակերով, մազլցում էին ցանկապատերի փրայու: Նրանք ուզում էին այդտեղ հասնել դժվարին, արկածայնդրական ճանապարհով: Ըրոշ հեռավորությունից նրանց հետևում էր Յովիսիսը:

- Հասած ծիրանը աշխարհի ամենահամել միրզը է, - ասա իր խմբի անդամներին:



Ծորց հարյուր մետր հեռավորության վրա տղաները կանգնեցին՝ իհանալու այդ հոչակավոր ծիրանի ծառով, որը ամբողջությամբ կանաչ էր, գեղեցիկ, շատ իին՝ շատ մեծ: Այն կանգնած էր Հենդերսոնի բակի անկյունում: Տասը տարի էր, ինչ բարի տղաները իհա-

- Մի՞րե ծիրանը մարտին է հասնում, - հարցրեց Նիքի Փալողան:
- Նախ, համարյա թե ապրիլն է, - ասաց Օգին, - և երկրորդ, վաղահաս ծիրանը շատ կարծ ժամանակում հասնում է, եթե արև է լինում:
- Վերջերս անձրև էր զալիս,
- ասաց Ալֆ Ռայֆը:
- Քո կարծիքով, որտեղից է ծիրանը սնունդ առնում, - ասաց Օգին, - ջրից և անձրևից: Ծիրանի համար անձրևը նոյնաքան անհրաժեշտ է, որքան արևը:
- Ֆերեկը՝ արև, զիշերը՝ անձրև, - ասաց Շեկ Մանուկյանը, - տարացրու և ջուր տուր: Ես զրագ կզամ, որ այդ ծառի վրա բազմաթիվ հասած ծիրաններ կլինեն:
- Երանի այդպես լինի, - ասաց Ալֆ Ռայֆը:
- Ծիրանների համար դա դեռ շատ շուտ է, - ասաց Նիքի Փալողան: - Անցյալ տարի հունիսին հազիվ հասան:
- Դա անցյալ տարի էր, - ասաց Օգին, - այս տարին ուրիշ է:

ձակվում էին ծերուկ Հենդերսոնի ծիրանի ծառի վրա: Հին, կիսաբանդ տան մեջ միստը Հենդերսոնը ամեն զարնան ուրախ անհամբերությամբ սպասում էր նրանց զալուն, միշտ գոհացնելով մանուկներին, որովհետու երկում էր վերջին բուժին ու վախեցնելով, վախցնում էր նրանց: Եվ իմաս էլ, լուսամուտի վարագույրի ետևից, միստը Հենդերսոնը գլուխը բարձրացրեց գրքից.

- Օհո՞, մի տեսեք, - ասաց նա ինքն իրեն: - Մարտի մեջ, համարյա ծմբանը, ծիրան զողանալու են զալիս: Մի սրանց նայեցեք: - Նա նորից նայեց տղաներին, շշնչարլով, կարծես թե ինքը դրանցից մեկը լինեք: - Գալիս են ծերուկ Հենդերսոնի ծառից ծիրան զողանալու, - ասաց նա: - Ահա, զալիս են, կամացուկ մոտենում են, հա, հա, - ծիծաղեց նա, - մի դրանց նայիր, նայիր այդ պուճուրին: Հավատացնում եմ՝ չորս տարեկանից մեծ չի լինի: Նորելուկ է: Եկեք, եկեք, մոտեցեք իմ իրաշախի ծառին: Երեք կարողանայի այս պահին ձեզ համար ծիրանները հասցնել, անպայման կանեի... \*

Միստը Հենդերսոնը դիտում էր, թե ինչպես Օգին իրահանգում, ուղղություն էր տալիս տղաներին, առաջնորդում էր հարձակումը: Տղաները աշալքությամբ շրջապատեցին ծառը: Նրանց սրտերում վախի ու հոյսի խառնուրդ կար: Երեք նոյնիսկ ծիրանները խակ լինեին, գործի եռյունը չէր փոխվում, նշանակություն չուներ՝ իրենք հասած ծիրանի գողության էին եկել, թե՝ խակ: Իհարկե, լավ կլինեք, որ ծիրանները հասած լինեին: Նրանք վախենում էին Հենդերսոնից, վախենում էին, որ մի քիչ շուտ են եկել, և ծիրանները կարող են խակ լինել:

- Գոյց տանը չէ, Օգի, - շշնչաց Նիքի Փալողան, երբ տղաները համարյա հասել էին ծառին:

- Տանն է, - ասաց Օգին, - նա միշտ տանն է: Պարզապես բարձրվում է: Դա ծուղակ է: Նա ուզում է մեզ բռնել: Բոլորդ ուշադիր ենքը: Դժվար է ասել, թե նա որտեղ կլինի: Խսկ դու, Յովիսիս, անմիջապես տուն գնա:

Յովիսիսը հնագանդությամբ երեք քայլ ետ գնաց և կանգնեց՝ դիտելու արտասվոր մենամարտը արտասվոր ծառի հետ:

- Հասա՞ծ են, Օգի, - ասաց Շեկը, - ինչ-որ դեղնավուն բան տեսնո՞ւմ ես:

- Միայն կանաչ, - պատասխանեց Օգին: - Դրանք տերևներ են: Ծիրանները տակն են լինում: Բոլորդ հանգիստ մնացեք: Որտե՞ղ է

## Լայնելր:

- Ես այստեղ եմ, - շնչաց Լայնելր: Նա սարսափելի վախեցել էր:
- Լավ, - ասաց Օգին, - պատրաստ եղեք: Հենց որ ծերուկ Հենդերտնին տեսնեք, փախեք:
- Իսկ որտե՞ղ է նա, - ասաց Լայնելր այնպես, կարծես Հենդերտնի կարող էր անտեսանելի լինել և կամ նապատակից ոչ մեծ մի բան, որը կարող է խոտերի միջից հանկարծ վրա ցատկել:
- Ի՞նչ է նշանակում որտեղ է, - ասաց Օգին, - նա հավանաբար տանն է, բայց երբեք չի կարելի հասկանալ Հենդերտնին: Կարող է քարնաված լինել դրսում, ինչ-որ տեղ, սպասելով, որ մեզ անակնական բերի:
- Դո՞ւ ես ծառը քարձրանալու, Օգի, - հարցրեց Ալֆ Ռայֆը:
- Հապա էլ ո՞վ, - ասաց Օգին, - իհարկե ես, բայց նախ գոնե տեսնենք ծիրանը հասած է:
- Հասած թե խակ, - ասաց Շեկ Մանուկյանը, - մենք պետք է գոնե մի բանի հատ գողանանք:
- Անշուշտ, - ասաց Օգին: - Անշուշտ պետք է գողանանք: Իսկ երես հասած է, պետք է շատ գողանանք:
- Իսկ վաղը, կիրակնօրյա դպրոցում, ի՞նչ պետք է ասես, Օգի, - հարցրեց Լայնելր:
- Ծիրան գողանալը այն գողորյունը չէ, որ գրված է Ավետարանում, - ասաց Օգին: - Սա ուրիշ բան է:
- Այդ դեպքում ինչո՞ւ ես վախենում, - հարցրեց Լայնելր:
- Ո՞վ է վախենում, - ասաց Օգին: - Մենք պետք է պարզապես զգույշ լինենք և վերջ: Ինչո՞ւ բռնվենք, երբ կարող ենք փախչել:
- Ես ոչ մի հասած ծիրան չեմ տեսնում, - ասաց Լայնելր:
- Դու ծառը տեսնում ես, չէ՞՝, - հարցրեց Օգին:
- Ծառը շատ լավ տեսնում եմ, - ասաց Լայնելր, - բայց միայն՝ այդրանը: Պարզապես մի մեծ ծառ է, ամբողջորյանը կանաչ: Բայց, իրոք, շատ գեղեցիկ ծառ է, այնպես չէ՞՝, Օգի:
- Խումբն արդեն ծառի տակ էր: Յուլիսիսը, մի քիչ հեռվից, հետևում էր նրանց: Նա բոլորովին չէր վախենում: Նա ամենին բան չէր հասկանում, բայց վստահ էր, որ սա շատ կարևոր գործ է՝ և կապված է ծառի հետ, և ծիրանի: Տղաները ուսումնասիրեցին ծիրաննու ճյուղերը, որոնք կանաչ էին, մատղաշ տերևներով: Ծիրանները բոլորը ել փորք էին, շատ խակ և հավանաբար շատ պինդ:

- Դեռ չեն հասել, - ասաց Ալֆ Ռայֆը:
- Ծիշտ է, - ընդունեց Օգին: - Ինձ քվում է, որ մի քանի օր էլ պետք է սպասել: Գուցե հաջորդ շարար:
- Հաջորդ շարար, անպայման, - ասաց Շեկը:
- Բայց շատ առատ է, - ասաց Օգին:
- Մենք չենք կարող դատարկ ծերորդ վերադառնալ, Օգի, - ասաց Շեկը: - Գոնե մի հատ պիտի քաղենք, խակ թե հասած, գոնե մի հատ, անպայման:
- Օ քեյ, - ասաց Օգին: - Ես մի հատ կրադեմ, իսկ դուք պատրաստ եղեք փախչերի: - Օգին բռավ, կախվեց մի ցածր ճյուղից: Խումբը, միստը Հենդերտնը և Յուլիսիսը հետևում էին նրան հիացումով, զարմանքով ու հափշտակորյանք: Այդ պահին միստը Հենդերտնը տնակից դուրս եկավ ու կանցնեց աստիճանների վրա: Ըոլոր տղաները ճնշողութենի նման շադ եկան:
- Օգի՝, - բրավեց Շեկ Մանուկյանը, - Հենդերտնը:
- Ինչպես վախեցած օրանգուտանը ջունգլիում, Օգին ծառի վրայից նայեց շորջը, կախվեց մի ճյուղից և իրեն ցած զցեց: Նա վազել սկսեց ոտքը դեռ գետնին շառած, բայց նկատելով Յուլիսիսին, հանկարծ կամ առավ և գոռոց տղայի վրա:
- Յուլիսին, վազի՛ր, փախի՛ր:
- Սակայն Յուլիսիսը տեղից չշարժվեց: Նա ոչինչ չէր հասկանում: Օգին ետ դարձավ, վազեց դեպի տղան, զրկեց նրան ու ետ վազեց, իսկ Հենդերտնը նայում էր: Երբ տղաները անհայտացել էին, ու ամեն ինչ նորից խաղաղվել էր, ծերունին ժպտաց, նայեց ծառին: Հետո շրջվեց ու տուն մտավ:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՊԱՆՆԵՐ

1. Սանրամասն պատմի՞ր տղաների «գողորյան» մասին: Գողորյո՞ւն էր տղաների արածը:
2. Կարդա՛ այն հատվածները, որտեղ երևում է երեխաների նկատմամբ Հեմելքանի վերաբերությունները:
3. Բացարիք հետեւյալ նախադասուրյունները:
  - ա) Նա արհամարիեց Լայնելիմ՝ իրեւ հիմարի և Յովիսիսիմ՝ իրեւ փոքրի, սակայն ողջունեց երկուսին էր:
  - բ) Այդ տղան Լայնել Քերոսն էր, որին քեզ հարեւանները հիմար էին համարում, սակայն մարդկային մի մեծ էակ էր, հավատարիմ, բարի և վեհաճճ:
4. Լայնելին բնուրագրի՞ր՝ գտնելով համապատասխան տողերը:
5. Յովիսիսին բնուրագրի՞ր՝ հաստատելով ասածներդ համապատասխան հատվածներով:
6. Կարդա՛ առաջին պարբերությունը և մեկնարանիր: Քո կարծիքով ինչպես են բարեկամանում:
7. Համեմատիք տղաներին քո բայի տղաների հետ:

## ԲՐՈՒՏԻ ՏՂԱՆ

ամին հալածում է մառախուղի բանձր բոլաները:

 Նրանք խրտնած ոչխարի պես փախչում են ձորերով: Սառախուղի փեշերից ցցվում են պղնձագոյն ժայռերի կոնուները: Քարափոր տներից կապույտ ծուխը ձգվում է դեպի վեր և լիում խոնավ ժայռերը:

Լուսանում է, լեռան հետևից ելնում է արևը, մամուշից պոկվում են անձրևի կարիները և ջինջ արցունքի նման շողշողում:

Տերքասածե բարձրանում են ժայռերը՝ մեկը մյուսից խոժոռ և ահեղի: Ահա մեկը՝ ոնցեղջուրի մոռոր հառել է մի ուրիշի, որ նման է վիրխարի գորտի: Նրանց մոտ մի ժայռ՝ կարծես ծազող արևի դեմ խոնարիվել է հերանու քրմուին: Նրանցից բարձր բարձր արձիվը ծիգ է անում քերը բափահարելու և չի կարողանում:

Այս մեր զյուղի, մեր Գյունեյ բաղի թիկոնքն է, մի խավար լարինք, որի խոր ձորերում բարակ առուն վշշում է փրփրած հեղեղի նման, որ ծափ ուրի տակից գորգած ավազը խոլ արձագանքում է:

Ավելի խորը Դրնգանն է, լուակյաց, հիվանդու և աղքատ մարդկանց բնակավայրը, որ ամառվա երկար արևը հազիվ մի ժամ շերմացնում է: Տարին բոլոր այդ ձորերում ստվեր է, խոնավություն: Մարդիկ ապրում են քարանձավներում և բարձրանում են բարե սանդուղբներով: Ուտենու մամոռուած փշակով ժայռից ժուր են քերել ու բարերի վրա բազմացրել ընկուգենի: Հորդ անձրևին ավազախառն հեղեղը ահազին վշշողով իշնում է ժայռերից, աղմկում, բամուց ընկուգենիները խշշում են, ձգում են արմատները և կռանում ձորի վրա:

Մեր Գյունեյ բայն արևոտ է, զետի ափին: Շանապարիլ ձգվում է զետի եզրով, անցնում կամուրջի հին կամարների վրայով և բարափի լանջով զնում դեպի բաղաբը: Ջրաղաները սահմանն են: Քարափի ափին նավի պահեստն է, որի ստորոտով ջուրը շառաչելով իշնում է ջրաղաների վրա:

Արևը շրացնում է ժայռերի խոնավությունը: Տաք ու փափուկ զուրչի և բարձրանում արարի դեգերից, բակերից ու բռստաններից:

Անա զիզին,<sup>1</sup> փեշերը շաղարարախ, քաղում է կանաչ պոմիդորը, գողը լցնում: Ըեմքի առաջ չոր խսիրի վրա մեկնվել է կատուն, մոռում է, աչքերը կիսախոտի անելով: Անա զիզին կողեկուզ բարձրանում է քարի վրա և կանաչ պոմիդորները շարում պատուհանի փայտերին, որ ավելի շուտ կարմրեն...

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՉԵՐԵՐ

1. Նկարագրի՞ Գյունեյ բաղը և Դրնգանը՝ օգտվելով համապատասխան հատվածներից:

2. Դուքս զրիթ

ա) ամենազեղեցիկ հատվածը

բ) ժայռերը նկարագրող հատվածը

գ) բնորյան զեղեցիկ պատկերները:

3. Գտի՞ր այն հատվածը, որտև երևում է գյուղացի կինը. փորձի՞ր նկարագրել նրա ապրելակերպը:


\* \* \*

**Յ**որովհետ տարեկան երկու մասնուկ բարձր ժայռի գլխից նայում են Գյունեյ բաղին, դողլողացող գոլորշուն, Անա զիզու բուտանին, արարի դեղերին... Դիմացը, ընդարձակ տափարակի վրա, քաղաքն է: Արևի տակ շողշողում են թիթեղյա կտորները, կարծես տները ծածկված են ապակիով: Ապակեշող տների մեջ ցոլանում է «ոռուաց ժամի» ոսկեզօծ զմբերն ու խաչը: Արևի ճառագայթներն արտացոլում են այնպես փառահեղ, կարծես զմբերն է արևը, որ իրինիվում է տների ու կանաչ պարտեզների մեջ:

Գետի ափին կանայք ցորեն են լվանում: Նրանք կուացել են և ձեռքերը ջրի մեջ ետ ու առաջ են տանում: Մի քանի կտորների վրա դեղնին են տալիս դրումները. ամայի բակերում օրորվում է արևի տակ փոած գոյնզգոյն լվացը:

Սանուկները միատեսակ են հազմված՝ երկուսն էլ տրեխավոր, չը հասարակ շապիկ: Նրանցից մեկի գոտին ծովալոր է կապոյտ փնջերով:

<sup>1</sup>զիզի - մորաբույր



Ազ ու ծախ խոր ծորեր են... Ահա Գայլաբունի ծորը՝ հատակը մուր ու խոր. վշշոց է զալիս ներքելից, ջո՞ր է վազում, թե սառը բարանձավներում շաշում է քամին: Քար են զցում և կուացած ականջ դնում: Ապա լուս իրար են նայում. նրանք չեն կարողանում որոշել՝ ջո՞րն է վշշում, թե՞ քամին:

Վայրի աղավնիների երամը փոռոցով անդունից դրուս է բռչում և գլորվող քարի աղմուկից վախեցած, ճախրում արևի տակ, ապա նորից իջնում մուրք: Արևի տակ փայլիւմ են նրանց ճերմակ թևերը: Հետո ներքելից հարյուրավոր թեր բափահարում են և հետզհետեւ սուզգում անդունից: Մանուկները լսում են լուս և երք այլևս ձայն չի զալիս ներքելից, կամաց հարցնում են:

- Ո՞ր կորան...

Վեր են կենում մանուկները, հացի կապոցն առնում և բարձրանում դեպի բրուտի քարանձավները: Մարդկանց ոտքերը և ծիերի սմբակները փորել են մեր արահետ: Որտեղ քարը փոլսը է, փոս է ընկել: Խսկ կարծը տեղերը պատրում են կապոյտ փայլով: Այդ արահետի կապերն են՝ սանդուղքածե, որոնց հասնելիս ձին գլուխը կուացնում է, հոտոտում և ապա զցուշորյամբ ոտքը փոխում, ինչ-

պես սառույցի վրա:

Եվ ինչ շատ են արահետները, որ կոշտացած ձեռքի երակների նման ցանց են կապել քարափների, ժայռերի ու քերծերի վրա, ճյուղավորվում են, քաժանփում իրարից, մեկը մի ձոր է իջնում, մյուսը քարձանում մի քարափ, մի տեղ լայնանում, մյուս տեղը քարակում, և դարձյալ խառնվում իրաք:

Դա ձմեռվա ճանապարհ, որ անցնում է արևկող տեղերով, վտակների ավազու հունով, կա գարնան ճանապարհ, կա այժի արահետ, որ բանուկ է, երբ կանաչում են քարափի ծերպերին բուած բիերը: Այժերը ժայռի ողորկ լանջով քայլում են, դունչը մեկնում են մի ծաղկի, որ զրոխը կախել է ամերոնի վրա:

Մանուկները գնում են ծանոր արահետով. մյուս կածանները նրանց անծանոր են և երկյուղալի: Ո՞վ գիտե ինչ մոր ծորեր են մտնում. այ, հենց այս մեկը, որ կեռամաններով իջնում է Հյումբարի ծորը, այնտեղ, որ ապրում է լիսեմնը<sup>1</sup>, զանգոր մազերով այն կենդանին, որ զայի նման չորեքրաք է գնում, իսկ ծիծաղում է ինչպես մարդը:

Չինջ ուրախություն է պատում ինձ, երբ գրում եմ այս տողերը ժայռերի մեջ կորած երկու մանուկների, զանգոր մազերով լիսենի և բրուտների քարանձավի մասին, որի կիսամրում բրուտը ուղրով պտտեցնում է փայտե «չարլս»<sup>2</sup> -ի կյոր տախտակը և դեղին կավից կերտում զավար ու կուժ:

Ես և իմ ընկեր Անդոն հաց ենք տանում նրա հոր՝ բրուտ Ավազի համար: Գունավոր աղլուխի մեջ Անա զիզին փարարել է լավաշ, խորված սիմինդր,<sup>3</sup> սխտորած լոբի, մի քանի փարունակ և մի քիչ պանիր:

Բրուտի քարանձավը երկու մասից է՝ առաջինն ավելի ցածր, երկրորդ՝ քեմի չափ քարձը: Առաջին մասում «չարլսն» է, ջրի կուժը և կավից ցեխը. երկրորդ մասում քերնի վրա շարփած են դեռ չքրծած կժեր, կուլաներ, զավարներ և դարակներ: Քարանձավը դուռ չլունի: Տուն գալուց բրուտ Ավազը մի քանի քար է դարսում իրար վրա, վերին էլ դնում ցարի փուշ, որպեսզի, ինչպես ինքն է ասում, «քամին խալդա» և չորացնի ամանները:

- Այ արև նիդ կծեմ, եկա՞ք,- կանչում է բրուտ Ավազը քարանձա-

<sup>1</sup>լիսեմն - լուսան

<sup>2</sup>չարլս - ճախարակ, իր առանցքի շուրջը պատկող անիլ

<sup>3</sup>սիմինդր - եղիստացորեն

վի ներսից: Իսկ մենք հիիիկ ներս ենք մտնում: Էլ սարսափելի չեն ժայռերը, երբ հնչում է այդ քավ, կրծքային ծայնը:

- Այ ձեզ մատաղ, էս կողմը նստեք, էդտե փու է...

Դրսի արևից հետո մեր աշքերը դժվար են տևսնում քարանձավի ներսը: Իսկ բրուտը կարծես ուրախացած մեր ներկայությունից, ավելի արագ է շարժում ձեռքերը: Նրա ուկրոտ մատների արանքից լաքը նկատում է անընդմեջ, ապա մատները գրկում են կավե սյունը: Դառնում է շարխը, զգում է կավե սյունը, քարակում, ապա նստում նրա բռնցքի տակ: Այս անօամ ծեռքը քարախում է կավազրի մեջ և կիսում կավե զնիի մեջ: Անորոշ է ձևը, բայց ձեռքերը այդ հարափոխով զանգվածին կերպարանը են տալիս:

- Էս ա հա՛,- և ճղփում է կավը, կարծես ճահճուտում քաղ է կուշում: Թոշում են ցեխաջրի շիթերը:

- Էս կուժն էլ պղծնեմ,- և տնքում է բրուտը, ամբողջ ուժով սևդմում կուժի ներսը, - վեր եմ կենալու:

Արդեն չարխի վրա ֆոռում է կժի նման մի քան: Ուկրոտ մատները սեղմում են Վիզը, և հյու կավը ձգվում է, քարակում է կժի վիզը: Սնաց ունկը<sup>1</sup> շինի և ուկրով նախչի կողերը:

- Հե՛-հե՛-հե՛յ, Եգոր, հե՛յ,- յմրդմբարով, պատեպատ զնում է նրա կանչի արձագանքը: Բոլոր կծերը, դորակները<sup>2</sup> զգգում են: Եցորը նրա հարևան բրուտն է, ապա լսկում է պատախանը, կարծես արձագանքը ետ է զալիս: «հո՞ւ-հո՞ւ...»:

- Անդր՝, վազի ասա զա, հաց ուտենք...

Ես մնում եմ մենակ: Տեսաում եմ ինչպես է հազցնում ունկը, քարանձավի նեղրից հանում է իին ուկրոները, որոնցով նրանց պապերը դորակների և կծերի վրա զծել են նոյն նախչերը: Բրուտը ուկրի ծայրը սրբում է քերով և զծում ո՞վ գիտի որպիսի քարի քարանձավագրնակ մարդու խազ:

Իսկ չարխը շարունակ դառնում է:

Բրուտի աջ ոտքը իջնում է փոսը, քարձանում, մարմինն օրորվում է: Ապա հանկարծ ջրիկում է մի քան չարխը դանդաղում է, ձեռքերը պոկում են կուժը և քարձը պահում: Այդ բոլորը տևում է մի ակնքարը:

- Քարի վայելում,- նոյն ակնքարը ասում է բրուտ Ավազը և քարից բռնելով՝ դուրս զալիս փոսից:

<sup>1</sup>լունկ - կամք

<sup>2</sup>դորակ - փարչ, կավե ջրամամ

Գինի՞ պիտի խմեն այդ կժից, թէ՞ աղջիկը հարսանիքի ջուրը պիտի տանի, և ո՞վ է այն հարսը, որ մեջքը օրորելով, այդ կումը պիտի կրի. բոլորին, այդ անհայտ հարսներին և աղջիկներին է ասում բրուտ Ավագը պապերից լած խոսքը:

- Հո՞ - հո՞ - հո՞-, - հիմում է Եգորը՝ փակելով մուտքը: Նա հանկարծակի է հայտնվում, և հոնդրց սարսուու է մաղում ինձ վրա:

Արև ենք դուրս զախիս: Չոր ցեխից տախտակ դարձած զոգնոցը թխկիսկացնելով, մեր հետևից լոք-լոք է անում Եգորը՝ կաղ ոտք բարչ տալով:

- Հը, բաջողլի,<sup>1</sup> Գյունեյ քաղը ո՞նց ա... Մեռնո՞ն ա շատ, թէ՞ ապրողը:

Ես աչքերս բարձրացնում եմ նրա կողմը և չեմ պատասխանում: Նա նորից է հոնդրում «հո-հո-հո», քայց արևի տակ սարսափելի չէ նրա ծիծաղը: Խոհահարուրոյն է իջնում ինձ վրա, երբ տեսնում եմ նրա զգգզված մազերը և ցեխի շիքը այտի վրա: Նա ինձ բվում է բարի մարդ, ինչպես բրուտ Ավագը, և ես մտածում եմ, թե ինչո՞ւ նա զյուղում չի երևում, ինչո՞ւ նրան անվանում են «շաշ»:

- Անդո, աշխարհում խելո՞քն է շատ, թէ՞ սարսադը...

- Սարսադը:- Իսկ բրուտը քաց է անում Անա զիզու պաշարը:

- Այ մալայեց,- բղավում է նա:- Պահ, պահ, խիա՞ր, կանաչ խիա՞ր,- և առողջ ատամներով կիսում է վարունզը:

Այժմ էլ, երբ գրում եմ մեր իին Գյունեյ քաղի մասին, օրերի մշուշից մոտենում է ինձ չոլախ Եգորը, եկուում է, ինչպես մեր ժայռերը՝ սպիտակ մառախոտի միջից: Ես տեսնում եմ նրա ցեխուու մեջքը, խոնավորյունից փտած շապիկը և կավի նման մաշկը, որ դեղնել էր քարանձավի խոնավորյունից: Եվ նորից հոնդրում է անասնական խրխինջով, ցցվում են մազերը, ինչպես տատասկի բուփը:

<sup>1</sup>բաջողլի (բուռք) - բրոջորդի

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՊՐԱՆՔՆԵՐ

1. Համառոտ պատմիր այս հատվածը:
2. Գտիր այն հատվածը, որտեղ նկարագրված են այս բաղադրքը բրուտի քարանձավները տանող ճանապարհները գ) Հյումբարի ձորք  
դ) Գայլարանի ձորք:
3. Գտիր բրուտի քարանձավը նկարագրող հատվածը:
4. Ինչպե՞ս է պատրաստվում կուօր:
5. Պատմիր տղաների մասին: Դուքս գրիր նրանց նկարագրող հատվածը:
6. Ինչո՞ւ ին Եգորին «շաշ» անվանում, քո կարծիքով:
7. Բնուրագիրի բրուտներին՝ օգտվելով համապատասխան տողերից:

\* \* \*

**Ա** հա մեր զետքը, մեր զուլալ զետքը: Կարող ես ջրի տակ խիճերը մեկ-մեկ համրել: Հորթերը վախվսելով, պոշմերը վեր պահած, մտնում են ծանծաղուտք, զուր խմում, սարսուլով ետ զախիս: Սառն է զուրք, բարձր սարից է զախիս, ուր միշտ մոայլ ամայ է նստում, ամայի տակ սառույցի հաստ շերտեր:

Իսկ երք վարարո՞ւմ է... Կոճերը է բերանն առնում, զազազած բաշը մեկ այս ափին տախիս, մեկ այն, նոր հոն ճեղքում՝ ավերելով բռտան ու մարգագետին: Հին կամուրջի գերանները դողում են շյուի նման, զետք ծանր քարեր է շպրտում կամարի հիմքերին, ասես զայրանում է, որ կամուրջն իր հոսանքը բաժանում է ճյուղերի:

Գարնան մրնկա զիշերներին ջրի վշշոցը ահարկու սարսափ է տարածում զետափի տմերում, Դրնգանի ձորերում: Զայացները լուս են, ջաղացանը վառած լապտերը ձեռքին զիշերը մոտենում է զետին՝ տեսնի չի՞ բարակել:

Գյուղից ներքև, մի բարձր ժայռի մոտ զետն արմունկ է կազմում ու կորչում ժայռերից պոկված հսկա քարերի արանքում: Ամեն տարի հեղեղն այդ քարերի վրա կիսում է ջարդված ծառեր, կոճեր, րփեր, բռչունների քանդված բներ: Գետը հասնում է քարե այդ մա-

դին թե չէ, կորչում է, ջրերը շառաջով ներքի են բափում և կատաղած դուրս գալիս Նեղը:

Նեղը, Լաստի խորի կարանը!... Ընական այդ մեծ բարայրում, որից սև ջուր է դուրս հոսում, իրքի թե ապրում է օձերի բազավորը, զոհարապատ բազր զլիսին: Անա զիզին ձեռքերը ծնկերին է խփում և աղաշում, որ Նեղուն շլողանանք, ոչ էլ կարանի մոտ, այլ բաց տեղերը, որը գետը փոխում է, և հանդարտ հոսում ավագուտի վրայով:

- Հա՛, զիզի, հա՛... Մոտիկ տեղ ենք գնում:

Եվ Անդոն, ծաղկատար երեսով իմ ընկերը, նայում է ինձ, շարժում հաստ ու կարմիր շրբունքները, ձեռքով նշան է անում դեպի ներքի, դեպի գետի արմունկը, փրփոր ջրվեժների մոտ:

Կործը սպիտակ ջրածուերը բռչում են բարից բար, պոչը երերում, ծծվում ու զնղակի պես իրենց նետում ջրի երեսին պտույտ անող մժեների երամը: Մեզ հաճելի է դիտել, թե ինչպես նրանք բռչում են փրփորի վրայով, կորչում ջրվեժի փոշու մեջ, նասում ցից բարերի ծայրին և անվախ ծծվում, այնինչ շորոշը գետը կատադրույամբ կրծում է բարերը:

- Անդոն, ա՛յ են մեկին կարա՞ս խփես...

Անդոն կուգեկուզ մոտենում է, բարը բռան մեջ: Քարի հետ ջրածի որ բռչում է և կորչում փրփորի մեջ:

- Թե իմացա՞ր նրանք որտեղ են քնում...

- Նրանք չեն քնում:

Իսկ Անդոն օրորում է զլուխը:

- Նրանք ջրի վրա ճոճ են շինում, մեջը քնում... Թե զիզին բողեք մքնով գայի, բոլորին կրոնեի...

- Բա լիս՞ մնը :

- Լիսեմնը էստեղ չի գա: Նրա տեղը վերի ճորն է:

Ժայռերի ստվերու կողերը պատած են մամուռով: Ջրի ցեղուղները բռչում են վերև, հասնում նրանց: Ու երբ ժայռի տակով անցնում ենք, մամուռի ջուրն արճճի ծանրուրյամբ կարում է մեր բաց զլիսին:

- Էն ի՞նչ էր ֆշաց...

- Առա ա, օձ կիմի... Էստեղ օձի քներ են: Որտեղ թեղ<sup>2</sup> կա, էնտեղ էլ օձը:

Ու սարսափով, վախսից զգույշ կոխելով, ցատկում ենք բարից

կարան - բարայր

<sup>2</sup>թեղ - բույսի մի տեսակ, որի միջուկը բրու կամ աղ են դնում

բար, ընկնում գետափի բանուկ ճանապարհը:

- Անդոն, թենի ո՞վ է տնկում:

- Օձը,- լիջուրյամք և մեծի շեշտով պատասխանում է ըմկերս: Եվ համոզում, որ օձը հողի մեջ բաղում է թեղի սերմը, ինչպես զիզին՝ կոտեմը, ու հետո ծրում և մեծանում է լայնեցր, ճեղքված տերևներով թեղը, որի տերևի կպած տեղը մրմռում է, այդ համոզումն արմտանում է իմ մեջ:

- Անդո՞ն, իդ թեզ ո՞վ է ասել:

- Չոլախ Եգորը:

- Բա նրան ո՞վ է ասել:

- Ո՞վ պիտի ասի: Իրա զլիսից է դուրս բերել:

Ու Նեղը չհասած, շորերս հանում ենք, կոնատակին դրած վազում: Արյեն փրփուրների միջից մեզ են կանչում արևից խամճված մանուկները: Անդոն բարից զցում է իրեն, ողի մեջ պտույտ անում և բարից փրփուրի ամենախոր տեղը: Ապա գորտի նման դուրս է բռչում, պատկում տաքացած բարերի վրա:

- Անդո՞ն, կովը թել կուտի՞:

- Չե՛, կսատկի:

- Գոմե՞շը:

- Չե՛:

- Զի՞ն:

- Չե՛... Սենակ ուղտը կուտի:

- Բա նա չի սատկո՞ւմ:

- Չե՛, ուղտը ոչ օճից կվախի, ոչ թեղից: Նրա բուրը լեյի է, օճի կծածի նման կվախի:

- Ո՞վ ասեց է՞յ:

- Ուղտապանը,- և մեջքի վրա ընկնում է ջուրը:

Իսկ ես նայում եմ ամառվա հստակ երկնքին: Այ ծուռվիզ ամայ լողում է, կարծես տափարակում արածում է և տկլոր ուղտը: Նայում եմ ամսին և մտածում, թե Անդոն և ըր է հարցել ուղտապանից: Երկի նավը առնելուց, պահեստի առաջ հաճախ շորում են ուղտերը, որոնք տիկերով նավը են բերում:

Սեր լողալու շափր կապտելն էր: Խշրոտով իրար իհն կպչում մեր ատամները, և ինչքան լի սեղմում էինք ծնուներս, չեր հաջողվում ատամների կտկտոցին վերջ տալ: Արևը թերքում էր, ստվեր լը ընկնում գետի վրա, ու սկսվում էր բարակ բամին:

- Է հերի՞ք... Չո՞րս եկ:

Վերադառնում ենք այզիների ճանապարհով: Քար ենք զցում այս քրենուն, այն ընկուղենուն, ցանկապատի վրա կալս ընկած մոշ ենք ուսում, ամեն աղբյուրից ջուր խմում, մինչև հասնենք կամուրջի գլուխը:

- Անդ՛, Անա զիզին հրեն դուանք:

- Դու առաջ անցի: Որ հարցնի, ասա մեծ ապոր քաղում քոր էինք ուսում:

Իսկ Անա զիզին երեկոյան դեմ մեր քակն էր զախս ու մորս հանդիմանում.

- Ո՞ր է էն փուշը... Ձևոս ընկնի, ականջը իլորեմ: Հալավը! քար ու բոլի են զցել, ճղուել:

- Մեր անիրավս էլ զոտին է կորցրել - պատասխանում է մայրս:

Երկուսով անիծում էին մեզ, պատմում մեր շարածնի արարքները, թե առավոտից մինչև իրիկուն անհաց կորչում ենք այզիներում, «վարսուն անզամ մտնում ջուրը դուրս զախս» և կապտած վերադառնում: Նրանք զանգատվում էին մեզանից, իսկ Անդոն գլուխը պատից վեր էր հանում և աշքով անում:

- Աղջի՛, ծեծած աղ չունե՞ս, մի բոլո տաս, - վերջացնում էր Անա զիզին:

Նրանք սուս էին մտնում, իսկ մենք ծկում էինք դիրհանքը, մեր խաղերի իրիկվա տեղը:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՊԱԶՈՂՐԱՍՆԸՆԵՐ

1. Դուքս զրիք այն հատվածները, որտեղ նկարազրկած է  
ա) զետք  
բ) վարարած զետք  
ց) զարման զետք  
դ) Նեղի:
2. Պատմի՛ր տղաների խաղերի մասին:
3. Գրի՛ր ի՞նչ իմացար ջրածնի, օձերի, ուղուի մասին:
4. Դուքս զրիք Անդոյին նկարազրող բառերն ու բառակապակցուրյունները:
5. Համեմատի՛ր Անդոյին քեզ ծանոք Հերլերի Ֆինի հետ:
6. Կարդա՛ քեզ դուր և կած երկվոտորյունները:

## Ամժականական:

1. Վերնազրի՛ր առանձնացված մասերը:
2. Կարո՞՞ղ ես յուրաքանչյուր հերոսին բնուրագրել մեկ բառով:
3. Նկարազրի՛ր Անդոյին:
4. Ըստ այս պատմվածքի նկարազրի՛ր զյուղը եւ զյուղացի երեխաներին:
5. Գրի՛ք մի հետաքրքիր պատմուրյուն քո կյանքից:

## ԹՇՎՆՈՐՍԸ

**Q**արմանալի՝ է հուշերի աշխարհը... զարմանալի ու խորիրդավոր: Թվում է մեր հուշերը տարիներով անշարժ նիրիում և ինչ-որ մոտ զաղտնարանում... և բավական է թերեւ մի հպում, որ արքնանան ու հեղեղեն մեզ կամ պարզապես տանեն զաղուց մոռացված վայրեր, հարուրյուն տան մեռած-հեռացած մարդկանց և կտրեն մեզ մեր շրջապատից:

Այդպես պատահեց ինձ, երբ վերջերս մի օր քաղաքի շուկան գնալով՝ տեսա բոշուններ վաճառող մի ծերունու: Խսկույն փոխադրվեցի մանկության օրերը և հիշեցի մեր գյուղի միակ բոշուրսին:

Քենի Թորոսը...

Դա մի փոքրամարմին մարդ էր՝ մազի մեջ կորած դեմքով, մանր, սուր, ծակող աշերով և բարակ կեռ քրով, որ հիշեցնում էր բոչնի կտուց: Չնայած թերեւ էր մարմնով, բայց քայլվածքը դանդաղ էր, շարժումները գգույց. վայսենում էր ասես մեկին արքնացնի կամ դժգոհուրյուն պատճառի: Տարվա տասը ամիսը նա ապրում էր իր տանը՝ համարյա աննկատելի, միշտ ընտանիքի օրվա հոգսերով ու գործերով զրադակած: Ասենք, կինը և երկու աղջկը նրան մեծ հոգսեր չեն պատճառում: Խսկ ամառը՝ հունիս ամսից չքանում էր հանկարծ և էլ տանը չիր երեկում, այլ միայն... շուկայում, ծերին ուռագործ վանդակ, իսկ վանդակի մեջ մեկ կամ մի քանի բոչնի բոչնի՝ վայրի բոչնուններ, որ վաճառում էր նա մեր ավանն եկած հովեկներին, իրեւ խաղալիք երեխանների համար: Վաճառում էր նոյնպես հանգիստ, անաղուկ:

- Լավ բոչնուններ... սիրո՞ւն, չա՞լ բոչնուններ...

Ասում էր ոչ թե բարձր, ծայսը ամենքին լսելի դարձնելու համար, այլ կողքից անցնող հովեկներին, մանավանդ երեւ երեխաններ ին լինում նրանց հետ: Ասում էր ու երեմն վանդակը բարձրացնում.

- Լավ բոչնի, բոչնի...

- Լավ ֆազան... Վիրու աքլոր... ֆազան...

Երբեմն էլ վանդակով բոչնունը դնում էր բարձր, տեսանելի մի տեղ ու լուս:

Մարդիկ, կանայք՝ մենակ, խմբերով անցնում էին նրա վանդակների առջևից, դիտում էին բոչուններին, կարծիքներ հայտնում և միշտ էլ հավանո՞ւմ էին, թե ոչ հարցնում էին նրանց զինը և հեռանդում:

Բայց այդպես չեն երեխանները. վանդակներում բոչուններ տեսնելով՝ նրանք կանգնում էին և ուշադիր, երբեմն զարմացած նայում վայրի բոչունների խաստավիկ վեսուրմերին, դեղին կամ սաղափի փայլ ունեցող կտուցներին, նրանց մաքրավիտուր պոչերին, ուղունքի նման աչքերին և, ծնողների վեշը քաշելով, պահանջում:

- Ուզո՞ւմ եմ...

- Հետո՞ւ, հետո՞ւ, երբ ավելի լավը կինի, - խուսափում էին ծնողները, երեխայի թևը բաշելով:


- Չի, ես իմաս եմ ուզում, - բնկը նկում էր երեխան, և իր ցանկության ու բախանձանքի մեջ համառում այնքան, որ ծնողներն ստիպված էին լինում զնել բոչունը, իհարկե, վանդակով, որովհետև առանց դրան բոչուն պահելի դժվար կիններ, մանավանդ որ երեխան ինքն էր պնդում, որ առնեն վանդակով. չի՞ որ բոչունը երեխայի համար ավելի գեղեցիկ ու հետաքրքրական է վանդակի մեջ:

Այստեղ իհշենք և այս, որ այդ վանդակները Քենի Թորոսն ինքն էր պատրաստում ուռենու, ցրտենու կամ գերամաստու շիվերից ու ծններից, և այնքան լավ, ասես զործել էր մի հմտու վարպետ: Գառունը բացվելուն պես, երբ ուրիները կարմրում էին ջրահացների մոտ, Քենի Թորոսը կտրում էր դրանց մաճր-բարակ ճյուղերը և վանդակներ հյուսում, քանի դեռ նրանք կակու էին լինում ու ծկուն: Նոյնը անում էր ցրտենու և գերամաստու շիվերով:

Նա այդ վանդակներով շուկա բերում էր ոչ միայն մաճր բոչուններ, այլև խոշոր թևավորներ՝ ցին, բազե, փասիան կամ ցախարտը... բազմացեղ ու բազմազոյն բոչուններ, բոչուններ, որ դաշտում չեն երևուում. գոյսնզգույն, ծիածանազոյն հավերեր, որ հազվազյուտ լինելով՝ խսնքացնում էին երեխաններին և զրավում անզամ մեծերին: Բերում էր և շատ վայրի աղավնիներ, որոնց տեղացիք բոլոն էին ասում... Ու այս բոլորը նա կարողանում էր վաճառել և ստացած փողը հանձնում էր կնոջը՝ տան կարիքների համար:

Որտեղի՞ց էր մեր Քենի Թորոսը բերում այդքան բոչուններ կամ ինչպէս էր կարողանում բռնել նրանց...

Այս հարցը սկզբում զրադեցնում էր և ինձ, բայց հետո թե՝ մերնք՝



ծնողներս, թէ հարևան տղաները պատմեցին, որ Ըեռի Թորոսը մեր անտառի վերին մասում մի բացատում սարքեր ու ցանցեր ունի, որոնցով և բռնում է այդ բոչուններին... Սակայն որքան էլ պատմում էին կամ նկարագրում՝ ես դժվար էի պատկերացնում բոչուններ բռնելու այդ հնարները. ի՞նչպես կարող էր բոչունն ինքը զալ-ընկնել ցանցի մեջ. այն էլ վայրի բոչունները, որ այնքան սրատես են և զգույշ... ի՞նչպես:

Մի օր Լ. Եր ես կասկածներ ու տարակույսներ հայտնեցի այդ առքիվ, մեր բաղեցի Երկու տղա, իմ ընկեր Արշամն ու Արամը, որ եղել էին Ըեռի Թորոսի որսատեղում՝ Երկար սարի վրա, ինձ առաջարկեցին ընկերանալ իրենց և զնալ անձամբ տեսնել:

Ես համաձայնեցի, և մենք զնացինք:

Մեր անտառը, որ բարձրանում է լեռներն ի վեր, մանավանդ Երկար սարի վրա շատ խիս է, ուղիղ արահետներից գորիկ, այդ իսկ պատճառով վերելքը դժվար է, առանձնապես սարի տեղերում: Դրանից էր, որ բավական Երկար տևեց մեր ճանապարհը մինչև բոչուննորսի բացատը. ստիպված էինք առաջ զնալ ճիգով. տեղ-տեղ

պետք էր ջանք բափել բարձրանալու բիերից, շիվերից, երրեմն ծառի բներից բոնելով: Ասում էին, թէ Ըեռի Թորոսը դիտմամբ է ընտրել անտառի այդ վերին բացատը, ուր ընդհանրապես թիզ մարդ է զնում, կամ՝ բոլորովին չի զնում, իտևարար վայրի բոչունները թէ առատ են այնտեղ, և թէ՝ անվախ իջնում են ամեն ծառի, բիի:

Խիստ, հաստարուն ծառերի մքամած աշխարհից հետո բացատն ինձ բվաց արևով ողողված մի կանաչ լիճ՝ բարձր բիերով ու ծառերով եզերված: Ու առաջին իսկ հայացքից բացատում ինձ զարմացրեց կանեփարելի ցանցերից շինած մի մարդահասակ շրջափակ, իսկ այդ շրջափակի վրա՝ տանիքի պես տարածված-ձգված մի ուրիշ ցանց, որի մեջտեղը ծակ էր և ծագարածի իջած:

- Այ, էս է Ըեռի Թորոսի սարքը, - ասաց տղաներից մեկը, մատնացույց անելով ցանցերից հյուսված տարօրինակ շինվածքը. ապա թևս բոնելով՝ տարավ ինձ առաջ:

Մի Երկու բայլ անելով ես ցանցի ներսը նկատեցի Երկու սովորական հավ և մի բանի մանր բոչուններ՝ ծտեր, սարյակներ, որոնցով լիրն էին գեղի պարտեզները:

- Սրանք ինչո՞ւ համար են այստեղ, - զարմացա ես:

- Բա՛. Ըեռի Թորոսը հե՞նց սրանցով է բոնում են խաս բոչուններին, - ասաց Արշամը:

Զարմանալի՛ էր. այդ շրջափակն ընկած մանր բոչուններն ու ընտանի հավերն ի՞նչպես կարող էին բոնել Երկնքում ճախրող վայրի, ազատատաեր բոչուններին:

Երբ ես իմ կասկածը հայտնեցի, մյուս ընկերս՝ Արամը, ժպտաց.

- Հենց հոնարն էլ ե՞ղ է, է...

Ապա, շորջը նայելով, ավելացրեց.

- Ինչպես Երկում է էսօր ինքն էստեղ չի:

Հազիվ նա արտասանել էր այս բառերը՝ լսեց մի խոլ ձայն.

- Էղ ո՞վ է:

Խոսքը լսեց, բայց մարդը չէր Երկում:

Ես նայեցի աջ-ձախն՝ մենքին տեսնելու հույսով:

Բայց տեսնելու փոխարեն՝ նորից լսեցի նույն խոլ, համարյալ խոպոտ, խօզված ձայնը.

- Հեռացե՛ք... Մի խոսեք... Ղերին կփախցնեք...

Դարձյալ զարմանքով նայեցի շորջս՝ բացատը շրջապատող ծառերի, բիերի կողմը:

Արամն այդ նկատելով, իրեց կողքս:

- Կարծո՞ւմ ես՝ անտառից է խոսում, - ՀՀ նշաց նա: - Չէ՛. իրե՛ Էնտե՞լից:

Նա մատնացույց արավ չոր ճյուղերով ու խոտերով ծածկված մի հողաբլուր, որ գտնվում էր քացատի եզրին՝ մի վիրխարի հացենու տակ:

Եվ մինչ Արամն ինձ քացատրում էր, թե այդ հողաբլուրը մի գետնափոր է, թե նրա կտորը շինված է երկեր, որ չկարի, իսկ ճղներով ծածկված է, որ մնա աննկատելի, հողաբլուրի տակից դուրս եկավ մի գլուխ:

- Հեռո՞ւ, մտե՞ք ծառերի տակ... դշե՞րը...

Ասաց նա նոյն խոր ձայնով և գլուխը նորից կոխսեց ներս:

Պարզվեց, որ այդ հողաբլուրը իրոք մի գետնատնակ է, որ շինել էր բռչուրսն ինքը և մտել մեջը: Այդտեղից նա հսկում էր վերևից անցնող, ցանցից վեր պտտվող բռչուններին, թե արդյոր նրանցից ո՞ր պիտի իշնի ցանցի վրա կամ ընկնի ցանցի քակարդը՝ այնտեղ եղած բռչուններով ու կոտերով հրապուրված:

Քերի Թորոսի այդ օրեա՞նն ասեմ, թե դիտարանը իսկապես մի ծալուր էր՝ զյուղական հավանոցից փոքր, ավելի շուռ՝ մի շնարույն, և այնքան ցածրիկ, որ ներս մտնելու համար բռչուրը խեչափառի պես ուտներով ետ-ետ էր սողում և մեկնվում, ընկերներիս ասելով, այնտեղ փոփած խոտերի վրա...

Ընկերներս ինձ քացատրեցին նաև, թե զիշերները Քերի Թորոսը բռում է այնտեղ՝ մի իհն յափնջի տակն ու վրան ցցելով, իսկ ցերեկը, առավոտից մինչև արևամուտ, դարանում է ակնդետ, թե ե՞ր պես է բռչուններից մեկնումենք ընկնի իր ցանցը:

Երբ, վերջապես, բռչուրսի սպառնալի կանչերից հետո, մենք հեռացանք ցանցերից և մտանք ծառերի տակ, Քերի Թորոսը դուրս սոլաց իր ծակուից և այլալս սողեսող հասավ ծառերին ու մեկեն դիք կանգնեց մեր առաջ:

Կանգնեց մազախտիվ ու խոսեց զայրացած, ծայնը խեղդելով.

- Բա դուր հավի զր՞ւմն եք: Չե՞ք իմանում, որ դուշը մարդ տեսնելիս հեռո՞ւ է փախչում... Դե՛, ել դենք չգնա՞ր, ձեն չխանե՞ք, երեսանց ապրուստը կորեք... Մի անգամ որ խոտեցին՝ ել դեսք չեն գա, իմացե՞ր...

Ապա քարկուրյունը փոխսեց մեղմուրյան.

- Տեսնում եմ՝ մեր լավ տղերըն եք, բայց ել ծառերի տակից դուրս չգաք: Բա՞ն եք ասելո՛ւ ասեք... Չէ՞... Բա կարծեցի ծեզ ուղարկել են

ինձ մոտ... Երկու օր է դուշ չեմ բռնել, շատ քարկացած եմ. չնեղանաք... Չգիտեմ ի՞նչն է խանգարում, որ անտերները չեն մոտենում: Ուզում եք բան տեսնել էստեղ, ծառերի տակ նստեցեք, մտիկ արեք, բայց անխոս: Երբ մեկն ընկնի՝ կրերեմ ծեզ ցույց կտամ...

Մենք՝ տասը-տասներկու տարեկան, ամեն բանի հետաքրքիր տղաներ, նրա խոստումից հոյսով նստեցինք հնազանդ ու աշքներս հառեցինք դեպի ցանցերը, իսկ ինքը Քերի Թորոսը նորից չորեքրաք ու սողեսող զնաց, ետին ուտներով մտավ իր ծակուուր և նոյնպես աշքերը չոեց դեպի ցանցավանդակը:

Այստեղ ամեն ինչ իրոք հետաքրքրական էր ինձ համար: Նստելով ծառերի տակ՝ մենք նկատում էինք, որ շատ մեծ ու փոքր բռչուններ էին անցնում մարուր, կապույտ երկներով, անցնում էին երբեմն քավական ցած, անգամ պտտվում էին ցանցի վերևում, բայց չին իշնում... Ի՞նչ բռչուններ էին չգիտեինք, բայց նկատելի էր, որ բազմատեսակ էին և բազմագույն: Անցնում էին հաճախ հատ-հատ, երբեմն գոյգերով կամ փոքր ու մեծ խմբերով: Անցնում էին թե՛ փոքր և թե՛ մեծ քեաբաց բռչուններ, որոնց գոյնն ու տեսակը սակայն դժվար էր որոշել օդի մեջ, այն ել ներքեւից...

Թե որքան ժամանակ էինք դիտում այլպես՝ դժվար է ասել, բայց մի պահի հանկարծ նկատեցինք, որ մի բռչուն իշավ դեպի ցանցը, իշավ իրեն ցած նետելու պես, այնպես, ինչպես որս տեսած բռչունն է իշնում. ու այդ իսկ վայրկյանին Քերի Թորոսը դուրս սողաց իր զետնափորից և չորեքրաք արջավազ տվեց դեպի ցանցը:

Հասներկվ՝ նա ցանցի տակով սողաց-մտավ ներս և ուտիինի ճկունուրյամբ կանգնեց իսկույն ու բռնեց մի բռչուն, որ տոտիկներով խճճելի էր վերևից ծգվող ցանցի թելերի մեջ և հուսահատ քափահարում էր քեւերը:

Դրան բռներկվ՝ Քերի Թորոսը ցանցի վրայով տարավ նրան մինչև այնտեղ, որ ցանցի երկու կտորը միանում էին իրար՝ բռնելով աննկատ ճեղը: Այս ճեղից նա բռչնին քանչեց ներս, կոխսեց իսկույն ուուգործ վանդակը, ապա նետվեց մի այլ կողմ: Այս անգամ բռնեց մի այլ բռչուն, որ ցանցի ծագարանման խորշից ընկել էր ներս:

Սեր քարստոցից դժբախտաբար լավ չին երևում այդ հավերի գլուխն ու փետուրները, որ պարզեինք, թե ի՞նչ բռչուններ էին, և այդ կարողացանք այն ժամանակ միայն, երբ Քերի Թորոսը, իր գետնափորը մտնելուց առաջ, ուրախուրյունից ճառագայթելով, ուուգործ վանդակը իր կալանավորներով թերեց մեզ:

- Բազարում ամենից լավ ծախվում են սրանք: Երեխանների խելքը գնում է... Լավ է, լավ է, - որախորյունից կրկնում էր նա՝ վանդակը բարձր բռնած, կարծես նրա համար, որ ավելի լավ տեսնենք իր որսը:

Այդ բռչունները, որ վախից կուշ էին եկել վանդակի մեջ, հազիվ աղավնու չափ էին, բայց երկարակոտոց. մեկը մոխրագույն թևեր ուներ, բայց ճերմակ վիզ ու կուրծք. մյուսի փետուրները խատուտիկ էին՝ կապույտ, ոսկեգոյն և սև հատեր իրար խառնված. ասես փետուրներ չէին, այլ մետարս կոռորի նախշեր, որ ստեղծում են ծիածանի պատրանք... և Քենի Թորոսն իրավացի իր իր որախորյան ու իրձվանքի մեջ. երեխաններն անշուշտ այդ սիրուն բռչունները պիտի խլեին իրար ճեռքից. անշափ գրավիչ ու հմայիչ էր մանավանդ խատուտիկը՝ իր շողողուն փետուրներով, որոնց ուզում էիր նայել անվերջ:

- Սրանց ծախելո՞ւ ես, քենի, - հարցրեց իմ ընկեր Արամը ափստանքով, որ դրանք իրենք չեն:

- Ծախելո՞ւ քա ո՞նց, - և բռնորսն որախորյունից պտտեց վանդակը: - Գիտե՞ս ինչպես կծախսեն...

Եվ մյուս օրն իսկ իմացանք, որ նա շոկայում անմիջապես լավ գնով վաճառել է դրանց և զոհ վերադարձել իր բացատը:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՊՐԱՍՅՈՒՆԵՐ

1. Վերնազրի՞ր այս հատվածը:
2. Կարդա՛ առաջին պարբերությունը և բացատրի՞ր:
3. Նկարագրի՞ր քենի Թորոսի բռչուններ որսալու սարքը:
4. Նկարագրի՞ր բռնորսի որսատեղը և զետնատնակը:
5. Համառոտ պատմի՞ր, թե ինչպես էր քենի Թորոսը վաճառում իր որսած բռչուններին:
6. Պատմի՞ր, թե ինչպես քենի Թորոսին հաջողվեց երկու բռչուն քոնել:
7. Քենի Թորոսին նկարագրի՞ր՝ զոնկով պատմվածքում համապատասխան հատվածները:
8. Նկարագրի՞ր ցանցն ընկած բռչուններին:
9. Ինչո՞ւ էր քենի Թորոսը գրադաւում բռնորսությամբ:

\* \* \*

Այդ օրվանից ես ու Արշամը կամ Արամը (որն ազատ է լինում), Քենի Թորոսի որսով հետաքրքրված, մեկ-մեկ գնում էինք նրա բացատը, տեսնելու, թե ի՞նչ բռչուններ է որսում կամ ի՞նչ-պես է որսում, ու ամեն անզամ տեսնում էինք հետաքրքիր մի բան. բռնորսը կամ իր գետնափորում էր լինում դարանած, զլուխ հազիվ հանած՝ ցանցին նայելիս, կամ արդեն բռնած բռչունները մեկ, երկու վանդակի մեջ դրած՝ կուտ էր տալիս նրանց և զարմանում, որ չէին ուտում:

- Կե՞ր, անխելք, - ասում էր նա վանդակի ճաղերին կպած բռչնին:

- Դու երկնքում էրան կուտ չես գտնի, ոչ էլ ինձ պես կերակրող: Կե՞ր...

Այս նույն խորերը նա ասում էր բռնված բոլոր հավերին, բայց բռչունները այդ կուտը (որ ցորեն էր լինում կամ կորեկ) կտցում էին այն ժամանակ, երբ նա հեռանում էր վանդակներից: Կային սակայն բռչուններ էլ, որ բնավ չէին նայում վանդակի հատակին փոփած կուտերին: Երեւում էր՝ զիտակցում էին իրենց վիճակը. Վշտից դառնում էին անտարեր, զոյտ և հապրտ... Թվում էր նույնիսկ արհամարիում էին Քենի Թորոսին և մեզ, որ նայում էինք ակնապիշ, սպասելով, թե ի՞նչ շարժումներ կամեն նրանք կամ ի՞նչ ձայն կհանեն...

Քենի Թորոսը որսում էր առհասարակ զարմանալի հազվագյուտ բռչուններ, այնախի բռչուններ, որ երբեք զյուտ չէին իշտում, ոչ էլ դաշտերում էին երեւում. ես զոնես այդպիսինների չէի հանդիպել, և այս պարագան մեկն էր այն պատճառներից, որ մեզ տանում էր Երկար սարի զլուխը: Խսկ այստեղ հասնելիս, երբ Քենի Թորոսը դարան մտած էր լինում չէր բռնում մտնենք բացատը, բայց երեւ վանդակներում բռչուններ էր ունենում բույլ էր տալիս, անզամ կանչում էր նայելու.

- Տեսե՞ք, մտիկ արեք, բայց ձեռ տալ՝ չէ՛: Չի՛ կարելի, առանց էն էլ վախեցած են: Տեսե՞ք՝ քանի էստեղ են, թե չէ զուց տանելու եմ բացար...

Այդ պահերին նա իրձվանքի մեջ էր լինում, ինչպես զանձ զուած մեկը, մանավանդ երեւ որսած բռչունները լինում էին գեղեցիկ, ուրեմն և քանկարմելք:

Մի օր էլ, երբ զնացել էինք բռնորսի մոտ, իմ ընկեր Արշամի հետ

ականատես եղանք մի օտարութի տեսարանի, մի տեսարան, որը և առիջ դարձավ այս պատմությունը զրի առնելուն: Դա խելացին մեկն էր այն տեսարաններից, որ երբեք չեն մոռացվում, ոչ էլ ցնդում են պատրանքի ու երազի պես, այլ մնում են ձեր սրտում ու զլսում ամուր նստած, որ ժամանակ առ ժամանակ կենդանի պարզվեն ձեր առաջ:

Այդ օրը, երբ ես ու Արշամը բարձրացանք որասար, այսինքն՝ երբ հասանք բացատին ու կանգնեցինք նրա պոնկին, սաղարրավետ ծառերի տակ, մենք Քենի Թորոսին դարձյալ տեսանք իր ծակուում մեկնաված, աչքերը ցանցերի կողմք չած: Նորից լարված սպասում էր, թե ի՞նչ բռչուն է իշխելու ցանցի վրա, որ կամ պիտի խճճվեր թելերի մեջ, կամ, մասն բռչուններով, գուցե և այնուեւ շաղ տված կուտերով հրապարակած, ձագարած տեղով սահեր-ընկեր ներս:

Կանգնելով բացատի պոնկին մենք զգուշացանք որևէ շարժումով խանգարել մեր բարեկամ բռչորսի նվիրական այդ պահը: Անխոս նստեցինք ծառերի տակ և նոյնպես նայեցինք մերը ցանցապատնեշին, մերը Քենի Թորոսին, որ բաց, բրդու գլուխը վեր, ականջները խլած դիտում էր սևոտահայաց ու վերացած:

Հմա դժկարանում եմ ասել, թե ո՞րքան ժամանակ դիտեց այդպես կամ ո՞րքան անցավ, երբ նա անսպասելի մի բափով դրիս սողաց գետնափորից, կրացած վազեց առաջ և, ցանցի մի փեշը ես տանելով, մտավ ներս և ուզեց բռնել այնտեղ ընկած մի բռչուն, որի ինչ լինելը մենք չիմացանք իսկույն, բայց նկատեցինք, որ բափականին մեծ բռչուն է սև ագորդ թևերով: Միաժամանակ տեսանք և այն, որ, բռչորսի ներս մտնելու միջոցին, ցանցապակարդից վեր՝ օդում լայն պտույտներ էին գործում երկու խոշոր բռչուն է՛լ առանց թևաբախտների, պարզապես թևերը լայն տարածած: պտույտներ էին գործում արագ և իշնում հետզինետե, իշնում դեպի ցանցը:

- Կարծես արծիվներ լինեն, գիտես, - ձեռը թևիս դիպերեց Արշամը: - Ո՞վ զիտի իշնում են Քենի Թորոսի հավերը տանելու:

- Կարող է, - համաձայնեցի ես:

Բայց մենք սխալվում էինք:

Քենի Թորոսը մտավ ցանցից ներս և ուզեց բռնել այնտեղ ընկած բռչին, վերևում պտույտներ գործող խոշոր բռչուններից մեկը բափով իշավ ցած՝ ուղիղ ցանցի վրա... ոչ թև իշավ, այլ իրեն ցած նետեց այնպես, ինչպես զնդակահարված, սակայն մի տարբերու-

թյամբ. նա թևերը չծալեց սպանվածի պես, այլ իշավ թևարաց հենց այնուեղ, որ ցանցի տակն ընկած բռչունն էր, որին այդ վայրկյանին բռնել էր ուզում Քենի Թորոսը:

Արշամը, նայելով ցած նետված ահազին բռչնին, նորից ձեռը դիպերեց ինձ, շշնչալով.

- Արծիվ է կարծես: Ո՞վ զիտի իշել է ընկերին ազատելու...

Այդպէս էր արդյոք՝ ևս չհասկացաց անմիջապես: Բայց այդ խոշոր բռչունն իշնելուն պես, մի երկու փորձից հետո, մազիլներով բռնեց իրոք ցանցի տակ վերուվար անող բռչնին և ուզեց նրան բարձրացնել վեր, սակայն... զգա՞ց արդյոք, որ նա ցանցի տակ էր, թե կամեցավ թևերով պաշտպանել նրան մարդուց - թևերը տարածեց ցանցի վրա և նորից մազիլներով բռնեց ցանցն ընկած բռչնին ու բարձրացրեց... դրա հետ բարձրացավ և վերի ցանցը մի երկու մետրաչափ, բարձրացավ ու զգվեց այնպես, որ անկյուններում լորված ծովեցին:

Այդ տեսնելով Քենի Թորոսը զլսարաց վազեց-կախվեց ցանցի տակն ընկած բռչնից, միևնույն ժամանակ բռնեց վերևի բռչնի մի ուղը, որ նա չծզի-չքանի ցանցավանդակը... ու սկսվեց մի տարերային մենամարտ զայրացած վիրլարի բռչնի և մարդու միջև. արծիվը վեր էր բաշում իր ընկերոջն ու ցանցը, Քենի Թորոսը ձգում էր ներքի որքան ուժ ուներ...

Գազազած բռչնի ու մարդու պայքարը շարունակվեց երկար. բայց, ի վերջո, արծիվը տեսնելով, որ չի կարողանում այդ ձևով ընկածին ազատել ցանցից և միաժամանակ նկատելո՞վ, թե հասկանալով, որ այդ բանն արգելում է մարդը - հանկարծ թևերը տարածեց ավելի և ցանցով փարարված ոսորերով իշավ Քենի Թորոսի բաց զլսին և կսուցի հարվածներ հասցրեց նրա երեսին, կրծին... Քենի Թորոսը պաշտպանվում էր՝ ձեռքերը բարձրացնելով, բայց ինձ պարզ չեղավ, թե քանի հարվածից հետո նա իրեն զցեց գետին, ու արծիվը մնաց ցանցից դուրս և նորից շանաց վեր հանել ընկած բռչնին....

Այդ միջոցին էր ահա, որ բափով իշնելով, նրան միացավ մյուս արծիվը, որն առաջինի հետ սկզբում պտույտներ էր գործում ցանցավանդակից վեր և ապա օղից կարծես հետևում, թե ինչ է կատարիմ ներքեւում:

Իրեն ցած նետելով՝ նա նոյնպես, կարծես ընկերոջն օգնելու համար, կսուցով բռնեց ցանցից, երևի ընկածին վեր բարձրացնելո՞ւ,

թե հանելու... Բայց ընկածն էլի մնում էր ցանցի տակ. ազատել չէր լինում... Զգիտսե ի՞նչ օգացին նրանք՝ մեկել երկուսը միասին բռնցին ընկած բռչուի թևերից ու վեր բարձրացրին ցանցի հետ միասին:

Բարձրացրին այնքան, որ ցանցը նախ դարձավ կոնածեն, ապա տեղահան եղավ, ու մեկ էլ այն տեսանք, որ ինչքան բռչունները բարձրացնում էին իրենց ընկածին, այնքան նրանց հետ բարձրանում էր և ցանցը՝ արդեն իրար եկած, համարյա փալա դարձած, քիրմները կախ ընկած:

Այդպես բռչունները իրենց հարազատին տարան ցանցի հետ, տարան անտառի վրայով՝ ծառերին բաւլով, հետո, երբ հասան մի բարձր ծառի, իջան դրա վրա և սկսեցին կտուցներով քրքրել ցանցը...

Բայց մենք երկար չենք կարող նայել այդ տեսարանին. Քենի Թորոսը հսկա բռչնի հարվածներից ընկնելով, մնացել էր նոյն տեսնող. - Վազեցինք օգնելու:

- Քենի՛ Թորոս, Քենի՛ Թորոս, - կուացավ Արշամը նրա վրա: - Եղ ի՞նչ եղավ, վեր կաց իլա...

- Ե՞ն, տեսա՞ք, - խոսեց Քենի Թորոսը: - Դոր եղ որտե՞ղ էր այսար, մի քիչ շուտ գայիք, էին...

Մենք նրան նստեցրինք և ապա, ոտի կանգնեցնելով, քերեն ընկած տարանք իր հողատնակի մոտ. նա ոչ քե տխուղ էր, այլ ընկած անասելի. Հնայած զայրացած բռչունը նրա աջ այտի մաշկը մսախառը պոկել-կախել էր և մազիններով ճակատը ճանկուել մի քանի տեղից, բայց նա չէր տնքում, հայդոյում էր միայն և սպանում.

- Ես դրանց ցոյց կտամ... Ձեռիցս չեն պրենի...

Նրան հանգստացնելու, մկնիրաբելու համար բառեր չգտնելով՝ մենք տակավին դեպքի տպավորության տակ, հարցրինք, թե ի՞նչ բռչուններ էին դրանք, նա պատասխանեց համարյա բարկացած.

- Բա չտեսա՞ք, որ արծիվներ են, եկել էին ցանցից ազատեն իրենց ծագին: Բա չտեսա՞ք ոնց էին կատաղել անիրավները... Էսպես բան առաջին անգամն է պատահում ինձ: Ես դրանց ցոյց կտամ...

Մենք չհարցրինք, թե ի՞նչ կարող է անել նրանց... իիմա դրա ժամանակը չէր. պետք էր մարդուն օգնել, որ արյունոտ վերքերը լվանա և մի քանով կապի: Իսկ երբ գետնափորում պահած կավե կուլայի շրով լվաց երեսի, ճակատի ճանկավածները և ապա կապեց ինչ-որ փալասներով, նա մոտեցավ հողատնակի առաջ շարված ու-

ռագործ վանդակներին և ոտքի մի քանի հարվածով ջարդեց լրանք, ապա արացիներով վկեց իր ծակուի մուտքը:

Այստեղ էլ մենք հարմար չհամարեցինք հարցնել, թե ինչո՞ւ է այդպիսի անում: Մտածում էինք, գոնք ես մտածում էի, թե մարդ է, բարկացել է անհաջողորդությունից և սրտի բարկությունը բափում է անշունչ իրերի վրա...

Բայց այդ օրվանից նա իջակ գյուղ և հաջորդ տարին էլ չքարձրացավ Երկար սար' անտառի բացատը: Խոսում էին, թե վող չունի ցանց ու սարը առնելու: Սակայն մի քանի տարի հետո, երբ ես (քաղաքի ուսումից վերադառնալով) նրան տեսա իր բանջարանցը ջրելիս (մի քան, որ կինն էր անում առաջ), հետաքրքրվեցի, թե մի՞՞ր էլ բռչնորսությամբ չի գրանդում, նա զլույր տարութերեց.

- Շ՛ւ, ախավերս... Էլ արծակած... Աշխարհում ամեն ինս-ջինս ուզում է ապրել իր ընկերի, իր ծագի հետ... Ինչո՞ւ խանգարել: Թո՞ղ ապրեն իրենց համար...

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՊԱՉԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Այս մասը վիքք հատվածների բաժանիր և վերնագրիր յուրաքանչյուր հատվածը:

2. Մանրամասն պատմի՛ր գազազած արծվի և մարդու պայքարի մասին:

3. Պատմի՛ր բակարդն ընկած բռչունների մասին:

4. Քենի Թորոսը ինչո՞ւ բողեց բռչնորսությունը:

## ԱՆԻՔՐՈՎԱՐԱՐ

1. Քեզ դոր Եկա՞վ այս պատմվածքը: Ինչո՞ւ:

2. Ո՞ր պատմվածքի հետ կհամեմատես «Թոշնորս»:

3. Քենի Թորոսին բնորպագրի՛ր:

4. Ի՞նչ գիտես արծիվների մասին:

## ՀԱՄԵՐՁ

Վտակը ժայռից ներքև է բռչում,  
Թափ առած ընկնում քարերի զլվին,  
Զարկում ավազին, շաշում է, ճշում,  
ճշում անհանգիստ, փրփուրը բերնին:

Ինչպես ծերունին, ձայնով պառաված  
Զայնակցում է Ժիր բոռնիկի երգին,  
Այնպես է ծերուկ անտառը կամաց  
Արձագանք տալիս ջղի աղմուկին.

Այնինչ բնուրյան զվարք համերգի  
Ունկնդիրն անխոս, հավիտենական,  
Ժայող մտախոհ՝ իր մռայլ մտրի  
Ետևից ընկած՝ լում է նրան:

## ՀԱՐՁԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

- Կարդա՛ք բանաստեղծությունը:
- Ի՞նչո՞ւ է բանաստեղծությունը կոչվում «Համերգ»:
- Բանաստեղծության մեջ ի՞նչն է ավելի շատ՝ գո՞յնը, ձա՞յնը, շարժո՞ւմը:
- Ի՞նչ բառերով ու արտահայտություններով է հեղինակը պատկերել շարժումը:
- Թվարկի՛ր համերգի մասնակիցներին: Փորձի՛ր հնարավորին շափ դիպուկ բառերով բնորոշել նրանց:
- Դուրս գրիր գնդեցիկ պատկերները:
- Ո՞ր բառատողն է թեզ ավելի շատ դուր զայիս: Ի՞նչո՞ւ:
- Ի՞նչ գոյներ կօգտագործես այս բանաստեղծությունը նկարագրելիս:

## ՉԱԼԱՆԿԸ

**Ը**ատ բան կարելի է պատմել շների մասին, բայց այն, ինչ ուզում եմ պատմել, վերաբերում է մեր շանը, որն արդեն չկա: Մեր Զալանկը մի սկ, բրդոտ շուն էր, կործքն ու վիզը ճերմակ, որ հեռվից բվում էր սպիտակ վզկապ: Փոքրուց նրա ականջներն ու պոչը կտրել էին, այդ պատճառով ամառը սաստիկ տանջվում էր ճանձերի ճեռից, հողը փռու էր անում՝ մեջը պառկում, կամ ժամերով մտնում էր բիերի ու լորիների արանքը և դուրս զայիս միայն այն ժամանակ, երբ անձանոր ոտնածայն էր լուս քակում կամ անցնող շան հոտ էր առնում:

Զարմանալի շուն էր մեր Զալանկը, տարբեր մարդկանց վրա հաշում էր տարբեր ճեռով. մուրացկանների վրա հատընդհատ, ասես իմացնելու համար միայն, անձանորների վրա տարակուտով, երևի մտածելով, թե համկարծ տան քարեկան չինի<sup>o</sup>, ճեռնափայտով մարդկանց վրա՝ հալսուն: Ինչպես երևում էր, փայտ չէր միրում (դրանով հաճախ խփում էին իրեն). բայց, դրա փոխարեն, պատկառանքով էր վերաբերվում լավ հազնված մարդկանց... Հաջում էր նրանց վրա այնչափ, որ իմացնի, թե մարդ է զայիս... Իսկ բյուսվի կամ զգրի վրա չէր հաշում. մի երկու քերան «հաֆ» էր անում, կլանչելու պես ու մոռոցով քաշվում մի կողմ: Վախենում էր...

Ես այն ժամանակ չի հասկանում դրա պատճառը, բայց իմա մտածում եմ, որ Զալանկը երևի ընդօրինակում էր մեզ. ինչ վերաբերմունք մենք ունեինք դեպի մարդիկ, նոյնն ուներ և նա: Մենք մուրացկաններին խցում էինք, և Զալանկը չէր հալածում նրանց, բույլ էր տալիս մտնել քակը. մենք լավ հազնված մարդուց քաշվում էինք, քաշվում էր և նա, բյուսվից ու զգիրից վախենում էինք, վախենում էր և Զալանկը...

Դրան հակառակ՝ մենք սիրում էինք մեր տավարը. սիրում էր և նա... Երես պատահեր, օրինակ, մեր եզներն առանց հսկողի մնային դաշտում, Զալանկը կմնար նրանց մոտ, նոյնիսկ առավոտից մինչև երեկո կհսկեր քաղցած, և երեկոյան միայն, երբ եզները զային տուն, նա էլ հետները կզար:

Կամ, օրինակ, մայրս հավերին կուտ էր տալիս. պատահում էր, որ

հավերի մեջ լինում էին հարևանի հավեր: Սայրս «օտար, օտար» ասելով քշում էր դրանց, որ մերոնց կուտը չլիլն: Երբեմն Զալանկն ինքն էր անում այդ քանը, եթե մայրս չէր նկատում օտար հավերին. նա ցատկում էր կուտ ուստող հավերի մեջ և «օտարներին» քշում. ընկնում էր նախ մեկի ետևից ու բռուացնելով հալածում նրան այնքան, մինչև որ բոցնում էր ցանկապատի այն կողմը: Հետո զային էր մյուսներին...

Չմերդ հայրս Զալանկին կապում էր մեր գոմի չարդախում, հենց գոմի դրան առաջ, որ նա խոտ էր դնում նրա համար, որ տեղը փափուկ ու տաք լինի:

Հայրս Զալանկին գոմի դրանը կապում էր նրա համար, որ գող զալու դեպքում իմացնի, որովհետև գոմը գտնվում էր մեր տնից բավական հեռու: Եթե պատահեր դուռը կոտրեին և ամրող տավարը տանեմ: Հինք իմանա:

- Քնածն ու մեռածը մին է, - ասում էր հայրս և միշտ զգուշացնում, որ եթե ինքը, պատահեց, տանը չեղավ, մենք չմոռանանք Զալանկին կապել գոմի չարդախում:

Եվ, պետք է ասած, Զալանկի պատճառո՞վ, թե նրա ահից, ոչ միայն մեր գոմից, այլև մեր քակից քան չէր գողացվում: Հայրս հավատացած էր, թե մի քան պատահելիս Զալանկը հաշողով կիմացնի:

Իսկ Զալանկը երբեք սուտ չէր հաշում... Դա արդեն հայտնի էր:

Ու ահա ձմռան մի զիշեր, եթե մեր տանը բոլորս քնած էինք, հանկարծ զարբնեցինք ինչ-որ տարօրինակ ձայներից: Մեկը դիպչում էր մեր դրանը, ճանկուտում և մի տեսակ, մոռոցի նման, ձայներ հանում:

Առաջինը զարբնեցինք ես ու մայրս: Հայրս, սովորաբար, խոր էր քնում, մինչև չիրեկ՝ չէր զարբնի:

Մի քանի անգամ ականջ դնելով այդ տարօրինակ ձայներին, մայրս արքնացրեց հորս.

- Տես մի էն ի՞նչ է, որ դուռը չանգում է...

Այդ բոպեին դրան ճանկուտոց կրկնվեց. նորից մեկը դիպչավ դրանը, և լսեց զավված կլանչոց:

- Շուն է, - հարցրեց հայրս տարակուսած, անկողնում նստելով: Ապա վեր կացավ, արխալուղը զցեց ուսերին ու զնաց դեպի դուռը:

Բայց մայրս չրողեց դուռը քանալ:

- Կատաղած շուն կլինի, աման...



Հայրս լուսամուտի ապակիների միջով նայեց դուրս, քայց քան չնկատելով, լուսամուտի մի վեղկը քաց արավ ու գլուխը դուրս հանեց:

- Դե կորի՛, - պոռաց նա և ետ դարձավ: - Մեր շունն է, կապը կտրել է:

- Բա խի՞ է դուռը չանգում, - զարմացավ մայրս: - Շիմի՞ սոված է:

- Զէ. հենց իրիկունը, գոմը փակելուց հետո եմ հաց տվել, - պատախանեց հայրս: - Ով գիտի գելի հոտ է առել, վախից կապը կտրել՝ դեսն է եկել...

Եվ հայրս, ուսերին զցած արխալուղը մի կողմ դնելով, ուզում էր կրկն անկողին մտնել, եթե շունը, որ լուն էր այդ բոպեին, նորից դիպչավ դրանն ու կլանչեց:

- Զէ: Սա իսկ որ գելի հոտ է առել, - կրկնեց հայրս: - Վախից է...

չում է...

Ու նորից բարկացավ.

- Դե, կորի՛, անպետք:

Չալանկը ընդհատեց կլանչոցը, բայց դարձյալ դրոնվը դիպավ:

- Քեզ պես հազար շուն սատկի, ես ցրտին դուրս չեմ զա, - ասաց հայրս ու մտավ անկողին:

Ծունը դրան ետևից կարծես զգաց այդ բանը և ավելի անհանգուացավ. սկսեց նորից կլանչելու ու բարը դրանը քսել...

Կլանչում էր, բարը դրանը քսում և մի վայրկյան լրում, սպասում: Տեսներով ծայն չենք տալիս՝ շարունակում էր նույն ճանկուոցն ու կլանչը:

Երբ շատ կրկնեց այդ, հայրս է՛լ չհամբերեց. վեր կացավ բարկացած և այս անգամ, առանց ուսերին մի բան զցելու, դուռը բաց արավ, դրան ետև ը դրված ձեռնափայտը վերցրեց ու... շանը.

- Այ քեզ, քսո՞ւ անտեր:

Ծունը կլանչելով հեռացավ:

Հայրս նորից տուն եկավ, դուռը փակեց ու մտավ անկողին:

- Կատաղել է, չի քողովում մարդ քնի:

Բայց հազիկ անկողին էր մտե՛ Չալանկը դարձյալ եկավ, դարձյալ դրոնվը դիպավ ու կլանչեց:

Հայրս ուզում էր էլի բարկանալ, բայց այս անգամ ճայրս խորհուրդ տվեց՝ վեր կենալ, տեսնելով ի՞նչ է պատահել:

- Էս շունն իսկի էսպես չի արել: Չընի՞ գոմը գող է մտել, - կասկած հայտնեց նա:

- Ես կարծում եմ զեկ է տեսել, դրանից է փախչում, - ասաց հայրս, դժգոհ վեր կենալով ու հազնվելով: - Եթե գող ըլներ՝ կհաշեր: Ծունը միայն զեկ տեսնելիս չի հաջում:

- Դե որ էլպես է՝ հրացանը վերցրու, - խորհուրդ տվեց մայրս անհանգիստ, - սոված գեկեր կրկնեն...

Հայրս այդպես էլ արավ. հազնվելուց հետո վերցրեց տան անկյունում կախված մեր իին բափանչան ու սկսեց վառող լցնել:

- Դու էլ վեր կաց, այ որդի, - ասաց մայրս: - Վեր կաց, ճրագ վառի, հորդ հետ գնա: Գելերը ճրագի լույսից վախենում են:

Ասաց ու ինքն էլ վեր կացավ:

Եվ մինչ հայրս հրացանը կլցներ, ես հազնվեցի արագ, զայլ տեսնելու ցանկուրյամբ տարված: Ծառ էլ լսել գայլերի մասին, բայց չի տեսել:

Ճրագը զտա, վառեցի և հորս հետ դուրս եկա:

Դուռը բաց արինը թե չէ Չալանկը, կապի կտորը վզին, դիպավ հորս ուսներին, կլանչեց ու առաջ փաղեց:

Բայց հայրս կանգ առավ շուրջը նայելու:

Ես նոյնապես նայեցի. զայլ չի երևում արդյոր...

Ցուրտ էր, ծյուն... Գետինը, տանիքները, պատերը, ծառերը - ամեն ինչ ծածկված էր ծյունով: Թեև անրուսին գիշեր էր, բայց սպիտակ ծյուների վրա ամեն ինչ երևում էր պարզ:

Գայլ չկար... այսինքն՝ չկային զոյզ ճրագի պես վառվող աչքեր, ինչպես նկարագրել էր մայրս:

«Երևի գոմի մոտ է», մտածեցի:

Ծունը, որ առաջ էր գնացել, նկատելով հորս և իմ կանգ առնելը, ես դարձավ իսկույն, կլանչեց ու նորից առաջ ընկավ՝ շոտ-շուտ ես՝ հորս երեսին նայելով, ուզում էր կարծես հասկացնել, որ հետև ենք իրեն:

Հայրս, հրացանը պատրաստ բռնած, դարձյալ չորս կողմմաչք ածերով, ես էլ նրա հետ, բայլ առ բայլ զնացինք շան ետևից:

Չալանկը վազում-զնում էր մինչև գոմի դուռը, այնտեղից վազում, զայիս էր հորս մոտ, կլանչում և դարձյալ զնում դեպի գոմը:

Այս բանը Չալանկը կրկնեց մի բանի անգամ, և հայրս, էլ առանց շուրջը նայելու, շտապեց դեպի գոմը:

- Էստեղ մի բան կա, - ասաց նա ու քայլերն արագացրեց:

Ես, ճրագը ծեռիս, հետևեցի նրան:

Չալանկը, գոմի դրան առաջ կլանճած, սկսեց կլանչելու ու անհանգիստ շարժումներ անել:

Հայրս անմիջապես բացեց գոմի դուռը, և երբ մտանք ներս, ու ես ճրագով լուսավորեցի գոմը - մեր աչքին պարզվեց մի այսպիսի տևսարան:

Մեր մեծ կովը ծնել էր, հորը կովի տակ փռած ծղոտին ընկած շարժում էր երկար ուսները և ուզում բարձրանալ: Բայց չէր կարողանում: Իսկ մայրը մզզալով անհանգիստ շուր էր զայիս երկու կողմի վրա, կապը ծիգ տալիս՝ դունչը հորը հասցնելու... Ու չէր կարողանում:

Հայրս իսկույն վերցրեց հորը, մաքրեց, աղ արավ ու դրեց մոր առաջ...

Եվ մինչ հայրս մաքրում, աղ էր անում - Չալանկը, ուրախ կլանչուով, բռչկոտում էր դեստուն: Իսկ հետո, երբ հայրս հորը դրեց մոր

առաջ՝ Չալանկը նստեց և, դունչը բարերին դրած, սկսեց բարի աշքերով նայել կովին ու հորրին, որը դարձյալ, ժամանակ առ ժամանակ, մզգում էր քոյլ ծայնով և փորձում վեր կենալ, կանգնել քոյլ ոտների վրա...

Այդ տեսնելով՝ Չալանկը ուրախորյունից կլան-կլանչում էր և կտրած պոչը շարժում շարունակ:

- Այ կեցե՛ս, Չալանկ, - ասում էր հայրս, նրա գլուխը շոյելով: - Ես թեզ գոր տեղը ծեծեցի:

Պարզվեց, որ Չալանկը, դրսից լսելով գոմում կատարվող անհանգստորյունը, կապր կտրել էր՝ եկել մեզ իմացնելու:

Այդ օրվանից մենք սկսեցինք սիրել Չալանկին առանձին սիրով: Եվ երբ պատահում էր, նա հաշում, կլանչում էր դուրսը՝ մենք միշտ ուշադիր էինք նրա ծայնին:

Գիտեինք, որ Չալանկը ստու չի հաշի:

- Ծոնը լսելացի կենդանի է, - ասում էր հայրս այս դեպքից հետո: - Ծան ախաղոր պես պիտի սիրել...

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Համառոտ պատմի՞ր:
2. Գտի՞ր այս պատմվածքի
  - ա) ամենահետարրիքի
  - բ) ամենահոգի
  - ց) ամենազարմանալի հատվածները:
3. Ո՞րն է այն նախադասորյունը, որը ստեղծում է յարված, սպասում իրավիճակ:
4. Նկարագրի՛ր Չալանկին:
5. Բնուրագրի՛ր Չալանկին՝ հաստատելով ասածներդ համապատասխան հատվածներով:
6. «Առածանի» բաժնից դուրս գրիր առածներ շան մասին: Բացատրի՛ր դրանք:
7. Շարադրորյուն գրիր՝ առածներից մեկը դարձնելով վերնագիր:
8. Ի՞նչ զիտես շների մասին:

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

### ՃՈՒՆԸ

ավ չեմ հիշում՝ երկրորդ քե երրորդ դասարանի աշակերտ էի: Մի ուսումնական ծանրը ունեինք, օտար մարդ էր, մեկ-մեկ մեր տունն էր գալիս, մերոնց հետ գրույց էր անում:

Եղ ժամանակները մի խավս դեար պատահեց: Մեր հարևան հովիվը մեռավ: Նա երեք շուն ուներ: Էս երեք շունը իրենց մեռնելուց մի քանի օր առաջ անդադար ոռնում էին էնքան ողբավի ու շարագուշակ, որ ահ ու սարսափ էին զցել ամենքի սիրուր:

- Չո՞ն, չո՞ն, ձեր գլուխն ունեք, քա՞նի ոռնաք, - կանչում էր երիտասարդ հովվի մերն ու փետով զարկում շներին: Ծերը կլան-կլանչելով էս կողմ, էն կողմ էին փախչում ու մի քանի բուքեց հետո նորից սկսում ոռնաւ: Հովիվը մեռավ քե չէ՝ բոլոր հարևանները բացականչեցին.

- Այ, ընչի համար էին շները ոռնում...

Սրանից հետո մի անգամ էլ, երբ մեր ուսումնական ծանրըն եկել էր գրույց անելու, մերոնց էս դեար պատմեցին ու խոսք ընկալ շան վրա:

- Օ՛, զգիտեք, քե ինչ տեսակ կենդանի է շունը, - լորջ ու խորհրդավոր խոսեց նա:

- Ծոնը իմաստուն կենդանի է, - նույն լրջորյամբ վրա բերեց հերս:

- Այո՛, շունը իմաստուն կենդանի է, լավ է նկատել ժողովուրդը, - ասավ մեր ծանրըն ու ավելացրեց.

- Մարդկային կյանքի զարգացումը շան վրա է իմանված: Մենք լավ զգիտենք, քե ինչ կենդանի է շունը, դեռ լավ չի ուսումնասիրված շունը...

Հակառակի նման իմ դասն էլ շունն էր, ու լավ էլ անգիր էի արել: Խսկույն մեջ մտա: Ասի. - Ես զիտեմ: Մենք շունը սովորել ենք:

- Չէ, քո սովորածը շունը չի, - մեղմ ու քարի մպտալով նկատեց մեր բարեկամը: Ես փիրավորվեցի: Ո՞նց քե իմ սովորածը շունը չի... Ինքն ասում է՝ լավ զգիտենք... իսկ մեր ուսուցիչն էնտեղ... իմ տեսրակն էնտեղ - ... ևս էլ զրեր անգիր զիտեմ... և առանց լսելու ասում

է՛ քո սովորածը շունը չի... - Լա՛վ, լա՛վ նեղանալ մի՛, դե ասա տես-  
նենք ո՞րն է քո սովորած շունը, - նոյն մեղմ ժախտով հարցրեց նա  
ու թեխո բռնեց իրեն մոտ քաշեց:

Ես սկսեցի.

«Ծունը չորրոտանի, կարնասուն, մսակեր, ընտանի կենդանի է:  
Նա ունի մի գլուխ, երկու աչք, մի քիք, մի պոչ, երեսունչորս ատամ:  
Նրա մորքին ծածկված է մազով: Նա ծնում է սովորաբար 4-6 ձագ,  
բայց պատահում է, որ մինչև 12 էլ է ծնում: Չան ձագերը ծնվում են  
առաջին ատամներով, բայց կույր են լինում և միայն 10-12 օրից հե-  
տո են աշըները բաց անում: Ծունը ապրում է 15-20 տարի: Նա մար-  
դուն շատ օգուտ է տալիս...»:

Սեր ծանորը շարունակ ժպտում էր: Ես սկսեցի շփորվել, մանա-  
վանդ զիտեցած էլ հատնում էր:

- Այո՛, այո՛, ճիշտ ես ասում, սիրելին, - վրա հասավ նա: - Դասդ  
լավ ես սովորել, բայց... էղ շունը չի:

Ո՞նց քե էս շունը չի: Հապա էլ ո՞րն է շունը... Շուր հիմի մեր վար-  
ժապետիցը լավ գիտե՞ք...

- Սու՛ս, - բարկացավ վրես հերս:

- Հա՛, սու՛ս... իրենք չգիտեն ո՛ սու՛ս...

Եվ, հիշում եմ՝ էն օրը բավկական անհամորյուն արի, մինչև որ  
վերջապես ինձ լուեցրին: Այնին մեր ծանորը շարունակ ժպտում էր:

Վաղուցվա խոսք եմ ասում. մեր էն բարի, ուսումնական ծանորն  
էլ փաղուց է. մեռել: Նրանից հետո ես մեծացա, զանազան զրեր  
կարդացի, նոր-նոր բամեր իմացա ու սովորեցի: Ու ինչքան սովորե-  
ցի՛ էնքան էլ տեսա, որ ես շատ ու շատ քիչ բան գիտեմ: Չան մա-  
սին էլ կարդացի: Համ կարդացի, համ լսեցի, համ կյանքում տեսա,  
և ահա էլ բոլորից հետո հիմի գրում եմ շան մասին: Բայց համ  
գրում եմ, համ մտածում, քե ո՞վ գիտի, դեռ ի՞նչքան բան կա, որ ես  
չգիտեմ:

Այժմ առանձին սիրով եմ հիշում մեր ծանորին ու տեսնում եմ  
ճիշտ որ, էն, ինչ որ ինձ ու իմ ընկերներին սովորեցրել էին իսկի շու-  
նը չիր: Ծունը շատ ավելի մեծ բան է եռել, բան քե ես էլ կարծում էն  
ժամանակ, և դեռ ո՞վ գիտի, մեզանից հետո էլ գիտորյունն ինչեր է  
բաց անելու:

Գիտորյունը դեռ չի կարողացել որոշի, քե ո՞ր ժամանակից է շու-  
նը մարդուն ընկերացել, միայն կարծիք կա, որ ձեռնասուն կենդա-  
նեների մեջ շունը մարդու ամենահին ընկերն է:

Օրիստոնեուրյունից առաջ եղած իին կրոնները իրենց հոգւոր եր-  
գերի մեջ փառարանում էին շան հավատարմորյունն ու մարդուն  
արած ծառայուրյունները:

Սուրական ու բարեկական պալատների վրա քանդակած են աս-  
րական ու բարեկական բազավորները իրենց որսի շների հետ:

Նրանից էլ դենը, Քրիստոսից իինց հազար տարի առաջ՝ եզիպ-  
տական իին հիշատակարանների վրա զանազան տեսակի շների  
պատուկերներ կան փորագրած:

Նրանից էլ դենը զնանը, նախապատմական ժամանակների, բա-  
րե շրջանի մարդկային բնակարանների շուրջը գտնված մնացորդ-  
ների մեջ շան ուկրթներ են գտնվում:

Գիտորյունը մինչև էսօր դեռ չի կարողացել հաստատ որոշի և  
շան ժագումը: Ոմանք ասում են տանու շունը առաջ է եկել մի վայ-  
րենի տեսակից, որ այժմ անհետացած է, ոմանք ասում են զելից է  
առաջ եկել, ոմանք ասում են շնագելից (չախկալից), ոմանք էլ աղ-  
վեսից: Գիտնականներ էլ կան, որ ասում են և՝ զելից է առաջ եկել,  
և՝ շնագելից, և՝ մարդագելից, և՝ աղվեսից, դրա համար էլ շուն կա,  
որ զելի է նման, շուն կա՝ շնագելի, շուն կա՝ մարդագելի, շուն կա՝  
աղվեսի, և հասցնում են մինչև սկզբնական յորը տեսակի, որոնք էլ  
շան անունով ընդհանրապես կոչվում են շան ցեղ:

Ասում են էլ յորը տեսակից էլ հետո, տարրեր կիմաների, տարրեր  
կուլտուրաների ու խանոնորդների ազդեցուրյան տակ առաջ են ե-  
կել եղած բազմազան տեսակները, որ հասնում են մինչև իննուունի  
և ցրված են ամբողջ աշխարհում:

Ավստրալիայում մի տեսակ շուն կա, որ կոչվում է դինգո, բայց էն  
էլ տանու չի, վայրենի է:

Ինչպես աշխարհազրական և կիմայական, ինպես էլ կուլտուրա-  
կան պայմանները, մարդու պարապմունքն ու ապրելու եղանակը  
ահազին ազդեցուրյուն են արել շան քե՛ ֆիզիկական կազմվածքի,  
քե՛ մտավոր ընդունակուրյունների ու բնավորուրյան վրա: Ժո-  
ղովրդական առածն ասում է. ապրանքը քե տիրոջը չօգի, այսինքն  
տիրոջ նման չինի -գողանովի է: Եթե էսպես է, ապրանքը տիրոջ  
նման է լինում, որովհետև նրա հետ ու նրա մոտ է լինում և ամեն  
կերպ ազդվում է նրանից, են ժամանակ շունը ին ապրանքն է, որ  
բոլոր ապրանքներից ամենից շատ է լինում իր տիրոջ հետ ու մոտ:  
Եվ որովհետև ապրանքներից կամ անասուններից զրեր ամենից  
ընդունակն է, կամ, ինչպես ծողովուրդն է ասում, իմաստուն կենդա-

նի է, միշտ ազդվում է, կրբգում է, սովորում է և յուրացնում է իր տի-  
ող՝ քնավորության առանձնահատկությունները։ Առանց մանրա-  
մասնորյունների մեջ մտնելու՝ նկատված է ընդհանրապես, որ  
զյուղացու շունը կոպիտ ու անճռոնի է լինում, բայց հավատարիմ.  
Խովի զամփոր ժիր ու մտացի է լինում, որսկանի շունը ճարպիկ ու  
հնարագետ։ անքան, պարապ-սարապ պարոնի շունը՝ ծովոյ ու քա-  
պաշտ և զյուղացու անկիրը շնից էլ ավելի կոպիտ։ Փակ, անհյու-  
րասեր մարդու շունը՝ տխուր ու մոայ։

Մեր հովիվների մեջ սովորություն է հաճախ իրենց հոտը բռնել  
շների հսկողությանը։ Ամեն մի հովիվ հաստատ գիտի, որ իր շունը  
միանձամայն կփոխարինի իրեն։ Պատահում է, որ մրնագիշերով  
գելը կամ գողը վրա է տալիս, հարձակվում է, հոտը ցրվում է,  
կտրկան է անում ոչխարի մի մասն ու քշում։ Սակայն հովիվը չի հո-  
սահատվում, նա լսվ գիտի, որ իր շները կփրկեն։ Միմիայն շներն  
են իր հույսը և միմիայն նրանց է աղաղակում։ Եղ ժամանակ շների  
մի մասը ցրված ոչխարն է հավաքում, մյուս մասը կամ մինը ընկ-  
նում է քշնամու տարածի, կտրկանի ետուից՝ անդադար բարձր հա-  
շելով ու կլանչելով, որ տերն իմանա որ կողմն է, գնում և ազատում  
է քշնամու ճանկից, հավաքում ու պահում, շրոս կողմը պտտում,  
մինչև տերը վրա է հասնում։ Եվ էղակն ժամանակը ոչ մի սպառնա-  
լիքով ու ոչ մի գենրով չի կարելի ետ դարձնել հովիվ շանը։

Իսկ սովորական գիշերը ին նա անշարժ նստած է իր տեղը, իր  
քենում, հոտի կողրին և ոչ մի բանով, ոչ մի ուտելիքով չի կարելի  
նրան իրապորել, տեղահան անել, մինչև վտանգ չլինի կամ տերը  
չկանչի։ Կպատահի, որ հոտի մի կողմը մի որեւէ կասկածելի շար-  
ծում նկատի, էն ժամանակ էլ բարուն կերրա, կսոտզի, կրկին կգա  
իր թիւը։ Հովիվ շունը հովիվն ինքն է, որ կա, և դրա համար էլ հովի-  
վը իր շանը սիրում է իր անձի նման։

\* \* \*

Հիմի դուր նայեցեր մուրացկանի շանը։

Ելիազար Բլազ անոնով մի եվրոպացի գրում է. ասում է՝ կառքում,  
դիլիժանսում նստած էի, մի շուն մոտեցավ՝ բարերը բարձրացրեց  
դրեց առջևս ու աղաչափոր աչքերը ձգեց երեխս։ Կառապանը, որ  
ճանաչում էր շանը, ասակ, - «Մանք փող կունենաք, տվեք իրեն,  
պարոն. տեսեր ինչ է անում»։

Մի սև փող ձգեցի իրեն, վեր կալավ՝ վազեց մոտիկ հացրուխի  
խանուքը, փողը տվեց, հաց առավ ու մի կողմ քաշվեց, սկսեց տսել։  
Բանից դորս եկավ, որ մի մուրացկանի շուն էր, տերը նոր էր մեռել,  
մնացել էր անտեր ու իր տիրոջ նման ողորմություն ուզելով ապրում  
էր։

Հիմի էլ մի որիշ շուն։

Մենք ին լսվ գիտենք բարձրաստիճան մարդկանց քնավորությու-  
նը։ Նրանք առհասարակ խոժող են ու կոպիտ դեպի ամեն մի մարդ,  
որ ներկայացրած չի իրենց։ Ահա էս տեսակ մարդկանցից մեկը,  
կոմս Բուասին (Անդրեզի) 1774 թվին մի մեծ շուն ուներ, անունը  
Պլուտոն։ Շատ էլ սիրում էր։ Պլուտոնը տանել չէր կարող ոչ մի օ-  
տար մարդու, ու կոմսի համար հյուրերը միշտ վտանգի մեջ էին։  
Սրա առաջն առնելու համար կոմսը սկսեց իր հյուրերին ամենից ա-  
ռաջ ներկայացնել Պլուտոնին ու ասել։ Պլուտոն, ահա էս ինչ պա-  
րոնը, իմ բարեկամն է, և, միայն էսպես՝ Պլուտոնին ներկայացնելուց  
ու ծանրություններուց հետո մարդիկ կարող էին ազատ ել ու մուտք ու-  
նենալ կոմսի տանը։ Ծիշտ իր տիրոջ նման։

Լոնդոնի հայտնի վիրաբույժ Բելկանին էլ իր շանից հետևյալ  
պատմությունն է անում։ Ասում է՝ մի փոքրիկ շուն ունեի, որ միշտ  
հետո իհվանդանոց էի տանում ու միշտ կողրիս արողին նստած  
ներկա էր լինում անդամահատություններին։ Մի անգամ էլ իհվան-  
դանոց մտնելիս, չի եկատել, թե շունս ետ է մնացել, հանկարծ  
դրուն ամուր զարկեցի, ու շանս բարը մնաց դրան տակը։ Շունս  
սկսեց աղիողորմ կլանչել ու կլանչելով էլ կաղին տալով վազեց,  
բարձրացավ արողին, արողից էլ բռակ անդամահատության սեղա-  
նին, սեղանի վրա մեկնվեց ու կոնծկոնծալով բարը մեկնեց ինձ։  
Նայեցի, տեսա ուղի մի մասը ջարդվել է, իսկույն փարարեցի, կա-  
պեցի, ու մի քիչ անց հանգստացավ, ու իր արողի վրա կծիկ եկավ  
քնեց։ Մյուս օրն էլ եկավ իրան իրան նույնն արավ, ու էսպես ամեն  
օր, մինչև որ լավացավ։

1881թվին. Առուկվայում երաժիշտ Բենետու շունը Էնքան վարժ  
էր նվազում, որ մասնակցում էր երաժշտական խմբի մեջ և իր տի-  
րոջ երգելու ժամանակ նվազակցում էր նրան։

## ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

# ԱՆԱՇԻՏ

Ա

**Մ**ժամանակ Աղվանից աշխարհի քաջավորանիստ քաղաքը Պարտավն էր, որ այժմ ավերակ է և ասլում է Քարդա: Դա զոնքում է այժմյան Գանձակի և Շուշի քամբաները՝ Թարրատ գետի վրա: Այդտեղ էր Վաչե քաջավորի հոյակապ ապարանքը իր ընդարձակ ծառաստանով, որ երկարութեակ ծզված էր Թարրատի ափովը: Այդ հինորյա արիեստական անտառը քնականից գերազանցում էր իր հոկայական չինարներով ու քարդիներով, որոնց քարձրուրյան ստվերի տակ ծածկվում էին քաղաքի նույնիսկ ամենաքարքը աշտարակները: Նրա չորս կողմուկ քաշված ամուր պարիսապը վանդակի պաշտոն չէր կատարում քնակ այն քերևաշարժ ու արագավազ այծյամների ու եղջերուների համար, որոնք այնտեղ խմբերով գրունելու և խաղալու ազատ ասպարեզ ունեին:

Մեկ անգամ Վաչե քաջավորի միամոր որդին՝ Վաչագանը, որ մի նորահաս երիտասարդ էր, պալատի պատշաճամբի վրա կորնած, նայում էր իրանց այդ ծառաստանին: Եղանակը զարնանային էր և առավոտյան արևարացին աշխարհի բոլոր երգեցիկ բռչունները՝ կարծես խոսք մեկ արած՝ հավաքել էին այդ ծառերի վրա, որ մի ընդհանուր նվազահանելս սարքեն և իրար հետ մրցեն: Մինչ իր սրինգն էր փշում, մյուսն իր փողը, քայլ հաղրանակը խոսողն էր տանում: Սոլսակն էր այդ խոսողը՝ բյուլբյուլ Աղվանից, սիրահար սրտերի միակ մսիքարիչը: Նա որ սկսում էր նվազել իր բյուրատի քնարը, իսկույն լուսն էին մյուսները, և ականջները սրած՝ նրան էին լուսն և նրա դայլայիկի բյուրավոր եկեղեներից դաս առնում: Մինչ

սովորում էր նրա ծլվոցը, մյուսը նրա կլկոցը, մինը շվշվալը, մյուսը սուլելը, և մեկ էլ հանկարծ ամենքը միասին, միախառն ծայնով սերտում էին իրանց սովորած եղանակները:

Արդյոք սրա՞նց էր ականջ դնում Վաչագանը այնպես լուս, այնպես ակնապիշ: Ոչ... Ուրիշ հոգս, ուրիշ ցավ կար նրա սրտումը. սրանք միայն սաստկացնում էին նրա ցավը և խոր տիսրուրյան մնջ ձգում նրան:

Այս տիսուր մտմտուրից հանեց Վաչագանին նրա մայրը՝ Աշխեն քաղուիին, որ այդ պահուն մոտեցավ նրան և մոտը նստելով հարցրեց:

- Վաշիկ, ես տեսնում եմ, որ դու սրտում մի ցավ ունիս, քայլ քարցնում ես մեզանից: Որդի, ասա ինձ, ինչո՞ւ համար ես այդպես տիսուր:

- Մայր, ճշմարիտ ես ասում, - պատասխանեց որդին, - աշխարհին փառքն ու վայելչուրյունը աշքիս չեն երկուում: Ուզում եմ հեռանալ աշխարհիցս, գնալ անապատ: Ասում են՝ Մեսրոպ վարդապետը կրկին եկել է Հացիկ, իր շինած վանրումը միարանուրյուն է հաստատել, աշակերտներ ժողովել. ուզում եմ ես էլ գնալ այնտեղ: Մայր, դու չգիտես, թե ինչքան լավ գյուղ է այդ Հացիկը: Այնտեղի թե՛ տղերը և թե՛ աղջկերը այնպես սրամիտ, այնպես զենցիկ են, որ երեւ տեսնեն կմնաս հիացած:

- Ուրեմն նրա՞ համար ես գնում Հացիկ, որ այնտեղ տեսնես քո սրամիտ Անահիտին:

- Մայր, դու ո՞րտեղից գիտես նրա անունը:

- Մեր պարտիզի սոլսակները բերին ինձ այդ համբավը: Սիրելի Վաշիկ, ինչո՞ւ ես մոռանում, որ դու Աղվանից քաջավորի որդին ես: Թագավորի որդին կամ քաջավորի, կամ մեծ իշխանի աղջիկ կուղի և ոչ քև մի գեղջուիի: Վրաց քաջավորը երեք աղջիկ ունի, կարող ես ըստրել նրանցից որդին կամենաս: Գուգարանց բղեշլսն ունի մի շատ գեղեցիկ աղջիկ, որ իր միակ ժառանգն է, իր հարուստ կալվածների միակ տիրուիին: Սյունյաց իշխանն ունի դարձյալ մի շատ սիրուն աղջիկ. վերջապես մեր հազարապետի Վարսենիկն ի՞նչ պակաս աղջիկ է, - մեր աշքի առջև մեծացած, մեր ձեռքով կրոված...

- Մայր, ես արդեն ասացի, որ պիտի երրամ վաճր, քայլ երեւ դուր ուզում եք, որ ես անպատճառ ամուսնանամ, ապա գիտացեք, որ իմ ուզածը միայն և միայն Անահիտն է...

Այս ասաց Վաշագանը և ամորից կարմրելով վազեց դեպի պարտեզ, ինչպես մի ծանր բեռնից ազատված փախստական գերի...

Բ

Վաշագանի քանի տարին նոր էր լրացել: Նա երկայնացել էր իրանց պարտեզի բարդիների նման, բայց շատ բնըուշ, դժգույն ու վատառողջ էր: Մանկուրյունից կրոնական կրորուրյուն ստանալով մեծն Անրուպի աշակերտների մոտ, մտադիր էր իր վարդապետների օրինակին հետևել - քաշվել մի վաճք, աշակերտներ պատրաստել և քարոզության նվիրվիլ: Բայց նրա այդ ձգտումը հակառակ իր ծնողաց կամքին, ըստ որում ինքն էր նրանց միակ զավակը, ինքն էր Աղվանից բազավորության միակ ժառանգը:

«Որյակ իմ Վաշագան, - ասում էր հայրը շատ անգամ, - դու գիտես, որ իմ հույսը միայն դու ես, դու պետք է մեր տան ճրագը վառ պահես, մեր օջախի հիշատակը՝ կենդանի: Պետք է ուրեմն ամուսնանս, ինչպես որ աշխարհին օրենքն է:»

Որդին միայն կարմրում էր հոր այդ առաջարկությունը լսելիս և չէր իմանում ի՞նչ պատասխան տա, ըստ որում ամուսնության վրա նա չէր մտածել և չէր էլ ուզում մտածել: Բայց հայրը նրան համագիտ չէր տալիս և նոյն առաջարկությունը, ավելի գրավիչ խոսքերով՝ նա անում էր շարաքը մի քանի անգամ: Հոր այդ ստիպմունքներից ազատ մնալու և նրան ուշ-ուշ տեսնելու համար, ինքն իրան որսորդության տվագ Վաշագանը, թեև գրուասեր չէր, այլ ավելի սիրում էր շարտեակ տանը նստել և կարդալ: Այսուհետև առավոտները վեր էր կենում շատ վաղ և ընկնում սար ու ծոր և երեկոները շատ ուշ ետ դառնում: Երբեմն երեք չորս օրով ուշանում էր և ծնողացը տարակուտուրյան մեջ ձգում: Շատ իշխանների որդիր ուզում էին նրան ընկերանալ և նրա հետ միասին մաս գալ, բայց ինքը չէր հոժարում: Նա հետը վերցնում էր միայն իր մտերիմ և քաջ ծառային՝ Վաղինակին, որ մի պենջակազմ և քաջառողջ տղամարդ էր, և իր հավատարիմ շունը՝ Զանգին, որ թեև դեռ լակուտ, բայց արդեն մի ահազին գամփու էր: Սրանց հանդիպող մարդիկը չէին իմանում, որ մինք բազավորի որդին է և մյուսը նրա ծառան, ըստ որում երկուսն էլ միևնույն հասարակ որսորդի հագուստն ունեին հազար, երկուսն էլ միևնույն նետաղեղը ուսներին և լայնաշեղը դաշույնը կախած գոտիկներից: Միայն պաշարի պարկը Վաղինակն էր կրում: Շատ անգամ իջնում էին զանազան գյուղերում և Վաշագանը, իրքի մի օ-

տար մարդ, ծանորանում էր գյուղացցց կյանքին, տեսնում էր նրանց ամենօրյա հոգսերն ու կարիքները, նկատում էր, թե ո՞վքեր են բարուրյուն անում և ո՞վքեր անիրավորյուն: Հանկարծ շատ կաշառակեր դատավորներ հեռացվում էին իրանց պաշտոնից և նրանց տեղ լավերն էին նշանակվում, շատ զողեր բռնվում ու պատժվում էին, շատ նեղույթան մեջ ընկած տներ ու համայնքներ օգնություն էին տանում բազավորից, առանց իմաց տալու նրան իրանց նեղույթունը: Այսպէս մի աներևույթ գորություն ամեն տեղ ամեն բան տեսնում էր և հոգացողություն անում: Այս տեսնելով՝ ժողովորդն սկսեց հավատալ, որ Վաշն բազավորը աստծոն պէս իմանում է, թե ո՞ւմ ի՞նչ է պետք և ո՞վ է պատժի կամ վարձատրության արժանի մի բան արել: Էլոչ մի տեղ ո՞չ գողություն էր լինում և ո՞չ մի որիշ անարդարություն: Բայց ոչ որ չէր իմանում, որ այդ լավ փոփոխության միակ պատճառը բազավորի որդին էր:

Վաշագանի այս տեսակ բափառական ճանապարհորդությունը իր համար էլ ունեցավ լավ հետևանք: Նա ավելի զվարքացավ և առույգացավ: Նա սկսեց ավելի ուժեղանալ և ճարպիկանալ՝ քան թե առաջ էր: Մոտիկից տեսնելով ժողովրդի հոգսերը, նա զգաց, թե ինչ-քան բարիր կարող է անել մի բազավոր իր երկրի համար, և սկսեց փորք առ փորք ճգնավելու միտքը բռնել: Նրա սրտի սերն արդեն վառվելու հատկություն էր ստացել, հարկավոր էր միայն մի առիք, մի շփումն, որ ցոլային նրա լուսափայլ ճառագայթները, այդ առիքը շուտով վրա հասավ:

Մեկ օր իրանց սովորական որսորդության ժամանակ, Վաշագանն ու Վաղինակը հասան մի գյուղ և նստեցին նրա առյուրի մոտ, որ հանգստանան: Շատ դադրած ու քրտնած էին: Գյուղի աղջկերը եկել էին ալրյուրից ջուր տանելու և հերրով լցնում էին կուժերն ու փարչերը: Վաշագանը սաստիկ ծարավել էր: Նա ջուր ուզեց, և աղջկերից մինը լցրեց փարչը և ուզեց Վաշագանին տալ, բայց մի որիշ աղջկել նրա ծեռքից խլեց փարչը և դատարկեց: Ինը ընդից լցրեց, բայց էլի դատարկեց: Վաշագանի բուքը ցամաքել էր, և անհամբեր սպասում էր, թե երբ պետք է արդյոք նրան ջուր հասցնեն, բայց մեր անձանոր աղջկա հոգը չէր այդ, նա կարծես խաղ էր անում, լցնում դարտկում էր և այդ կրկնեց չորս, ինչզ անգամ, միայն վեցերորդ անգամին տարավ իրան անձանոր որսորդին տվալ:

Վաշագանը երբ որ խմեց և փարչը տվագ Վաղինակին, ինքն



սկսեց խոսենել աղջկանը և հարցրեց, թե ինչո՞ւ նա խկոյն չերավ ջուրը. չինչ՝ թե կատակ անել ուզեց կամ բարկացնել. Աղջկը նրան պատասխանեց.

- Մենք սովորություն չունինք մի օտար երիտասարդի հետ կատակ անել, մանավանդ երբ նա ջուր է ուզում: Բայց ահա՝ ինչ էր իմ միտքը: Ես տեսա, որ դուք դադրած ու քրտնած եք, իսկ այդ վիճակի մեջ սառը ջուրը վնաս է մարդուն, դրա համար ես գիտությամբ ուշացրի, մինչև դուք մի փոքր հանգստանար և հովանար:

Աղջկա խելոր պատասխանը զարմացրեց Վաշագանին, բայց գեղեցկությունն ավելի ևս հիացրեց նրան: Նրա աչքերը խոշոր բոլորում և վառվուն էին, ուները կարծես վրձինով քաշած. գլուխը բաց էր և ծամերը փոփած թիկունքի վրա, ճակատը լայն, քիր ու պողոքը նկարածի պես: Ոչինչ զարդ ու զարդարանք չուներ. հագուստը մի կարմիր մետաքսէ շապիկ էր, որ նրա վայելչակազմ հասակը ծածկում էր մինչև ոտները և մի ասեղնազործած քածկոնակ, որով կոճկված էր նրա բարակ մեջքն ու լայն կործքը: Ոտքերը բորիկ էին, բայց նոր լվացված կարնաղբրի ջրով՝ բամբակի պես սպիտակին էին տալիս: Այսպես էր Անահիտի արտաքին կերպարանքը, բայց նրա դեմքի գծագրության, նրա աչքերի մեջ մի այնպիսի գրավիչ գորություն կար, որ խկոյն կախարդեց Վաշագանին և ապշեցրեց նրան:

- Անոնդ ի՞նչ է, - հարցրեց Վաշագանը:
- Անահիտ, - պատասխանեց աղջկը:
- Ո՞վ է քո հայրը:
- Իմ հայրը մեր գյուղի նախրի Առանն է: Բայց ինչո՞ւ ես ուզում իմանալ, թե իմ անունն ի՞նչ է, կամ ով է իմ հայրը:
- Ոչինչ, ենց այնպես հարցնում եմ. հարցնելլ ին մե՞նք չեն:
- Երբ հարցնելլ մեղք չէ, խնդրեմ դու էլ ինձ ասես, թե ինք ո՞վ ես, ո՞րտեղացի ես:
- Սո՞ւս ասեմ, թե՞ ճշմարիտ:
- Որը քեզ արժան կհամարես:
- Իհարկե, ես արժան կհամարեմ ճշմարիտը, իսկ ճշմարիտն այս է, որ ես իհմա շնմ կարող ուղիղն ասել, թե ես ով եմ, բայց խոսք եմ տալիս մի քանի օրից հետո հայտնել:
- Ծատ լավ: Ընորհեցեք ինձ փարչը, և երե էլի ջուր եք կամենում, բերեմ:
- Ոչ, շնորհակալ ենք. դու լավ խրատ տվիր մեզ, այդ կիշինենք

միշտ և քեզ չենք մոռանալ:  
Անահիտն առավ փարզը և հեռացավ:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՁՆԵՐ

1. Դուքս գրիր անծանոր բառերը եւ բառարանի օգնությամբ բացատրի՞:
2. Նկարագրիր Վաշն բազավորի ապարանք՝ օգտվելով նաև ծառաստանի գեղեցկուր յունը նկարագրող հատվածից:
3. Մանրանան պատմիր Վաշագանի բափառումների մասին:
4. Կարդա՛ Վաշագանի հոգելիճակն արտահայտող հատվածը: Փորձիր մեկ նախադասուրյամբ արտահայտել նրա հոգելիճակը:
5. Կարդա՛ այն հատվածը, որտեղ երեսում է Անահիտի խելացի լինելը:
6. Նկարագրիր  
ա) Անահիտին  
բ) Վաղինակին  
գ) Վաշագանին:
7. Ինչպե՞ս ես հասկանում.

\*\*\*

Ուղյակ իմ Վաշագան, - ասում եր հայրը շատ անգամ, - դու գիտես, որ իմ հույսը միայն դու ես, դու պետք է մեր տան ծրագը վառ պահես, մեր օջախի հիշատակը՝ կենդանի: Պետք է որդեմն ամուսնանա, ինչպես որ աշխարհին օրենքն է»:

Չ

Երբ որ մեր որսորդները ճանապարհ ընկած զնում էին դեպի տուն, Վաշագանը հարցրեց Վաղինակին.

- Վաղինակ, դու մեր Բարդումը տեսա՞ծ ես սրա պես գեղեցիկ աղջիկ:

Վաղինակը պատասխանեց.

- Ես լավ չնկատեցի նրա գեղեցկուրյունը, իմացա միայն, որ իրանց գյուղի նախրչու աղջիկն է:

- Չես նկատել, բայց լավ ես լսել: Այդ նրանից է, որ քո ականջներն ավելի սուր են, քան քեզերդ, բայց քո սուր ականջները շատ սխալ են լսում:

- Ո՛չ, սխալ չեն լսում, աղջիկն ինքն ասաց, որ իր հայրը իրանց գյուղի նախրչին է:

- Ծատ լավ, բայց դրանից ի՞նչ դուրս եկավ. Ես կարծում եմ, որ այդ հանգամանքը նրա հրաշալի գեղեցկուրյունից ոչ մի մազ չպակսեցրեց, և նրա արժանավորությունն ավելի ևս բարձրացրեց:

- Ուրեմն դու երբ որ բազավոր դառնաս, մի նախրչական շրանշան հնարիք և նրանով բարձրացրու քո իշխաններին:

- Նախրչական նշանն այնքան բարձր է, Վաղինակ, որ կարելի չէ տալ ոչ մի իշխանի: Այդ նշանը կարող են կրել միայն բազավորներն ու հայրապետները: Դու չգիտե՞՞ս միբե, որ այն զավագանը, որ տրվում է բազավորներին և հայրապետներին՝ հովվական նշան է:

- Հովվական, բայց ոչ քեզ նախրչական:

- Հովիվն ու նախրչին ինչո՞ւ են զանազանվում միմյանցից, երեսով, որ հովիվը միայն այծ ու ոչսար է արածեցնում, իսկ նախրչին՝ ամեն ինչ՝ ոչսար, այծ, տափար, գոմեշ, ծի, էշ, ջորի և մինչև անգամ ուղտություն ունի նվազավոր պաշտոնն ավելի նախրչության է նման, քան քեզ հովիվի, ըստ որում նրա ժողովուրդը միայն ոչսարներից ու այծերից չէ բաղկացած, այլ շատ տեսակ կենդանիներից: Մի՞րե քեզ հայտնի չէ, որ աստված ամենից շատ նախրչիներին է սիրել. ի՞նչ են եղել Արքահամ, Սովսես, Դավիթ, երեսով մի-մի նախրչի: Ո՞վ էր աստծուն ավելի սիրելի, Եսա՞վը, որ մեզ նման որսորդ էր, քեզ Հակոբը, որ նախրչի էր: Իմ կարծիքով նախրչի են եղել աշխարհիս բոլոր արդար մարդիկը, Արելից սկսած մինչև այս գյուղի նախրչին, որ այսքան գեղեցիկ ու խելոք աղջիկ ունի:

- Քեզ ենու վիճել կարելի չէ, իշխան. Քիչ էլ որ խոսեցնեմ, դու Անոռու պարդապետի քարոզները կկարդաս զլսիս: Թող գեղեցիկ լինի նախրչու աղջիկը. ասած է՝ «աշքի սիրած տղեղ չի լինի»: Բայց ես կարծում եմ, որ երես այդ աղջիկը լիներ մի երկրագործի աղջիկ, դու չիր ասիս, որ Կայենը երկրագործ էր, բայց կասենիր «երկրագործ են եղել աշխարհիս բոլոր լավ մարդիկը, Աղամից սկսած մինչև այս գյուղի երկրագործը, որ մի այսքան սիրուն աղջիկ ունի»:

- Վաղինակ, մի բովե բող քո սրախտուրյունի և ինձ ուղիղն ասա:

Անահինն է գեղեցիկ, թէ՞ մեր հազարապեսի աղջիկ Վարսենիկը:

- Ես կարծում եմ, որ իբրև իշխանուիի՝ հազարապեսի աղջիկն է գեղեցիկ, իսկ իբրև նախըռուիի՝ այդ գեղջկուիին, մինք մյուսի տեղը չի բռնի:

- Բայց ո՞ք կինն ավելի խելքը, Անահի՞՞ոք, թէ՞ Վարսենիկը:

- Ես ոչ մեկի խելքը չեմ չափել, բայց կարծում եմ, թե Վարսենիկը շատ լավ գիտե, որ մեր ժարքանի ջորը ոչ ոքի վնաս տված չէ, և այդ պատճառով՝ եթե որ դու նրանից ջոր ուզես, նա հարկ չի համարի քո Անահիտի պես նազ ու սազ անել և քորդ ցամքած քողնել:

- Վաղինան՝...

- Հրամայի՛ր, իշխան...

- Վաղինան՝, դու ինձ չե՞ս սիրում...

- Իշխան՝, ես հասկանում եմ քո միտքը: Ես տեսա, որ այդ առապելական Անահիտի թերքելունքները նետերի պես ցցվեցան սրտին մեջ, բայց ցավում եմ, որ այդ վերքը քո մեջ պիտի անբժշկելի դառնա...

Վաշազան այլևս չխոսեց և ընկավ մի խոր մտածորյան, մի երևակայական աշխարհի մեջ: Լոեց և Վաղինակը: Միայն Զանգին սովորականից դուրս ավելի ուրախ էր քոչկոտում ու խաղում, կարծես մի նոր որսի հոտ լիներ առած:

## ¶

Նախոնքաց դեպքից մի քանի օր անցած քազավորն ու Վաղինակը երկար խոսակցություն ունեին: Խոսակցության առարկան Վաշազանն էր:

- Վաղինան՝, - ասաց քազավորը, - դու մի փոքր երեխա ես եղել, - որ մեր տունն ես եկել, ես թեզ հարազատ որդու պես եմ պահել: Այսօր դու ինքդ որդու տեր ես և կարող ես զգալ, թե ի՞նչ է որդեսիրությունը: Սեր Վաշազանը թեզ եղբարից չի զանազանում և միայն թեզ է հայտնում իր սրտի զայտնիքը: Դու պեսոք է իմանաս նրա միտքը և հայտնես մեզ, որ մենք մեր ձեռքից եկած հնարք գործ դնենք. Վաղինակը պատասխանեց.

- Հայր քազավոր, Վաշազանն այնքան զայտնապահ է, որ ինձ էլ չի բաց անում իր սիրտը. միայն այս վերջին օրերս ես նրա մեջ մեծ փոփոխություն եմ նշարում: Ես կարծում եմ, որ նա սիրահարված է Անահիտ անունով մի աղջկա վրա:

- Ո՞վ է այդ Անահիտը:

- Դա հացիկ գյուղի նախըռու աղջիկն է:

- Նախըռն ու...

- Այն:

- Այդ նախըռու Անահիտը մի աստվածուիի պետք է լինի ուրեմն, որ կարողացել է Վաշազանին այդպես կախարդել և կակդացնել նրա քարացած սիրտը:

- Հայր քազավոր, ես միշտ փտնում եմ այդ աղջկանը, ծիծադրում եմ Վաշազանի վրա, բայց զոր է անցնում իմ աշխատությունը, և կարծում եմ, որ պիտի զոր էլ անցնի, ըստ որում այդ աղջիկը ծննարիտ որ մի աստվածուի է. նրա գեղեցկությունը մի հիացը է. իսկ խելքի մասին հրաշքներ են պատմում: Ասում են՝ գյուղի ծերերը նրա խորհրդին են դիմում ամեն դժվար հանգամանքներում: Ոչ մի երիտասարդ նրա քաջորդյունը չունի, ոչ մի օրինորդ՝ նրա ձեռքի ճարտարությունը: Նրան անվանում են «Անտառների քազուի», ըստ որում իր հոր նախքից երբ որ մի ապրանք է կորչում կամ զողացվում, առ իսկույն մի կրակու ձի հեծած՝ սար ու ձոր է լինենում, և որտեղից լինի՝ գտնում թերում է: Այս տեղեկությունները ես հավաքել եմ Վաշազանից ծածուկ և ոչինչ չեմ հայտնել, որ ավելի ևս չտարանա, բայց ինչպես ես տեսնում եմ, նա առանց այս էլ նրանից ձեռք վերցնողը չէ: Ես հույս ունիմ, որ ինքը երեւ ձեզ չի հայտնի, մայր քազունուց չի բացցնի:

- Երեւ այդպես է, ես կհայտնիմ մորք: Ծնորհակալ եմ, որ ինձ նախապատրաստեցիր քո տված տեղեկություններով:

Վաղինակը ծննարիտ որ լավ նախապատրաստեց քազավորին: Նա Անահիտի գովասանքը, իր կարծիքով, չափազանցության հասցեց ավելի այն մտքով, թե քան է, եթե որդու կողմից զիջում չինի, զոնե ծնողաց կողմից լինի, որ Վաշազանի մուրազն անկատար չմնա: Ահա այս խոսակցությունից հետո եր, որ մայրն իմացավ որդու տիսրության զայտնիքը:

## Ե

Թագուհին երբ որ իմացավ Վաշազանի վճռական խոսքը, թե նա միայն Անահիտին կուզի և ուրիշ ոչ ոքի, հայտնեց քազավորին, որ իրանց որդին Հացիկ գյուղի նախըռու աղջկանն է հավանել, և

պատմեց բոլորը, ինչ որ ինքը լսել էր: Այս լուրը շուտով տարածվեց ամբողջ պալատի մեջ: Բոլոր ծառաներն ու նամիշտներն իմացան: Մյուս օրը ամբողջ քաղաքը դղրդում էր այդ նոր համբավով: Գյուղացին ուրախացան, որ քաղուին իրանցից կլինի և նոր օրով իրանք շատ քախտավոր կլինին: Մեծ-մեծ իշխանները տիրեցան, թե ինչո՞ւ քազավորի որդին ուամիկ նախրչուն իրանցից քարձր համարեց: Վաճառականները ծիծառում էին, թե երկի քազավորի որդին խելքը կորցրել է, որ փոխանակ հարուստ օժիտով աղջիկ ուզելու՝ մի աղջատի աղջիկ է ուզում: Պակաս չէին և սրախոս մարդիկ, որոնք այդ առիրով զանազան առասպելներ էին հնարում և պատմում սրան նրան:

Ահա թե ինչ էին ասում այդ սրախոսները.

- Բարիկ, ասում են՝ մեր քազավորի որդին նախրչու աղջիկ է ուզում, խել՞ ես...

- Այդպես չէ, սիրելի Սաղոկ, դու սխալ ես լսել: Այդ նախրչին խկապես նախրչի չէ, այլ քազավոր է, քայլ որդինեւու իր հպատակները բոլորն էլ անաստոններ են, այդ պատճառով նրան նախրչի են ասում: Հիմա մենք որ հիմար լինինք, մի՞րե դրա համար պետք է մեր քազավորին տավարած անվաններն: Մեր քազավորի խնամացուն մի շատ իմաստուն քազավոր է. նա իմանում է բոլոր անաստոնների լեզուն. այդպես մեկ էլ Սողոմոն իմաստունն է եղել:

- Ինչ ես ասում... մի՞րե անաստոններն էլ ունին քազավոր:

- Ինչո՞ւ ես զարմանում: Հապա չե՞ս լսել, որ ասում են՝ մորեխսների քազավորը, օձերի քազավորը, մրջյունների քազավորը, մեղուների քազուին: Եվ մարդիկն էլ դեռ այն ժամանակն են սկսել քազավոր ունենալ, երբ նրանց խելքը անաստոնների խելքից քարձր չի եղել:

- Ես այդ գիտեմ, քայլ չեմ լսած որ տավարներն էլ ունենան քազավոր: Մեկ էլ որ՝ ասենք՝ օձերի քազավորը օծ է, մորեխսներինը՝ մորեխս, քայլ տավարներինը մի՞րե մարդ է:

- Հապա մարդ որ չիններ, էլ ինչպես աղջիկ կունենար, էլ ո՞ւմ կուղեր մեր քազավորի որդին: Երկի մարդ է, որ աղջիկ ունի, և այն էլ գիտե՞ս, ինչպես աղջիկ, շատ գեղեցիկ և շատ իմաստուն: Ասում են՝ այդ աղջիկը մարդու չի զնում, և դեռ հայտնի չէ, թե արդյոք մեր քազավորի որդուն կուզի՞ թե ոչ:

- Ի՞նչ ես ասում:

- Հապա դու ի՞նչ ես կարծում...

## ՀԱՐՁԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Առանձնացված մասերը վերնազրի ը:
2. Համառոտ պատմիք Վաշազանի սիրո մասին:
3. Ըստ Վաղինակի՝ ինչպիսի՞ աղջիկ էր Անահիտը:
4. Պատմիք Վաշազանի և Վաղինակի մտերմության մասին:
5. Ինչպես ընդունվեց Վաշազանի սիրո լուրը
  - ա) գյուղացիների կողմից
  - բ) իշխանների կողմից
  - ց) վաճառականների կողմից
  - դ) սրախոսների կողմից:



 ազավորն ու քազուինին տեսան, որ չեն կարողանում Վաշազանի միտքը փոխել, մի երեկո խորհուրդ արին և վճռեցին, որ ընդունեն նրա ընտրությունը:

Թագավորն ինքը շատ քարի մարդ էր, նա սրտով հակառակ չէր ամենին որդու ընտրությանը: Նա մինչև անզամ ուրախ էլ էր, որ իր որդին բոլոր հպատակների վրա հավասար աշքով է նայում և մեկը մյուսից քարձր չի դասում: Նա միայն վախսնում էր, թե մի՞ զուցե դրանով գորոզ իշխաններին զրգոն իր դեմ: Քայլ երբ որ իմացավ, թե գյուղացիք շատ ուրախ են այդ քանին և Անահիտն էլ քարձր համբավ է ստացել նրանց մեջ, ինքն սկսեց համոզել քազուին, որ հոժարի այդ քանին...

Մյուս օրը կանչեցին Վաղինակին, հայտնեցին իրանց հոժարությունը, և նրա հետ երկու պատվավոր և իշխան մարդ ևս դնելով՝ մեծամեծ ընծաներով ուղարկեցին Հացիկ՝ հարսնախոսության:

Երբ որ դրանք հասան նախրչի Առանի տունը, Առանը նրանց սիրով ընթանեց և շնորհավորեց նրանց զալը: Անահիտը տանը չէր: Հյուրերը նստեցին սրահումը՝ մի նոր գորգի վրա, որ Առանը փունց խկույց և ինըն էլ նստեց նրանց կշտիմ:

Խոսակցության նյուրը ամենից առաջ դարձավ նոր գորգը, որ իր գեղեցիկ նախշերով, գույների պայծառությունով և գործվածքի նրբությունով գրավեց հյուրերի ուշադրությունը:

- Այս ի՞նչ հրաշալի գործ է, - ասաց Վաղինակը, - տանտիկին՝ կինի գործած անշուշտ:

- Ո՛չ, ես կին չունիմ, ահա իինգ տարի է, որ կինս վախճանվել է: Այդ գործը մեր Անահիտի գործածն է: Բայց ինքը չի հավանում. ասում է՝ իմ ուզածին պես չորս եկավ: Մեկ նորը իինել է, ահա՝ այն ծածկված ոստայնն է, իուս ունի, որ այն պիտի իր ուզածի պես դուրս բերե:

- Մեր քաջավորի պալատումն էլ չկա մի այսպիսի զարդ, - ասաց իշխաններից մինը, իետո դառնալով Առանին՝ ավելացրեց. - շատ ուրախ ենք, որ քո աղջիկն այսքան շնորհալի է: Քո Անահիտի համբակը մինչև քաջավորի ականջն է հասել: Եվ ահա՝ մեզ ուղարկել է քեզ մոտ խնամախոսության: Թագավորը կամենում է, որ քո Անահիտը տաս իր մինուճար որդում՝ Վաչագանին, որ իր քաջածանգն է:

Իշխանն այս առաջարկությունն անելով՝ սպասում էր, թե Առանը կամ չի հավատալ, կամ թե՝ սաստիկ ուրախանալուցը՝ Քեր կրոչի տեղիցը: Բայց Առանը ո՛չ այս արավ և ո՛չ այն, այլ գոլոխը քաշ զցեց և սկսեց ցուցանատը գորդի նախշերով սահեցնել: Նրան այդ մտածությունից հանեց Վաղինակը՝ ասելով.

- Ինչո՞ւ տխրեցիր, Առան եռքայր, մենք քեզ ուրախություն ենք քերել և ոչ տխրություն: Մենք քո աղջիկը բռնի տանելու չենք: Այդ կախված է քո միակ կամքից: Եթե կուզես՝ կտաս, չես ուզի՞ չես տալ. մեզ հարկավոր է միայն, որ դու ուղիղն ասես, թե դու ինչպես կկամենաս՝ տա՞լ, թե չտալ:

- Իմ պատվական հյուրեր, - պատասխանեց Առանը, - ես շատ շնորհակալ եմ, որ մեր տեր քաջավորը իր ճոխս պալատի համար իր ծառայի աղքատիկ խրճիրից մի զարդ է ուզում տանել: Գոյց այդպիսի մի զարդ, ինչպես ասացիր գորդի համար, չկա նրա պալատի մեջ, բայց ճշմարիտն ասում եմ ձեզ, իմ ձեռին չի տալն ու չտալը: Ահա կզա ինքը, իրան կհարցներ. Եթե կիոժարի, ես ոչինչ չունիմ ասելու:

Հենց այս խոսակցության ժամանակ եկավ Անահիտը, որ իրանց այգումն էր եղել, ձեռին մի զամբյուղ խաղողով, դեղձով և տանձ ու խնձորով լիբը: Գլուխ տվակ հյուրերին, որոնց մասին իրան իմաց էին տվել, որ քաղաքից եկած իշխաններ են, և զամբյուղը ներս տա-

նելով՝ միջի եղածը դարսեց մի նոր կլեկած մեծ սինու մեջ, և քերավ դրավ հյուրերի առջև: Ինքը զնաց իր ոստայնի մոտ, վեր առավ նրա երեսից սպավանը և սկսեց շարունակել իր կիսասր ռողած գործը: Իշխաններն սկսեցին նայել, որ նեսնեն ինչպե՞ս է գործում Անահիտը, և մնացին ապշած նրա արագաշարժ մատների ճարպիկուրյան վրա:

- Անահիտ, ինչո՞ւ ես մենակ գործում, - հարցրեց Վաղինակը, - ես լսել եմ, որ դու աղջիկ աշակերտներ շատ ունիս:

- Այո՛, ունիմ մի քանի հոգի, - պատասխանեց Անահիտը, - բայց ուրվիետու հիմա այցելուր է, արձակել եմ: Այստեղ էլ լինին, չեմ քանեցնի սրա վրա: Այս մեկ հատը ես մենակ պետք է գործեմ:

- Լսել եմ, որ դու քո աշակերտներին կարդալ էլ ես սովորեցնում:

- Այո՛, սովորեցնում եմ: Հիմա մեզանում ամեն մարդ պարտական է կարդալ գիտենալ: Այս վերջին օրերիս էլի եկավ ծերունի Սևորուարը և սաստիկ պատվեր տվավ, որ ամեն մարդ կարդալ սովորե, որ ամեն մարդ ինքը կարդա ավետարանը և հասկանա: Հիմա մեր հովվիկներն էլ գիտեն կարդալ և միմյանց սովորեցնում են իրանց հոտն արածացնելիս: Այժմ երե մեր անտառները պտտես, բռնոր հաստ ծառերի կենևերը գրուած կնեսնես: Անցյալ օրը ես մի ծառի վրա տանը տուն սաղմոս կարդացի: Մեր բերդերի պարհապները, ժայռերի ճակատները ածխազրերով լցրել են: Մեկը ավետարանից մի տուն գրում է, կամ այնքան է գրում, ինչքան անզիր գիտե, իետո մյուսներն են շարունակում: Ահա այսպես սար ու ձոր լցվել է գրեռով:

- Մեր մեջ ուսումն այդշափ տարածված չէ, բայտ որում մերոնք ծույլ են, բայց ես հույս ունիմ, որ երբ քեզ տանենք մեր քաղաքը, դու ծույլերին արիաջան կշինեն: Մի բռնե բռող քո գործը, Անահիտ, և եկ այստե՞ղ, քեզ քան ունինք ասելու: Տե՛ս, ահա՝ քեզ համար ինչն՝ թ ուղարկել մեր քաջավորը:

Վաղինակն այս ասելով՝ բաց արավ մի կապոց և նրա միջից հանեց ոսկի զարդարաներ և մետարս հազուտներ:

Անահիտն այդ քաները տեսնելով՝ ամենենին չհափշտակվեց և շտեսի նման չզարմացավ, այլ համեստ կերպով հարցրեց.

- Կարեի՞ է արդյոր իմանալ, թե այդ պատիվն ինչո՞ւ համար է արել իմն քաջավորը:

- Մեր քաջավորի որդին՝ Վաչագանը, քեզ տեսել է աղյուրին. դու նրան ջուր ես տվել և նա քեզ շատ հավանել է: Հիմա քաջավորը մեզ

ուղարկել է, որ քեզ նշանենք իր որդու վրա: Ահա այս մատաճի է, այս ապարանջան է, այս մանյակ է, սրանք կոճակներ են, մի խոսքով քեզ համար են այս ամենն է:

- Ուրեմն իմ տեսած որսորդը քազավորի որդի՞ն է եղել:

- Այո:

- Նա շատ լավ երիտասարդ էք: Բայց արդյոք զիտե՞՞ մի որևիցե արհեստ:

- Նա քազավորի որդի է, Անահիտ, նրան ի՞նչ արհեստ է հարկավոր, ողջ աշխարհի տերը նա է, ամենըն էլ նրա ծառաներն են:

- Գիտեմ որ այդպես է, բայց ո՞վ զիտե, աշխարհը է, այսօրվան ծառաների տերը վաղը կարող է ինքը լինել ծառա, թեև նա քազավոր էլ լինի եղած: Արհեստը մի այնպիսի բան է, որ ամենայն մարդ պիտի զիտենա, թե ծառա լինի, թե տեր, թե քազավոր և թե իշխան:

Այսպես որ ասաց Անահիտը, իշխանները մնացին իրար երեսի մտիկ տալիս: Նայեցին Առանին, տեսան, որ նա շատ հավան է աղջկա ասածին: Հետո դարձան Անահիտին ու կրկին հարցրին.

- Ուրեմն դու քազավորի որդուն շահափ ուզես միայն նրա՞ համար, որ նա արհեստ չզիտե:

- Այո, և այս ամենը, ինչ որ բերել եք, ես կտաներ և կասեր, որ ես իրան շատ հավանում եմ, միայն բող ներե ինձ, որ ես ուստ եմ դրել արհեստ չզիտող մարդու չզնալ: Եթե կամենում է, որ ես իր ամուսինը լինիմ, բող նախ և առաջ մի արհեստ սովորի:

Իշխանները տեսան, որ Անահիտը հաստատ է իր ասածին, էլ չստիպեցին: Նոյն զիշերը մնացին Առանի տանը: Անահիտը նրանց լավ հյուրախրուրյուն ցոյց տվագ և մի քազավորի հերիար պատմեց, թե ինչպես նա շատ արհեստներ է սովորել, ենտո իր ժողովրդին էլ սովորեցրել և դրանով իր երկրոր շատ հարստացրել: Իշխանները տեսնելով, որ ծշմարիտ է Անահիտի ասածը, ամաչում էին, որ իրանք ոչ մի արհեստ չզիտեն, միայն Վաղինակն սկսեց պարծաճռով ասել, որ ինքը շատ լավ ուսկերչուրյուն զիտե, թե նա այդ սովորել է քազավորի պալատական վարպետից: Մյուս օրը վեր կացան զնացին և ինչ որ տեսել, լսել էին, մի առ մի պատմեցին քազավորին: Թազավորն ու քազուին, երբ լսեցին Անահիտի վճիռը, շատ ուրախացան, կարծելով թե Վաշազանը չի ընդունի նրա առաջարկուրյունը և ձեռք կվերցնե նրանից, բայց երբ կանչեցին իրան և հայտնեցին՝ նա ասաց.

- Շատ ուղիղ է ասել Անահիտը. ամենայն մարդ պետք է մի ար-

հեստ զիտենա, քազավորն էլ մարդ է, նա էլ պետք է զիտենա մի արհեստ:

- Ուրեմն դու հոժա՞՞ ես մի արհեստ սովորելու, - հարցրեց մայրը:

- Այո:

- Բայց ուղիղն ասա, ինչո՞ւ համար ես ուզում սովորել. արհեստի կարևորությո՞ւնն զգալով, քե՞ Անահիտին արժանանալու համար:

- Երկուսն էլ... ինչո՞ւ քացցնեմ, - պատասխանեց Վաշազանը և հեռացավ իսկույն, որ երեսի կարմրիլը ծածկե իր ծնողներից...

Թազավորը տեսավ, որ որդին հոժար է մի արհեստ սովորելու, խորիդի կանչեց իշխաններից մի քանիսին և նրանք միաձայն վճռեցին, թե նրան վայելու արհեստը լավ դիպակ գործելն է, որ չկա իրենց երկրի մեջ և հեռավոր երկրներից են թերել տալիս շատ բանկ զնով: Մարդիկ ուղարկեցին և խորին Պարսկաստանից մեկ հմուտ վարպետ թերել տվին Վաշազանի համար: Մի տարվա մեջ Վաշազան այնպես սովորեց դիպակ գործելը, որ իր ծեռքով նուր ուկերելից մի բանկոնացու գործեց Անահիտի համար և Վաղինակի ծեռքով ուղարկեց նրան ընծանակ:

Անահիտը, ստանալով այդ ընծան, ասաց. - հիմա ոչինչ չունիմ ասելու:

Երբ կանճարանա,

Զուլիակ կլատնա:

Հայտնեցեք քազավորի որդուն իմ հոժարությունը և իմ կողմից էլ իմ նոր գործած գորզը տարեք նրան ընծանակ:

Վաղինակը վեր առաջ գորզը և ծին հեծնելով շտապեց դեպի Բարդա, որ մի բուն առաջ ավետ Վաշազանին Անահիտի հոժարությունը:

Սկսեցին հարսանիքի պատրաստություն տեսնել, և յորն օր՝ յորը զիշեր հարսանիք արին: Այդ հարսանիքը մի շտեսնված մեծ տոնակատարության պես եղավ բոլոր երկրի համար: Գյուղացու ուրախության էլ շափ չկար: Նրանք ուրախանալու առիթներ շատ ունեին. նախ որ շատ սկրում էին քազավորին և նրա որդուն. երկրորդ՝ որ Անահիտը նրանց մեջ մեծ համբավ էր ստացել, և նրա զրության վրա մեծ հոյս ունեին. երրորդ՝ որ քազավորը հարսանիքի օրը իրաման էր համեմ, որ երեք տարի ժամանակով զյուղացու բոլոր հարկերը ընծայված լինին: Եվ դրա համար էլ գյուղացիք երկար ժամանակ երգում էին.

Անահիտի հարսանիքին ուսկի արև փայլեցավ.  
Անահիտի հարսանիքին ուսկի անձրև քափկեցավ.  
Սեր արտերը ուսկի դառան, մեր հորերը լցվեցան.  
Սեր հարկերն անհետացան, մեր ցավերը վերացան.  
Շա՛տ ապրի Ոսկեծին՝<sup>1</sup>  
Սեր մայր քագուին...  
.

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հետեւյալ արտահայտությունները փոխարինի՛ր այլ բառերով կամ արտահայտություններով:  
ոյստ դնել, իր ասածին հաստատ լինել, իյորասիրուրյուն ցոյց տալ, խորհուրդ անել, ծեռ վերցնել որեւէ մնկից, որեւէ մնկի ասածին հավան լինել, պատմեր տալ, իմաց տալ, վեր առնել:
2. Վերնագրի՛ր այս մասը:
3. Մանրամասն պատմի՛ր հարսնալսուրյան մասը:
4. Անահիտին բնուրագրի՛ր ասածներդ հաստատերով համապատասխան տողերով:
5. Անահիտի հորը՝ Առանին, բնուրագրի՛ր:
6. Ի՞նչ ես կարծում, հերիարն ամբողջական կլինե՞ր, եթե այս մասով ավարտվեր:
7. Գրի՛ր քո իմացած արիեստների եւ արիեստավորների մասին:

<sup>1</sup>ոսկեծի (ծոփ - քազուկ) - հայոց Անահիտ աստվածուհու մասին է խորը, որի քազուկները ուսկու էին ծոլված:

Ե

նահիւտի փառավոր հարսանիքին ներկա չեր Վաղինակը:  
Սեկ օր քազավորը նրան մի հանձնարարությունով ուղարկեց Պերոժ քաղաքը, որ շատ հետու չեր Բարդայից և այն զնալն էր, որ զնաց, եւ ետ չեկավ: Շատ հարց ու խնդիր եղան, ման եկան, որոնեցին, բայց Վաղինակը կորավ ու կորավ:

Վաղինակին որոնելու զնացող մարդիկ լուր բերին քազավորին, թե անհայտ եղած մարդիկ շատ կան, և ոչ որի հայտնի չէ, թե ինչպես են անհետանում այդ մարդիկը և ո՛որ են կորչում:

Թագավորը կարծեց, թե երևի ավազակ զերեվաճառներ կան, նրանք են զալիս գողանում և տանում Կովկասյան լեռներում քանակվող քարքարոս ազգերի մեջ վաճառում: Ծարպիկ լրտեսներ ուղարկեց այն երկրները, նրանք զնացին, գյուղեւ գյուղ, քաղաք քաղաք ման եկան, բայց ոչ մի հետու չգտնելով՝ ետ դարձան հուսահատ:

Վաղինակի այդպես անհետ կորչիլ մեծ ցավ պատճառեց քազավորին: Նա ցավում էր ոչ միայն նրա համար, որ նրան որդու պես էր սիրում, այլև նրա համար, որ իր երկրի մեջ մի այդպիսի անսովոր բան էր պատահում և ինքը չեր կարողանում հետքը գտնել:

Այս դեպքից հետո շատ չանցած՝ քազավորն ու քազուիին վախճանվեցան, խորին ծերության հասած: Քոլոր երկիրը սուզ պահեց նրանց համար մինչև քառասուն օր: Քառասուն օրից հետո հավաքեցին բոլոր քաղաքացին և Վաշազանին իր հոր տեղը նստեցրին:

Վաշազանը՝ իր նախնյաց զարդ քարձրանալով՝ ուզեց իր երկիրը այնպես քարեկարգեց, որ էլ ոչ մի հոգի ոչ մի քանից դժգոհ չլինի, ամենը էլ ուրախ լինին, ամենը ևլ քախստավոր: Իր ամենամոտիկ խորհրդակիցը Անահիտն էր: Առաջ նրա հետ էր խորհրդակցում միշտ և հետո ժողովրդից խելացի մարդկանց իրավիրում խորհրդի և նրանց հայտնում իր միտքը: Բայց Անահիտը այսքանը քավական չհամարեց, և մեկ օր նրա հետ սկսեց այսպես խոսիլ:

- Տեր իմ քազավոր, ես տեսնում եմ, որ դու քո երկրիդ մասին մանրամասն ու ստոյզ տեղեկություններ չլինիս: Քո հրավիրած մարդիկը ամեն բան ուղիղը չեն ասում: Նրանք քեզ միամտացնելու և ուսախցնելու համար ասում են՝ ամեն բան լավ է և կարգին, ամենը էլ զոհ են իրենց վիճակից: Ո՞վ գիտե, ինչե՞ր են լինում այս բռակին քո երկրիդ մեջ, որոնց մասին այդ մարդիկը ոչ մի տեղեկություն չեն տալիս քեզ: Դու ժամանակ առ ժամանակ պետք է զանազան հագուստով ու կերպարանքով ման զաս երկրիդ մեջ, երբեմն աղքատի

ձևով մուրացկանուրյուն պետք է անես, երբեմն մշակի հազուստով պիտի երրա նրանց հետ մշակուրյուն անես, երբեմն վաճառականուրյուն, մի խորով ամեն վիճակի մեջ էլ պետք է մտնես, որ ամեն վիճակի էլ մոտիկ ծանորանա: Աստված ամենի համար էլ քեզանից հաշիվ է պահանջելու, դու նրա փոխանորդն ես քո երկրիդ վրա, պետք է ամենայն ինչ տեսնես, և ըստ այնմ, քո անելիքը անես:

- Դու շատ ճշմարիտ ես ասում, Անահիտ, - ասաց քազավորը: - Հանգույցալ հայրս այդ սովորուրյունն ուներ, ինչ որ դու ասում ես, միայն ծերուրյան ժամանակ էլ չիր կարողանում կատարել իր ուզածը: Ես իմ որորդուրյան ժամանակ համարյա միևնույն էի անում, բայց իհմա ի՞նչպես անեմ. ես որ երրամ, ո՞վ կկառավարի իմ տեղը:

- Ես ինքս կկառավարեմ, և այնպես կանեմ, որ ոչ ոք չի իմանալ որ դու քացակա ես:

- Շատ լավ. ես հենց վաղը կարող եմ ճանապարհ ընկնիլ: Քսան օր ժամանակ եմ դնում, երբ որ քան օրն անցնի և ես չգամ, իմացիր, որ ես կենդանի չեմ, կամ մի փորձանքի մեջ եմ ընկել:

## Ը

Վաշազան քազավորը հասարակ շինականի հազուստով ծպտած՝ ճանապարհ ընկավ դեպի իր երկրի հեռավոր կողմերը: Շատ քան տեսավ, շատ քան լսեց, բայց ամենից անցավ այն՝ ինչ որ նա տեսավ իր վերադարձին Պերու քաղաքումը: Պերու քաղաքը, որ այժմ անհետացած է, գտնվում էր Կուր գետի ափումը: Բնակչութերը կուռապաշտ պարսկեներ էին: Կային և հայ քրիստոնյաներ, բայց շատ սակավ էին և չունեին ոչ քահանա և ոչ աղորատուն:

Քաղաքի կենտրոնումը կար մի շատ ընդարձակ կրապարակ, որ քաղաքի շուկան էր. նրա չորս կողմն էին գտնվում բոլոր արհեստագործների ու վաճառականների խանութները:

Մի օր այդ կրապարակումը նստած էր Վաշազանը, մեկ էլ տեսավ՝ ահա՝ մի խումբ մարդիկ են զայիս և քերում են իրանց հետ մի փառավոր և սպիտակ մորուրով ծերունի՝ աջ ու ձախ բազուկները բարձրացրած: Ծերունին շատ ծանր էր զայիս. նրա առջև սրբում էին ճանապարհ և աղյուսներ դնում ունենալու տակին: Վաշազանը մոտեցավ մի մարդու և հարցրեց, թե ո՞վ է այդ ծերունին: Մարդը պատասխանեց:

- Սա մեր մեծ քրմապետն է, մի՞քև չես ճանաչում: Տես որքա՞ն

սուրբ է, որ ոտք գետնին չի դնում, որ չինի թե մի որևէ ից միջատ ընկնի ոտքի տակը և սպանվի:

Հրապարակի ծայրումը մի կարպետ փուեցին, և քրմապետը չորեց նրա վրա, որ հանգստանա: Վաշազանը գնաց նրա դիմացը կանգնեց, որ տեսնի ի՞նչ է խոսում այդ մարդը կամ ի՞նչ է անում: Քրմապետը շատ սրատես էր. նա էլ Վաշազանի վրա նայեց և նկատելով նրա օտարական լինելը և առաջին անգամ իրան տեսնիլը, ձեռով արավ, որ գնա մոտը: Վաշազանը մոտեցավ:

- Դու ո՞վ ես, ինչ գործի ես, - հարցրեց քրմապետը:

- Ես մի օտար քանի ում, - պատասխանեց Վաշազանը, - և կել եմ այս քաղաքը մշակուրյան:

- Շատ լավ, կզա՞ն ինձ հետ, ես քեզ գործ կտամ և լավ կվարձատրեմ:

Վաշազանը գլուխ տալով՝ հոժարուրյուն ցոյց տվակ և գնաց կանգնեց նրա հետ եղած մարդկանց մոտ:

Քրմապետն իր մոտ եղած քուրմերին մի քանի խոսր փսխաց և նրանք ցրվեցան այս ու այն կողմ, և մի քանի րոպեից վերադարձան այլևայլ պաշարներով՝ մշակների շալակը տված:

Երբ որ բոլոր քուրմերը եկան, քրմապետը վեր կացավ և միևնույն հանդիսով ճանապարհ ընկավ դեպի իր բնակարանը: Վաշազանն էլ լուր ու մունչ հետևեց նրան ավելի հետաքրքրուրյունից շարժված, որ տեսնի ինչո՞ւ են զրայված այդ քուրմերը կամ ի՞նչ մարդ է քրմապետը, ի՞նչ քարեգործուրյուններ ունի, որ այլպես սուրբի պես պաշտվում է: Այսպէս գնացին մինչև քաղաքի ծայրը:

Այդտեղ քրմապետը, օրինելով ճանապարհ գործ ջերմեռանդ կրապաշտներին, ետ դարձրեց, մնացին միայն իր քուրմերը և քեռնակիր մշակներն ու Վաշազանը: Դրանք շարունակեցին իրանց ճանապարհը և հեռանալով քաղաքից մոտ երկու վերստ, հասան մի պարսպապատ շենքի և կանգ առան նրա երկարի դռան մոտ: Քրմապետն իր զրպանից հանեց մի ահազին քանակի, բաց արավ դուռը և ամենին ներս անելով՝ կրկնին կողպեց: Այստեղ Վաշազանը մի անսովոր սարսուող զզաց, տեսնելով, որ այստեղից իր կամքով դուրս գնալու հնար չի ունենալու: Վաշազանի հետ եղած մշակներն էլ առաջին անցամն էին մտնում այս շենքի մեջ: Նրանք ամենքն էլ իրար երեսի նայելով՝ սկսեցին փսխաւ, թե ո՞ւր քերին մեզ այս մարդիկը: Վերջապես պարսպի կամարակապ ճանապարհ անցնելուց հետո, դրանց առջև քացվեց մի շատ ընդարձակ կրապարակ, որի

մեջտեղը կար մի զմբերահարկ մեհյան, մանր խուցերով շրջապատված: Մշակների թեռները ցած դնել տվին այդ խուցերի մոտ, և նրանց՝ Վաշագանի հետ միասին՝ քրմապետը տարավ մեհյանի մյուս կողմը, այնտեղ բաց արավ մի նոր երկարի դուռ և ասաց.

- Գնացե՛ք ներս, այդտեղ ձեզ գործ կտան: Նրանք մոլորվածի պես լուս ու մունչ ներս մտան և քրմապետն այդ դրուն էլ փակեց նրանց քամակից: Այստեղ մեր օտարականները նոր ուշքի եկան, նոր աչք բաց արին և տեսան, որ մի ստորերկրյա ճանապարհի վրա են կանգնած:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Համառոտ պատմի՞ր:
2. Այս մասր քամակի՞ր հատվածների եւ վերնագրի՞ր դրանք:
3. Ինչո՞ւ Վաշագանը որոշեց ծպտված շրջեւ իր երկրութ:
4. Համառոտ պատմի՞ր այն հատվածը, թե ինչպես Վաշագանը հայտնվեց քրմապետի պատրաստած բակարդում:
5. Նկարագրի՞ր Պերու քաղաքը:
6. Նկարագրի՞ր մեծ քրմապետին:
7. Պատմի՞ր քո բնակվայրի մասին:



**S** դե՛ր, ի՞նչ տեղ ենք մենք, չգիտե՞ք, - հարցրեց Վաշագանը:

- Ես գիտեմ, որ մենք բակարդի մեջ ենք ընկել, ել այստեղ ազատվելու չենք, - ասաց մենք:

- Բայց չ՞ որ այս մարդը սուրբ մարդ է, մի՞քև այդպես բան կանի, - ասաց մի ուրիշը:

- Ինչո՞ւ չի անիլ երևի այս սուրբ մարդը գիտե, որ մենք մեղավոր ենք, սրա համար մեզ բերավ ձգեց իր քավարանը, որ մեղքներս ապաշխարենք:

- Տղե՛րք, կատակի ժամանակ չէ, - ասաց Վաշագանը: - Ես կարծում եմ, որ այդ դաժան ծերութին սուրբի անուն առած մի զարդութիւն է, և մենք կանգնած ենք այժմ նրա դժոխքի ճանապարհի

վրա: Տեսե՛ք ինչպե՞ս խավար է, ինչպե՞ս մուր, և դեռ ով գիտե՞ի՞նչ տանջանքներ կան մեզ համար պատրաստված: Բայց ինչո՞ւ ենք քարացել կանգնել այստեղ, ել հավիտյան բացվելու չ' այս դուռը. եկե՛ք առաջ գնանք, տեսնենք ո՞ւր է տանում մեզ այս անդառնախ ճանապարհը:

Այդ ճանապարհով բավականին առաջ գնացին և հանկարծ նրանց աշխին մի ճրագի աղոտ լոյս երևաց: Գնացին դեպի ճրագը և նրանց առջև բացվեց մի լայն քարահատակ, որի շրու կողմից լսվում էին խառնաշփոր աղաղակներ: Վեր նայեցին և տեսան, որ մի արհեստական քարայրի մեջ են գտնվում: Դա շինված էր ցորենի հորի պես. վերևից սկսել էին փորել ժայռը, և որքան ցած էին իջել, այնքան լայնացրել էին, և այս կերպով միապահաղ քարի մեջ շինել էին մի ստորերկրյա զմբերած ընդարձակ սրահ:

Սեր կալանավորները մի կողմից ապշած զմում էին անելանելի բանութ, մյուս կողմից խշած ականջ էին դնում, որ տեսնեն ո՞րտեղից էին գալիս խառնաշփոր ծայները: Հենց այս միջոցին նրանց դիմացը երևաց մի ստվեր, որ հետզինեւ մոտենալով ու քանձրանալով՝ մարդու նմանություն առավ: Վաշագանն առաջ գնաց դեպի այդ ստվերը և քարձրածայն կանչեց.

- Ո՞վ ես դու, սատանա՞ ես, թե մարդ մոտեցիր մեզ և ասա՞ ո՞րտեղ ենք գտնվում մենք:

Ուրգականը մոտեցավ և ողողողալով կանգնեց նորեկների առջև: Դա մի մարդ էր, մեռելի կերպարանքով, աշքեր խոր ընկած, այտերը ցցված, մազերը քափված, մի մերկ կմախը, որի բոլոր ուկորները համրվում էին: Այդ կենդանի մեռյալը՝ սրացած ծնոտիքը հազիկ շարժելով՝ հեկեկալով ու կակագելով՝ ասաց.

- Եկե՛ք իմ հետուիցս, ես ձեզ ցույց կտամ, թե ի՞նչ տեղ եք ընկել դուր:

Գնացին մի նեղ անցքով և մտան մի ուրիշ բույն. այնտեղ տեսան սառը գետնի վրա վայր քափված մերկ մարդիկ, որոնք աղեկտուր տնքոցով փշում էին իրանց վերջին շունչը: Այդուեղից անցան մի ուրիշ որջ, և այնտեղ տեսան կարգով շարված ահագին կարսաներ, որոնց մեջ կերակուր էին եփում մի քանի մեռեկագույն մարդիկ: Վաշագանը մոտեցավ այդ կարսաներին, որ տեսնեն ի՞նչ է նրանցում եփվածը, և երբ տեսավ, բատմներլով ետ քաշվեց և ընկերներին չասեց, թե ի՞նչ էր տեսածը: Այդուեղից մտան մի ավելի երկար սրահ, և այդուղ տեսան զանազան արհեստավորներ խառնիխտուցն աշ-

խատելիս. մի քանիսը մի-մի քան էին ասեղնագործում, մյուսները նրանց կողքին մի-մի քան էին հյուսում, մի քանիսը կար էին անուն, մյուսները՝ ուսկերչորյուն: Այսպես հարյուրաշափ մարդիկ այստեղ աշխատում էին աղոտ լուսի տակ, ամենքն էլ մեռելի գոյն առած:

Այս ամենը ցոյց տալուց հետո առաջնորդող մարդը կրկին տարավ նրանց առաջվա սրահը և այստեղ ասաց.

- Այն դիվական ծերութին, որ ձեզ խարել թերել է, մեզ ամենիս էլ նա է թերել այստեղ: Թե քանի ժամանակ է, որ ես այստեղ եմ, ինձ հյուտնի չէ, որովհետև այստեղ օր ու գիշեր չկա, այլ կա միայն մի անվերջ խավար: Այսքանը միայն գիտեմ, որ ինձանից առաջ և ինձ հետ եկող մարդիկը կոտորվել են ամենքն էլ: Այստեղ թերում են երկու տեսակ մարդիկ, արհեստավոր և անարհեստ: Արհեստավորներին աշխատեցնում են մինչև իրանց մահը, իսկ արհեստ չգիտցողներին տանում են սպանիանց, որ ես ձեզ ցոյց չտվի, և այստեղից թերում են այն խոհանոցը, որ դուք տեսաք: Ահա մի այսպիսի զարհուրելի տեղ է այս տեղը: Ծերունի դլը մենակ չէ, նա ունի հարյուրավոր գործակիցներ, որոնք ամենքն էլ բոլորն են: Այս դժոխի վրա է նրանց բնակարանը:

- Դու այս ասա, իիմա մեզ ի՞նչ են անելու, - հարցրեց Վաչագանը:

- Միևնույնը կանեն, ինչ որ մյուսներին: Ով որ ձեզանից արհեստ գիտե, կապրի մինչև մեռնիլը, իսկ ով որ չգիտե, նրան կտանեն սպանիանց: Ես իիմա մեռելատանն եմ, ըստ որում հյայտնեցի, որ է՛լ աշխատելու ուժ չունիմ: Բայց աստված հոգին չի առնում, երևի ուզում է ինձ լուս աշխարի արժանացնել. և գիտե՞ք, ես հավատում եմ, որովհետև երազում ինձ երևաց մի կինարմատ՝ զիսին քազած սաղավարտ, ծերին երկսարի սուր, մի հրեղեն ճիռ վրա նստած և ասաց ինձ. «Մի՛ հուսահատվիր, Վաղինակ, ես կզամ շուտով և ձեզ ամենիդ կազատեմ»: Ես վաղոյ մեռած կինեի, երե այդ հրաշագեղ քազուին ինձ հուս տփած չիներ. նրա տփած հույսը իմ հոգու սնունդ է տախս, և ինչքան բոլու են մարմնով, այնքան ուժեղ եմ հոգով: Այս, ի՞ն Վաչագան, ո՞րտեղ ես, ինչո՞ւ ես մոռացել քը Վաղինակին...

Վաչագանը, որ մինչև այս ժամանակ մի քնած վիճակի մեջ էր և պատմողի խոսքերը միայն դնդնգացնում էին նրա ականջի քմրուկը առանց տպավորվելու մտքի վրա, վերջին խոսքերից սրափվեց նա իրք մի խոր քնից, և սկսեց հիշել երազի նման «քազուի», «Վաղինակ», «Վաչագան» բառերը: «Ուրեմն սա մեր Վաղինակն

է», մտածեց նա: Այս մտածելով և ուշի զալով ուզում էր վրա ընկնիլ և զգվել, ուզում էր հյուտնել, թե ինքն է Վաչագանը, բայց մեկ էլ շիավատալով իր ականջին՝ կրկին հարցրեց, թե ո՞վ է նա և ի՞նչպես է ընկել այստեղ:

Վաղինակն իր պատմությունն սկսեց շատ հեռվից և Վաչագանին անձանոր առարկայից: Իսկ այդ միջոցին Վաչագանն սկսեց մտածել, որ լսվ չի լինիլ, եթե ինքը հանկարծ հյուտնն իր ով լինիլը, ըստ որում մի այդպիսի հյայտնություն՝ թե՝ ուրախություն և թե՝ կսկիծ լինելով՝ կարող էր սրի պես կտրել նրա կյանքի բարակացած թելը: Այս պատճառով ընդհատեց նրա պատմությունը, ասելով.

- Քո ամունդ, ինչպես լսեցի, Վաղինակ է:

- Վաղինակ է, այո՛, Վաղինակ... ես մի ժամանակ...

- Եղբայր Վաղինակ, շատ խոսիլը թեզ շատ վնաս է: Ապրի՛ր մինչև լո երազը կատարվի: Ես հավատում եմ քո երազին և շնորհակալ եմ, որ հյայտնեցիր մեզ: Այսուհետև մենք էլ կապրինք այդ հույսովը: Լավ կանես, որ քո մյուս արհեստակիցներին էլ հյայտնես քո երազը: Ես ինքս երազ մեկնող եմ, հավատացնում եմ թեզ, որ երազը պիտի կատարվի տեսածիդ պես: Բայց ահա ուրի ձայն է զալիս, դու զնաք ըստ տեղը:



Վաչագանի հետ եկածները քվով վեց հոգի էին: Հարցրեց նրանց, թե արդյոք մի որևէ արհեստ գիտե՞ն: Սինն ասաց, որ գիտե կտավ զործել, երկրորդը դերձակություն գիտեր, երրորդը մետաքսազորդ էր, մյուս երեքը ոչ մի արհեստ չգիտեին:

- Վնաս չունի, որ դուք արհեստ չգիտեք, - ասաց Վաչագանը, - ես կասեմ, որ դուք ամենք ինձ արհեստակից եք, իսկ ես շատ լսվ արհեստ գիտեմ:

Ունաձայնը, արձագանք տալով, հետզինետե մոտեցավ, և նրանց առջև կանգնեց մի դաժանատեսիլ քորմ՝ հետն առած մի խումբ զինված մարդիկը:

- Դո՞ւ եք նոր եկածները, - հարցրեց քորմը:

- Այո՛, ծառաներ ենք, - պատասխանեց Վաչագանը:

- Ձեզանից ո՞վ է արհեստ իմանում:

- Մենք ամենքն էլ գիտենք, - ասաց Վաչագանը, - գիտենք շատ բանկազին դիպակ զործել: Մեր գործվածքի մի կշիռ հարյուր կշիռ

ուկի կարծե: Մենք մեծ գործարան ունեինք, բայց պատահմամբ կրակ ընկավ այրվեց, և մենք ընկանք պարտի տակ և խեղճացանք: Եկանք քաղաք, որ մի գործ գտնենք մեզ համար, հանդիպեցանք մեծ քրմապետին, և նա մեզ թերավ այստեղ:

- Շատ լավ. բայց մի՞՞ն ճշմարիտ այդշափ քա՞նչ կարծե ձեր գործվածքը:

- Սեր ասածի մեջ սուս չկա, չէ՞ որ պիտի ստուգեք:

- Իհարկեն, ես շուտով կիմանամ, թե որքան ճշմարիտ է ձեր ասածը. իհմա ասացեք, ի՞նչ նյութեղեն և գործիքներ են հարկավոր, որ ես թերեմ:

Վաշագանք հայտնեց մի առ մի, թե ինչ ու ինչ է հարկավոր: Մի քանի ժամից հետո ամեն ինչ պատրաստ էր: Քորմը պատվիրեց, որ երբան արհեստատունը, այնտեղ աշխատեն և նրանց հետ կերպվին:

- Այնտեղ մեր գործը լավ չի հաջողի, - ասաց Վաշագանք: - Մեզ հարկավոր է ջոկ և ընդարձակ տեղ, և այս տեղը ամենից հարմար է: Սեր գործի նրբությունը պահանջում է առատ լոյս, աղոտ լոյսի տակ ոչինչ չենք կարող կատարել, իսկ ինչ վերաբերում է մեր կերակորին, պետք է գիտենաք, որ մենք մսակեր չենք, սովոր չենք այդ կերակորին. հենց որ միս տուենք, իսկույն կմնուինք, և դոր կզրկվիք այն մեծ օգուտից, որ մեզանից կարող եք ստանալ: ճշմարիտն եմ ասում, որ մեր գործի մի քաշը հարյուր քաշ ուկի կարծե...

- Շատ լավ, - ասաց քորմը, - ես մեզ համար կուղարկեմ հաց և բուսելեն կերակոր, դոր կունենաք և առատ լոյս, բայց եք ձեր գործը այնպես չիհնի, ինչպես խոստանում եք, ես մեզ ամենիդ սպանդանոց կողարկեմ և սպանելուց առաջ ենրարկել կտամ չարչաք տանջանեների:

- Սեր ասածի մեջ ոչինչ սուս չկա. եք ուզում եք մեր խոստացած շահն ստանալ, պետք է միայն կատարեք մեր ուզածը:

Քորմը կատարեց իր խոստումը: Նրանց համար ուղարկում էր սպիտակ հաց, կանաչեղեն, կաթ, մածուն, պանիր և զանազան չոր ու քար մրգեր: Վաղինակն էլ մասնակցեց այդ սնունդին, մյուսներին էլ նշխարի պես բաժանում էին ծածկաբար սպիտակ հացից, որ հալորդության տեղ էր քռում և կենաց հացի պես կենդանություն տալիս նրանց: Վաղինակը նոր սնունդի ազդեցությունով հետզհետև կազմություն և կենդանի մարդու կերպարան առավ: Վաշագանն սկսեց իր գործը և իր ընկերներին էլ իրան օգնական

շինեց: Կարճ միջոցում պատրաստեց մի կտոր շատ պատվական դիպակ այնպիսի նախշերով, որոնց երես ուշադրությամբ զննեին և իմանալին նրանց խորհուրդը, նույն դժոխքի պատմությունը պիտի կարդային նրանց մեջ:

Քորմը եկավ; տեսավ պատրաստված դիպակը և մնաց հիացած: Վաշագանը, ծակելով իր գործը ինչպես պետք էր և հանձնելով քորմին, ասաց.

- Ես առաջ ասացի, որ մեր գործվածքի մի կշիռը հարյուր կշիռ ուկի կարծե, բայց իհմա հարկավոր եմ համարում ասել, որ սա իմ ասածի կրկնապատիկը կարծե, ըստ որում սրա վրա կան այնպիսի բալիսմաններ, որ հագնողին միշտ զվարք և ուրախ կպահեն: Այս կա միայն, որ հասարակ մարդիկը սրա զինը չեն իմանալ: Սրա զինը կիմանա միայն Անահիտ քագուիին, և բացի նրանից ոչ ոք չի էլ համարձակի հագնի մի այսպիսի բանկազին գործվածք:

Արծարամոլ քորմը աշքերը չորս քաց արագ, երբ որ իմացավ դիպակի խկական արժեքը: Այս մասին նա խորամանկ քրմապետին ոչինչ չխայտնեց և մինչև անգամ ցոյց չտվավ նրան: Ուզեց, որ քագուի տեսությանը միայն ինքն արժանանա, և նրանից առած ավելի ոսկիիր ինքը վայելի...

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՊՐՄՆՁՆԵՐ

1. Կերնազրիք առանձնացված մասերը:
2. Նկարազրիք այն դժոխքը, որտեղ հայտնվեց Վաշագանը իր նման խարված ծշակների հետ:
3. Պատմիք դժոխքում փակված մարդկանց մասին:
4. Դուրս գրիք այն քառերը, որոնք բնուրագրում են քրմին եւ քրմավետին:
5. Կարդա Վաղինակին նկարազրող հատվածները:
6. Մանրամասն պատմիք, թե ինչպես է Վաշագանն իրեն ու իր եկածներին փորձում փրկել:

Մ եկ առավոտ է՝ սաստիկ սրտնեղած՝ Անահիտը ման էր զալիս պարտիզումը, իր ծառաներից մինը ներս եկավ և հայտնեց նրան, թե մի օտար վաճառական է եկել և ասում է, որ մի երեսի բան ունի վաճառելու քաղուհուն: Անահիտի սիրտն սկսեց մի անսովոր կերպով տրոփել: Հրամայեց, որ շուտով ներս թերեն այն մարդուն:

Ներս եկավ մի դաժան կերպարանով մարդ, խոր գլուխ տվակ քաղուհուն և արձարե սինու վրա դրած մի ոսկե դիպակ դրավ քաղուհու առջև: Անահիտը վեր առավ քննեց դիպակը և ոչ չդարձնելով նախշերի վրա, հարցրեց զինը:

